



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

964
965

- 1 Շերտունի
ինչպես կոչեք
թիֆին 1895
2. Դյումա Ա.
Հոգովածը ունի Պրեմիա
Սարդիւնին Կ. Պոլին 1880

82

C - 53

12 20 03

1257

2011


82-
53 47

թիմական հայոց Հրատարակչական Ընկերութիւն

№ 97

24

Շ է ք ս զ ի ր



ԻՆՉՊԵՍ ԿՈՒԶԵՔ

ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ ՀԻՆգ ԱՐԱՐՈՒԱԾՈՎ

առ աշխարհու 71 դպրությունը օպունու

թարգմանեց անգլիերէնից

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԽԱՆ ՄԱՍԻՆԵԱՆՑ

~~ ԳՐԱԴԱՐԱՆ ~~



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տիպոգր. Մ. Շարաձե և Կ°. || Տպարան Մ. Ջարաձեի և Ընկ.

1895

ວຽກຄົງສະຫະລັດ

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Մանուս են օրէսնդօ և պահ:

ORIUMBO

Որչափ լիշում եմ, Աղամ, նա այս ձեռվ թողեց ինձ
այդ ժառանգութիւնը. նա ինձ կտակեց հազար ոսկու մի
չնչին գումար և, ինչպէս ասացիր՝ եղբօրս վերայ անէծքով
պարտք դրաւ ինձ լաւ դաստիարակել. Ահա այդ տեղից
սկսան իմ ցաւերս: Իմ եղբօրս, Յակոբին, նա զանում է
ուսումնարանում, և համբաւը ոսկեղէն լեզուով է խօսում
նորա յառաջադիմութեան վերայ: Բայց ինձ նա գեղջուկի պէս
պահում է տանը, կամ ճիշդն ասած՝ ինձ թողնում է տանը
առանց պահելու. որովհետեւ, ինձ պէս տոհմիկ ազնուա-
կանի համար բնչպէս կարող ես այդ բանը պահել անուանել,
եթե սա չէ տարբերում մի եզ մսուրի մէջ կապելուց: Նո-
րա ձիանքն անգամ ինձնից լաւ են ինամուած. որովհետեւ
բացի նորանից, որ նորա առատ սնունդ ունին՝ նորանց
վարժեցնում են, և այդ բանի համար ձիավարժներ են վար-
ձում թանկ գնով. իսկ ես, նորա եղբայրը, ոչինչ չեմ շա-
հում նորա ձեռքի տակ՝ եթէ ոչ աճել, որի համար նորա
գոմի տաւարները նոյնչափ երախտապարտ պէտք է լինին
նորան՝ որչափ ես: Բացի այս ոչնչից, որ նա այնպէս առա-

տաբար տալիս է ինձ, նոյն իսկ այն ինչը, որ ընութիւնն
է ինձ տուել՝ նա իր վարմունքով այդ էլ է ուզում խլել
ինձնից: Նա ինձ ստիպում է ճաշել իր գեղջուկ ծառաների
հետ, փակում է իմ առաջ եղբօր վայել տեղը և, որչափ
որ ձեռքիցը գալիս է, ական է վիրում իմ ազնուականու-
թեան տակ այն դաստիարակութեամբ, որ նա ինձ տալիս
է: Այս է, Ադամ, որ ինձ ցաւ է գարձել. և իմ հօրս ոգին,
որից կարծեմ իմ մէջ կայ՝ սկսում է ապստամբել այս ստըր-
կութեան դէմ: Ես չեմ ուզում այլ Ամանդուրժել, թէ ե-
ալս վիճակից խոյս տալու համար դեռ ոչ մի խելացի ճար
չեմ տեսնում:

(Մանում է Օլիվիէ)

ԱԴԱՄ

Ահա գալիս է իմ տէրս, ձեր եղբայրը:

Համ քարի խոձ որն ուստի վայզը
ՕՐԼԱՆԴՈ առ նայի վայզը
Քաշուիր մէկ կողմ, Ադամ, և կը լսես թէ ինչպէս նա
ինձ կը ցնցէ:

ՕԼԻՎԻՀԻ

Ե՛հ, պարոն, ինչ ես անում այստեղ: Նույնացնեալ ու
ուր մի տոքը ու նոյն պատճենը մասն անդրադառնութեան ուրան
ՕՐԼԱՆԴՈ

Աչինչ, ինձ չեն սովորեցրել մի բան անել այս բնուու
պատճենը ու այս պատճենը ու այս պատճենը ու այս պատճենը
ՕԼԻՎԻՀԻ

Ուրեմն ինչ ես վշացնում, պարոն: Այս պատճենը ու այս պատճենը
նիշտն ասած՝ պարոն, ես իմ ծուլութեամբ քեզ օգ-
նում եմ վշացնելու այն՝ ինչ որ Աստուածական ստեղծել է,
այսինքն քո խեղճ անարժան եղբօրդ: Այս պատճենը ու այս պատճենը
առաջ ու այս պատճենը ու այս պատճենը ու այս պատճենը

(Վեցութիւն առաջ խորհու)

ՕԼԻՎԻՀԻ
ու սիրաւ, պարոն, ագնա աւելի լաւ զբաղմունք գտիր.
կորիր աչքիս առաջից:

ՕՐԼԱՆԴՈ

Միթէ ես քո խողերդ պէտք է պահեմ ու խող-կաղին
ուտեմ նրանց հետ: Ինչ անառակ որդու ժառանգութիւնն
եմ շռալել, որ այս չքաւորութեանն եմ հասել:

ՕԼԻՎԻՀԻ
Զամկանում ես որտեղ ես, ալ մարդ չէս աչս ուզմ դո
ունի քրիստոն իւրաքանչ ու այս զգմանի ու պալազը
պատճեն բժիշով բա զգման ու այս քարը զավի ուր մէ

ՕՇ, պարոն, շատ լաւ. այստեղ քո այգիում: զգմ ուր

ՕԼԻՎԻՀԻ

Գիտեմ ում առաջն ես, պարոն: որդին ունի
ունի բանահան զգին ուշաւ ունի անդաւի
ՕՐԼԱՆԴՈ

Աւելի լաւ քան նա որի առաջն եմ գիտէ թէ ես ով
եմ: Ես զիտեմ, որ դու իմ անդրանիկ եղբայր ես, և, ա-
րեան ազնիւ կապով, դու էլ նոյնպէս ինձ պէտք է ճանա-
չէիր: Ազգերի քաղաքավարութիւնը քեզ տալիս է նախա-
պատռութիւնը իմ վերալ, այն պատճառով, որ դու ինձնից
առաջ ես ծնուել. բայց միենոյն աւանդութիւնը ինձնից
չէ խրամ իմ արիւնը, թէ կուզ քսան եղբայր լինէին իմ եւ
քո մէջտեղ: Ես իմ մէջ նոյնչափ ունիմ իմ հօրիցս, որչափ
որ դու ունիս, թէ եւ խոստովանում եմ, գու ինձնից առաջ
աշխարհ եկած լինելով աւելի պարտական ես նորա պէտ
յարգելի մարդ լինելու:

ՕԼԻՎԻՀԻ
ինչ է, ալ տղայ:

ՕՐՎԱՆԴՅՈ (Բռնելով նորա կոկորդից)

Գնա՞ւ, գնա՞ւ, անդրանիկ Եղբայր. դու շատ գեռահաս ես
այս բանի մէջ:

ՕՂԻՎԻԵ

ՕՐԼԱՆԴՈ

Ես սրիկալ չեմ. Ես Ոոլանդ գը-հուալի կըտսեր որդին
եմ, նա իմ հայրս է. և եռապատիկ սրիկալ է՝ ով որ կասէ,
որ նորա պէս հայրը կարող է սրիկաներ ծնել. Եթէ դու
եղբայրս չը լինէիր՝ այս ձեռքս չէի քաշիլ կոկորդիցդ մին-
չե այս միւսը լեզուդ դուրս չը քաշէը այդ խօսքիդ համար.
դու ինքդ քեզ հայհոյեցիր:

սԴԱՄ

Աղնիւ տէրերս, համբերութիւն ունեցէք. և սէր ձեր հօր
լիշտատկին, հաշտ եղէք միմեանց հետ:

ՕՂԻՎԻԵ

Բաց թող, ասում եմ:
ՕՐԱՆԴՐՈ
Երբ որ սիրտս կուզէ՝ բաց կը թողնեմ։ Դու պէտք է
լինած ինձ հայրս կտակով քո վերայ պարտք է գրել լաւ
գաստիարակութիւն տալ ինձ։ Գու ինձ կրթել ես որպէս մի
գիւղացու, նսեմացնելով և խեղգելով իմ մէջ ամեն ազնուա-
տոհմիկ լատկութիւններս։ Հօրս ոգին ուժեղանում է իմ
մէջ, և սորանից աւելի ես չեմ կարող հանդուրժել, ուրեմն
թոյլ տուր ինձ պարապել այն բոլոր վարժութիւններով,
որոնք վայել են մի ազնուականի, կամ թէ տուր ինձ այն
չնչին գումարը, որ հայրս կտակով թողել է ինձ, և ես գո-
րանով կը գնամ բաղդս փորձելու։

ՕՀԿՎՀԵԼ

Եւ ի՞նչ ես ուզում անել. երբ որ այդ էլ ծախսես
վերջացնեմ՝ յետոյ մուրալու ես: Լաւ, պարսն, գնա տուն.
սորանից աւելի չեմ ուզում ինձ գլխացաւ տաս. դու կ'ստա-
նաս քո ցանկութեանդ մի մասը: Խնդրեմ, բաց թող ինձ:

:ՕՐՀԱՆԴԻՇ (Ձեռքը քաշելով)

Ես քեզ աւելի չեմ նեղացնիլ, քան որչափ հարկաւոր է իմ օգտիս համար:

Wand-Gitarre

የበረራ ክፍል ቁናሪ ስጋጌው ሽቦዎን, ደብዳቤ

U7.UU

ԾԵՐ շուն, ալս է իմ վարձս. և իսկապէս, ես ձեր
ծառալութեան մէջ եմ թափել ատամներս: —Աստուած լու-
սաւորէ իմ նախկին տիրոջ հոգին: Նա ինձ այսպիսի խօսք
չէր ասիլ:

(Մանուկ և Պենիսը)

ԴԵՐԱՎԱՐ

ԳԵՐԴ լարգութիւնը ինձ կանչում է:

OՂԻՎԻԼ 1
Դարձնաց այս պահին Տարլը, Պուքսի ըմբեցը չեկաւ ախտեղ ինձ հետ իս-
մելու։ 2

ԴԵՆԻՄ

ի՞նչպէս չէ, տէր իմ, նա դբան առաջսպասում է և
աղեղսում է, որ թոյլ տաք իրան ձեզ ներկայանալ:

OՂԻՎԻԼ

Նէրս կանչիր: (Դիմիս դուրս է գոտում) — Այդ լաւ միջոց կը
լինի. վաղաէլ ըմբշամարտի օրն է:

(Մտնում է Շարլ)

ՇԱՐԼ

Բարի լոլս Զերդ լարդութեան:

ՕՂԻՎԻԼ

Բարև, Մօսիէօ Շարլ, ի՞նչ նոր նորութիւն կալ նոր
արքունիքում:

ՇԱՐԼ

Արքունիքում լուր չը կալ, տէր, եթէ ոչ միայն հին
լուրերը, այսինքն նոր գուքսը աքսորել է հին գուքսին, իր
անդրանիկ եղբօրը, և երեք-չորս հաւատարիմ ազնուական-
ներ ինքնակամ աքսոր են գնացել նորա հետ, և նոցա կա-
լուածները և հասոլիթները հարստութեան աղբիւր են գառ-
նում նոր գուքսի համար. այս պատճառով գուքսը ուրա-
խութեամբ թոյլ է տալիս նորանց, որ երթան և ուր որ
ուզում են թափառեն:

ՕՂԻՎԻԼ

Կարող ես ասել, թէ արդեօք Ռոզալինդն էլ, գուքսի
աղջիկը, իր հօր հետ աքսորուած է թէ ոչ:

ՇԱՐԼ

Ո, ոչ. որովհետեւ նոր գուքսի աղջիկը, նորա հօրեղբօր
գուստը, այնպէս սիրում է նորան (օրօրոցից նորա հետ
մէծացած լինելով), որ կամ նա էլ աքսորակից կը
լինէր նորան, կամ եթէ մենակ մնար՝ ցաւից կը մեռ-

նէր: Նա պալատումն է, և նորա հօրեղբայրը նորան իր
հարազատ աղջկայ չափ սիրում է, և երբէք երկու տիկին-
ներ այնպէս չեն սիրած միմեանց՝ ինչպէս նոքա միմեանց
սիրում են:

ՕՂԻՎԻԼ

Որտեղ պէտք է ապրի ծերունի դուքսը:

ՇԱՐԼ

Ասում են՝ նա արդէն Առգենի անտառումն է և մի
խումբ ուրախ մարդիկ էլ հետը. և այնտեղ նոքա ապրում
են որպէս Անգլիոյ ծերունի Ռոբերն-Հուդը: Ասում են՝ շատ
երիտասարդ ազնուականներ խումբ դիմում են ամեն
օր նորա մօտ և անհոգ անց են կացնում իրանց ժամանա-
կը, ինչպէս անում էին սոկեղէն աշխարհի մէջ*):

ՕՂԻՎԻԼ

Հիմա ի՞նչպէս. վաղը ըմբշամարտելու ես նոր դուքսի
առաջ թէ ոչ:

ՇԱՐԼ

Այո, տէր իմ. և ես հիմա եկել եմ ձեզ մի բան ասե-
լու: Ինձ գաղտնի կերպով հասկացրել են, որ ձեր պէտիկ
եղբայրը, Օրլանդօն, մտադիր է ծպտեալ գուրս գալ ինձ
հետ ըմբշամարտելու: Վաղը, տէր իմ, ես պէտք է իմ համ-
բաւիս համար ըմբշամարտեմ, և ով որ առանց մի անդամը
փշրուելու ձեռքիցս ազատուի՝ լաւ է պըծել: Զեր եղբայրը
շատ երիտասարդ է և շատ փափկասուն, և ձեր սիրոյ հա-
մար՝ ինձ շատ տհաճելի կը լինէր նորան լաղթել. բայց իմ
պատուիս համար՝ ես պարտաւոր եմ այդպէս անել, եթէ
գուրս գայ իմ դէմ: Ուրեմն, այն սիրոյ համար, որ ես տա-
ծում եմ դէսլի ձեզ՝ ես եկալ ձեզ իմաց տալու, որ կամ

*) Անկերթ Շարլ ուզում է ասել՝ սոկեղարում:

նորան իր դիտաւորութիւնից յետ կանգնեցնէք, և կամ եթէ որելիցէ մի ձախորդութիւն պատահի՝ իմանաք որ ես մեղք չունէի. որովհետեւ այդ նորա մեղքը կը լինէր և իմ կամքիս բոլորովին հակառակ:

ՕՂԻՎԻՀԵ

Նորհակալեմ քեզնից քո դէպի ինձ ցոյց տուած սիրոյդ համար, և կը տեսնես ինչպիսի առատաձեռնութեամբ ես քեզ կը վարձատրեմ: Ես ինքս տեղեկութիւն ունէի եղբօրս այդ դիտաւորութեան մասին և անուղղակի միջոցներով աշխատեցի նորան համոզել, որ յետ կենալ այդ մտքից, բայց նա յամառ մարդ է: Ասեմ քեզ, Շարլ, նա ամբողջ ֆրանսիակի մէջ ամենայամառ երիտասարդն է որ կամ, լի փառասիրութեամբ, մի նախանձոտ մրցակից ամեն մարդու, գաղտնի և նուաստաբարու գաւադիր իմ դէմ, որ նորա հարազատ եղբայրն եմ. ուրեմն, ինչպէս կուզես՝ այնպէս արա: Ես աւելի ուրախ կը լինիմ՝ որ նորա վիզը կոտրես, քան թէ մատը: Եւ լաւ է որ դու նորանից զգուշանաս. որովհետեւ եթէ նորան մի թեթև պարտութիւն կրել տաս, կամ եթէ նա շատ մի փառաւոր յաղթութիւն չը շահի քո վերայ՝ նա քո դէմ դաւ կը դնէ թոլնով, և կամ թէ որեւէ դաւաճանական հնարքով քեզ թակարդի մէջ կը ձգէ և քեզ բաց չի թողնիլ՝ մինչեւ որ մէկ կամ միւս անուղղակի միջոցով կետնքի չը խաւարեցնէ. որովհետեւ, հաւատացնում եմ քեզ և համարեա արտասուելով ասում եմ այս, որ այսօքեզ կայ ամբողջ աշխարհում նորանից աւելի երուան օրս չը կայ ամբողջ աշխարհում նորանից աւելի երիտասարդ և աւելի անզգամ մի տղալ: Այս բոլորը դեռ եղբարաբար եմ խօսում նորա մասին. բայց եթէ նորան վերը լուծեմ քո առաջ այնպէս ինչպէս որ է՝ ես պէտք է կարմրեմ և լաց լինիմ, և դու գունաթափուիս և ապշիս:

ԾԱՐԼ

Ես շատ ուրախ եմ, որ եկալ այսաեղ ձեր մօտ: Եթէ նա վաղը գալ այսաեղ՝ ես նորա վարձը կը դնեմ ձեռքը.

Եթէ այսուհետեւ մէկ էլ նա իր ոտքով կարողանալ քայլել՝ ես քանի կեանք ունիմ՝ էլ մրցանակի համար չեմ ըմբշամարտիլ: Դէհ, Աստուած պահէ Ձերդ յարգութիւնը:

ՕՂԻՎԻՀԵ

Գնաս բարով, բարի Շարլ:— Հիմա պէտք է մի լաւ գրգռեմ մենամարտողին: Յոյս ունիմ, որ վերջապէս կազատուիմ մի անգամ ընդ միշտ այդ մարդու ձեռքից: Զը գիտեմ ինչո՞ւ իմ հոգիս նորան աւելի սաստիկ է ատում քան որելիցէ բան ալս աշխարհում: Եւ սակայն նա ազնիւ է. դպրոցի երես չէ տեսել, այնու ամենալին ուսեալ է. լի է ազնիւ դաղափարներով, ամեն դասակարգերից կարծես հմայքով սիրուած է. և իսկապէս նա այնքան, այնքան խոր է մտել ամբոխի սրտում և մանաւանդ իմ մարդկանց սրտում, որոնք նորան աւելի լաւ են ճանաչում՝ որ ես բոլորովին արհամարհանքի առարկայ եմ դարձել: Բայց երկար այսպէս չի մնալ: Այս ըմբիշը ամեն բան կարգի կը դնէ: Հիմա միայն մնացել է, որ այս տղային մի լաւ բորբոքեմ, և ահա գնում եմ այդ բանին: (Պուրս է գնում):

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Մի մարգագետին դուքսի պալատի առաջ:

Մտնում են Ռոջալինդ և Սելին:

— ՍԵԼԻՆ
Խնդրում եմ, Ռոջալինդ, անուշիկս, ուրախ եղիր:
ՌՈՋԱԼԻՆԴ:

Սիրելի Սելիա, ես ցոյց եմ տալիս շատ աւելի ուրախութիւն՝ քան թէ իսկապէս զգում եմ, և դու դեռ ուզում ես, որ էլ աւելի ուրախ լինիմ: Եթէ չես կարող ինձ սովո-

ըեցնել մոռանալ մի վտարանդի հօր՝ ապա չը պէտքէ
սովորեցնես ինձ զգալ մի արտաքոյ կարգի հաճուք:

Դորանով ես տեսնում եմ, որ դու ինձ չես սիրում այն
կատարեալ չափով, ինչ չափով որ ես եմ քեզ սիրում։ Եթէ
իմ հօրեղբարս, քո աքսորուած հայրդ, աքսորած լինէր քո
հօրեղբօրդ, իմ հայր դուքսին, և դու տակաւին մնացած
լինէիր ինձ մօտ՝ ես կարող էի սովորեցնել իմ սիրոյս,
որ ընդունէր քո հօրդ իմ հօրս տեղ. դու էլ նոյնպէս կա-
նէիր՝ եթէ դէպի ինձ ունեցած քո սիրոյդ ճշմարտութիւ-
նը նոյնչափ կատարեալ լինէր, որչափ իմս դէպի քեզ։

ԹՐԱՋԱԼԻՒՄ

Լաւ, ես կը մոռանամ իմ վիճակս, քո վիճակով ու բախսանալու համար:

UVLhu

Դու զիտես, իմ հայրս բացի ինձանից ուրիշ զաւակ չունի, և հաւանական էլ չէ, որ այսուհետև ունենալ, և իրաւ, երբ որ մեռնի՝ դու կը լինիս նորա ժառանգը. ինչ որ նա ուժով խլել է քո հօրեց՝ ես քեզ յետ կը դարձնեմ սիրով. պատուվի երդում եմ, ես յետ կը դարձնեմ. և եթէ այս երդումս կոտրեմ՝ թող հրէշ դպոնամ: Ուրեմն, իմ անոյշ Ոօզս, իմ սիրելի Ոօզս, ուրախ եղիր:

ԵՐԵՎԱՆԻ ԴՐԱ

Այսուհետեւ ուրախ կը լինիմ, սիրելիս, և զուարձութիւններ կը խորհիմ։ Թող տեսնեմ.—ի՞նչ կասես, մի սիրահարութիւն սարքենք։

Whipple

Այ, լաւ ասացիր. խնդրեմ եկ մի սիրահարութիւն սարքենք և մի քիչ զուարճանանք. բայց մի գուցէ ելնես իրաւերաւ մէկին սիրես, կամ թէ զուարճանալու համար աւելի

Հեռու գնաս, քան թէ կարող ես պատուաւոր կերպով լետ
նահանջել մի ամբիծ շիկնանքով միայն:
Ուրեմն ինչ կը լիսի մեր դուարձութիւնը:

Ugly

Եկանստենք և ծաղրելով բարի պահնտիկին Բախտին՝
Հալածենք իր անութից, որ այսուհետև նորա պարզեները
աւելի արդարացի կերպով բախչուին: Իս և ամենաջայի զմաք
զարս սյա բժանուած աշխարհու այսու մշտիարակար
ՌՈԶԱԼԻՆԴ:

Երանի թէ կազողանալինք, որովհետեւ նորա պարգևները սարսափելի կերպով անտեղի են բաժանուած, և առատաձեռն Կոյը Կինը սխալում է՝ իր պարգևները մանաւանդ կանանց բաշխելու ժամանակ:

Gelehrte, der auf dem Lande geboren

Այդ ճշմարիտ է, որովհետև նորանց, որոնց նա գեղեցիկ է ստեղծում՝ հազիւթեա առաքինի է ստեղծում, և նորանց, որոնց առաքինի է ստեղծում՝ ստեղծում է շատ անճոռնի:

ԹՐԱՎՈՒԹՅՈՒՆ և ԱԽՏԱԿԱՐԱ

Ոչ. դու հիմա անցնում ես բախտի պաշտօնից դէպի
ընութեան պաշտօնը: Բախտը իշխում է աշխարհի պարգև-
ների վերայ, ոչ թէ ընութեան դիմագծերի վերայ:
(Մտնում է Փորձաքարր)

Vigilus

Ո՞չ երբ բնութիւնը ստեղծել է մի ոքանչելի արարած,
միթէ կարելի չէ, որ բախտը նորան ձգէ կրակի մէջ: Թէև
բնութիւնը մեղ ուշք ու միտք է տուել բախտը ծաղրելու
համար, միթէ բախտը չէ, որ ներս է ուզարկել այս խեն-
թին, մեր վիճաբանութիւնը կարճ կտրելու համար:

ՈՌԶԱԼԻՆԴ. Այ մաս ուսմք տառ

Իրաւ, բախտը շատ դժման է վարւում բնութեան հետ,
երբ նա գործ է դնում բնութեան Յիմարութիւնը՝ բնու-
թեան Իմաստութիւնը կրծատելու համար:

ՍԵԼԻԱ

Կարելի է որ այդ էլ բախտի գործը չէ, այլ բնութեանը,
որ տեսնելով, թէ մեր բնական իմաստութիւնը չափա-
զանց կարճամիտ է այնպիսի աստուածութիւնների վերայ
դատողութիւն տալու համար՝ ուղարկել է այստեղ այս պար-
զամիտ մարդուն, որ մեզ ծառայէ որպէս յեսան. որովհետեւ
միշտ յիմարի բժամտութիւնը իմաստութեան յեսանն է
(Փորձաքարին): — Ի՞նչպէս ես, խելք, ո՞րտեղ ես թափառում:
ՓՈՐՉԱՔԱՐ

Տիրուհի, գուք պէտք է գաք ձեր հօր մօտ:

ՍԵԼԻԱ

Քեզ են սկատգամաւոր կարգել:
ՓՈՐՉԱՔԱՐ

Ոչ, պատուվս երդում եմ. այլ ինձ հրամայել են դալ
ձեզ տանել:

ՈՌԶԱԼԻՆԴ.

Ո՞րտեղ ես սովորել այդ երդումը, խենթուկ:

ՓՈՐՉԱՔԱՐ

Մի ասպետից, որ իր պատուվ երդում էր՝ որ կար-
կանդակները լսու էին շինուած, և իր պատուվ երդում
էր՝ որ մանանեխը շատ անպիտան էր. իսկ ես ասում եմ,
որ կարկանդակներն էին անպիտան և մանանեխը շատ լսու
էր. բայց գարձեալ՝ ասպետը սուտ չէր երդում:

Կո վե քոյցի արև սե ՍԵԼԻԱ յա ովհանք քայամ զանա:

Ի՞նչպէս կարող ես ապացուցանել այդ, քո իմաստու-
թեան այդ ահազին դէզովը:

ՈՌԶԱԼԻՆԴ.

Ա՛յ, շատ լաւ. հիմա բաց արա քո իմաստութեանդ
ցոկակապը:

ՓՈՐՉԱՔԱՐ

Հիմա երկուսդ էլ առաջ եկեք. շոյեցէք ձեր կզակները,
և երդուեցէք ձեր մօրուքներով, որ ես մի սրիկայ եմ:

ՍԵԼԻԱ

Մեր մօրուքներով երդում, եթէ ունենալինք, որ դու
մի սրիկայ ես:

ՓՈՐՉԱՔԱՐ

Իմ սրիկայութեամբս երդում եմ, եթէ ունենալի, որ
ես սրիկայ կը լինէի. բայց երբ որ գուք երդում էք մի
բանով, որ տեղումը չը կայ՝ գուք սուտ չէք երդում. ինչ-
պէս այն ասպետը, որ երդում էր իր պատուի վերայ,
որ նա ամենեին չունէր. կամ եթէ ունեցած էլ լինէր՝ գեռ
բանը կարկանդակներին և մանանեխին չը հասած՝ երդուե-
լով երդուելով վերջացրած կը լինէր:

ՍԵԼԻԱ

Խնդրեմ, ովք է այդ քո ասածք: ՓՈՐՉԱՔԱՐ

Մի մարդ, որին ծերուկ Ֆըրեգերիկը, քո հալրդ շատ
սիրում է:

ՍԵԼԻԱ

Իմ հօրս սէրը բաւական է նորան լարգելի դարձնելու
6624-57

Համար: Ձախնդ կտրիր, ել չը խօսիս նորա վերալ. մի օք
գու ծեծ ես ուտելու այդ չար լեզուիդ համար:
ՓՈՐՉԱՔԱՐ

Ափսոս, որ խենթերը չեն կարող խելացի կերպով ա-
սել այն բոլորը, ինչ որ խելացիները խենթ կերպով անում են:

Ես իմ հոգիս, ճշմարիտ ես խօսում. որովհետեւ այն օ-
րից, որ խենթերի ունեցած քիչ խելքը լռութեան է դա-
տապարտուած՝ խելօքների ունեցած քիչ խենթութիւնը մեծ
ցոյց է անում: Ահա գալիս է Մօսկէօ Լը Բօն:
(Մտնում է Լը Բօն):

ԱՐԴՅՈՒՆ

ԲԵՐԱՆԸ ՄԵՐՈՎ ԼԳՐԱԾ : Նորով խղճակացն զմ՛ն
ՍԵԼԻԱ : առ լավեցն ի՞ւ

Որ նա կը դնէ մեր բերանը՝ ինչպէս աղաւնիները կե-
րտկում են իրանց ձագերին:

020-93776773

Ուրեմն կոկորդներս խճողուելով են լրերով:
ՍԵԼԻԱ
Յաելի լաւ. աւելի գնող կը գտնենք շուկայում: — Բարի
լոյս, Մօսիէօ Լը Բօ. Բնէ լուր կալ:

1060

Գեղեցիկ իշխանուհի, Ենչամբի լաւ զուարժութիւնից
զըկուել էք դուք:

Ug]hu

Զուարճութիւն. ի՞նչ պոլիս:

10 60

Բ՞նչ գոյնի, օրիորդ. Ենչպէս պատասխանեմ ձեզ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ

Ինչպես խելքն ու բախտը կամենան։ Ու ո՞ւ սկսի՞

Աամինչպէս ճակատագիրը նախասահմանէ:

Կեցցես, լաւ ծեփեցիր։ ՓՈՐՁԱՔԱՐ փոքրացու առ զմէն ա

Հապալ. Եթէ զիրքս չը պահեմ...

Այս ժամանակ լաւ հոտք կը կորչի:

Lc 180

Դուք ինձ շփոթեցնում էք, օրիորդներ. ես ուզում էի ձեզ պատմել մի լաւ ըմբշամարտութեան մասին, որի տեսարանից դուք գրկուեցաք:

ԹՌԶԱԼԻՆԴ Գոնէ պատմիր մեզ ալգ ըմբշամարտութեան պատմութիւնը:

LC BO

Ես ձեզ կը պատմեմ սկիզբը, և եթէ հաճելի լինի Զերդ
համեստափայլութեանց՝ վերջը ինքներդ կարող էք տեսնել,
որովհետեւ ամենալաւ մասը դեռ ևս մնացել է, և հէնց
ալստեղ, ուր որ դուք կանգնած էք՝ նոքա գալիս են վեր-
ջին մասը լլացնելու:

Whist

Լաւ, պատմիր մեզ այդ առաջին մասը, որ արդէն մեռել և թաղուել է:

ԱՀ ԲՕ

Գալիս է մի ծերունի իւր երեք որդիների հետ...

ՍԵԼԻԱՆ

Շատ լաւ է սկսում. կարծես մի հին հեքիաթի լինի:

ԱՀ ԲՕ

Երեք կտրիճ երիտասարդներ, սքանչելի կազմուածքով
և շնչք ու շնորհքով:

ՈՂՈՉԱԼԻՒԴԻ

Վ.զերից տախտակներ կախած, որոնց վերայ գլուած է.
— «Թող ալս թղթով յայտնի լինի ամենին, որ....»

ԱՀ ԲՕ

Երեքից անդրանիկը ըմբշամարտեց Շարլի հետ, որ
դուքսի ըմբիշն է: Շարլը նրան մի վայրկեանի մէջ գետին
տապալեց և նորա կողքի ոսկրերից երեքը ջարդեց, այնպէս
որ քիչ լուս կայ, որ նա ապրի: Միևնոյն ձեռվ նա երկրո-
դին ծառայեց, միևնոյն ձեռվ երրորդին: Հիմա նոքա այն-
տեղ տարածուած են. խեղճ ծեր մարդը, նոցա հայրը, այն-
պիսի սրտաշարժ կերպով ողբ ու կոծ է անում՝ որ բոլոր
հանդիսականները կարեկցում են նորան և լաց են լինում:

ՈՂՈՉԱԼԻՒԴԻ

ԽԵՂՃԻԿ:

ՓՈՐՉԱՔԱՐ

Բայց, պարոն, ո՞ն է եղել այն զուարձութիւնը, որից,
ասում ես, տիկինները զրկուել են:

ԱՀ ԲՕ

Վա՛, այս որ ասում եմ:

ՓՈՐՉԱՔԱՐ

Ցնչյես որ ասում եմ, մարդիկ ամեն ոօր աւելի խելօքանում
են՝ դուք չեք հաւատում: Այս առաջին անգամն եմ լսում,
որ կողքերի ջարդութիւնը տիկինների համար մի զուարձու-
թիւն է:

ՍԵԼԻԱՆ սամ ցացանուցներ քառական

Ես էլ նոյնպէս, ես իմ հոգիս:

ՈՂՈՉԱԼԻՒԴԻ

Բայց կայ դարձեալ մի մարդ, որ փափաքի լսել այս
կոտրատողական երաժշտութիւնը իր կողքերի մէջ. կայ դեռ
մէկը, որ կողքերի ջարդելուն սիրահար լինի: — Ուզում ես
տեսնենք այս ըմբշամարտը, Սելիա:

ԱՀ ԲՕ

Եթէ ալստեղ մնաք՝ ուզէք չուզէք կը տեսնէք. որով-
հետեւ ըմբշամարտի համար որոշուած տեղը հենց այս տեղն
է, և արդէն պատրաստ են սկսելու:

ՍԵԼԻԱՆ

Ա.Հա գտլիս են. սպասենք և տեսնենք:

(Փողեր, մանում են դուքս Ֆրեներիկ, ազնուականներ, Օրլանդո,
Շարլ եւ սպասաւորներ):

ԴՈՒՆՔԱ ՓՐԵԴԵՐԻԿ

ԳԷՀ, սկսեցէք. քանի որ ալս պատանին չէ զիջանում
գլուխը քարը. թող իր յանդգնութիւնը ինքը քաւէ:

ՈՂՈՉԱԼԻՒԴԻ

Ա.Աս է այն մարդը:

ԱՀ ԲՕ

Այս, սա է տիկին:

ՍԵԼԻԱ

Ափսոս, շատ երիտասարդէ, բայց ինչ յաղթական դէմք
ունի:

Այդ դու ես, աղջիկս, և դու, սիրելի. դուք մտել էք
այստեղ ըմբշամարտը տեսնելու:

ԴՐՈԶԱԼԻՆԴ

Այս, տէր իմ, եթէ կը բարեհաճիք թոյլ տալ:

ԴՐՈՒՅԾ

Գեղ շատ քիչ դիւրեկան կը լինի, ասեմ ձեզ, որովհետ-
և մեծ անհաւասարութիւն կայ երկու կողմերի մէջ. ախոյ-
եանի երիտասարդութեան վերայ խղճալով ես շատ կը ցան-
կանալի նորան համոզել, որ իր մտքեց յետ կանգնէր, բայց
նա չէ լսում: Խօսեցէք նորա հետ, տիկիններ, կարելի է
դուք կարողանաք նորա սիրտը շարժել:

ՍԵԼԻԱ

Կանչեցէք նորան այստեղ, սիրելի Մօսիէօ Լը Բօ:

ԴՐՈՒՅԾ ՓՐԵԴԵՐԻԿ

Կանչեցէք նորան, ես կը հեռանամ:

(Դուքսը հեռանում է):

ՀՀ ԲՕ

Պարոն ախոյեան, իշխանուհիները ձեզ կանչում են:

ՕՐԼԱՆԴ

Ես պատրաստ եմ նոցա հրամանին, ամենայն յարդան-
քով և ակնածութեամբ:

ԴՐՈԶԱԼԻՆԴ

Երիտասարդ, դուք էք ասպարէդ կանչել ըմբիշ Շարլին:

ՕՐԼԱՆԴ

Ոչ, գեղեցիկ իշխանուհի. նա ինքն է ընդհանուր ա-
խոյեանը. ես միայն գալիս եմ այստեղ՝ միւսների նման պա-
տանութեանս ուժը նորա հետ չափելու:

ՍԵԼԻԱ

Երիտասարդ պարոն, ձեր ոգին խիստ խելացի է ձեր
տարիքին նայելով: Դուք ինքներդ ականատես էիք այս մար-
դու ոյժի անողորմ փորձին: Եթէ գուք ձեր սեպհական աչ-
քերով կարող էք ձեզ տեսնել, և ձեր սեպհական դատողու-
թեամբ ձեզ դատել՝ ապա պէտք է մի այսպիսի վտանգի եր-
կիւղը ձեզ խօրհուրդ տար մի աւելի հաւասարակշիռ ձեռ-
նարկի մէջ խիզախել: Աղաջում ենք ձեզ, ձեր սեպհական
օգտի համար, որ ձեր սեպհական ապահովութիւնը աչքի ա-
ռաջ ունենաք, և յետ կենաք այս փորձից:

ԴՐՈԶԱԼԻՆԴ

Յետ կացէք, երիտասարդ պարոն. ձեր համբաւը այս
պատճառով չի նսեմանալ. մենք ինքներս գուքսից կը խըն-
դրենք, որ նա թոյլ չը տալ որ ըմբշամարտը շարունակուի:

ՕՐԼԱՆԴ

Խնդրում եմ, մի պատժէք ինձ ձեր աննպաստ մտածու-
թիւններով, թէւ ես ինձ շատ յանցաւոր եմ գտնում՝ ձեզ
պէս շնորհալի և չքնաղ տիկիններին որեւէ մի բան զլանա-
լով: Բայց թոյլ ձեր գեղանի աչքերը և աղնիւ բարեմազ-
թութիւնները ընկերանան ինձ հետ իմ այս փորձի մէջ: Ե-
թէ յաղթուիմ ամաչողը այնպիսի մէկը կը լինի, որ երբէք
բատիսաւոր չէ եղած: Եթէ սպանուիմ՝ մեռնողը այնպիսի
մէկը կը լինի, որ փափագում է մեռնել: Ես իմ բարեկամնե-
րիս ոչ մի վնաս չեմ հասցնիլ, որովհետեւ ոչ մէկ հատ չու-
նիմ, որ իմ վերայ ողբայ, ոչ էլ աշխարհին մի զրկանք, ո-
րովհետեւ ոչինչ չունիմ նորա մէջ. միայն աշխարհի մէջ

ԴՐԱՀԱՆ ՓՐԵՇԻԵՐԻԿ

Երանէ լինէիր մի ալ հօր որդի. կայութեամբ
Ամբողջ աշխարհը յարգում էր հօրը,
Բայց նորան ես գտալ միշտ ինձ թշնամի:
Բո այս կատարած քաջագործութեամբ
Դու ինձ շատ աւելի հաճոյ կը լինէիր.
Թէ մի այլ տընից սերած լինէիր.
Բայց մընաս բարով, դու ազնիւ տղայ ես:
Երանէ մի ալ հօր անունը տալիք:
(Դուքսը, հետեւորդները եւ Լը Ռո դուքս են զնում):

ՍԵԼԻԱ

Եթէ ես լինէի իմ հօրըս տեղը,
Կարծում ես, քոլրիկ, ալովէս կ'անէի:

ՕՐՀԱՆԴՈ

Ինձ փառք է լինել Սըր Ռոլանդի որդին,
Նորա կրտսեր որդին: Ա՛հ, ալդ անունը
Ես չէի փոխիլ, լինելու համար
Ֆրեղերիկոսի գահաժառանդը:
ՈՌՀԱՆԴՈ

Հայրըս Սըր Ռոլանդին այնքան սիրում էր,
Որքան իւր հոգին. և բոլոր աշխարհը
Նորան դատում էր իմ հօրըս աչքով:
Եթէ գիտենալի նորա որդին էր՝
Արտասուքներով ես կաղերսէի,
Եւ չէի թողնիլ, որ իրան ենթարկէ
Ալովիսի վտանգի:

ՍԵԼԻԱ

Իմ ազնիւ քոլրիկ,
Եկ, գնանք նորանից շնորհակալ լինինք,
Խրախուսենք նորան: Հօրըս նախանձը
Եւ բիրտ վարմունքը սիրտըս խոցեցին:

(ՕՐԱՆԴՈՒՄ)

—Պարոն, դուք ցոյց տուիք ձեր արժանիքը:
Թէ սիրոյ մէջ էլ ձեր խօսքը պահէք
Ճիշտ, ինչպէս այստեղ գերազանցեցիք
Ձեր տուած խօսքը՝ ապա ձեր սիրուհին
Երջանիկ կը լինի:

ՈՌՀԱՆԴՈՒՄ (Տարով նորան իւր վկի շղթան)

Պարոն, կը եցէք ալս
Դմ խաթեր համար, այնպիսի մէկի,
Որ բախտից լքուած է, այնպիսի մէկի,
Որ աւելի կը տար՝ թէ նորա ձեռքը
Միջոց ունենար: —Պալիս ես, սիրելիս:
ՍԵԼԻԱ

Վլու: —Մընաք բարով, սիրելի պարոն:

ՕՐՀԱՆԴՈ
Զեմ կարող ասել «շնորհակալ եմ».
Բոլոր ձիրքերըս ցած են տապալուած,
Եւ այն որ դեռ ես այստեղ կանգունէ
Մի խրտուիլակ է, անկենդան մի կոյտ:

ՈՌՀԱՆԴՈՒՄ

Նա մեզ կանչում է. իմ խրտստութիւնը
Խոնարհուել է այժմ՝ ինչպէս իմ բախտը:
Հարցնեմ ինչ է ուզում: —Դուք կանեցիք, պարոն:
Պարոն, լու կոռւեցիք. և դուք յաղթեցիք
Սեկի քան թէ ձեր թշնամիներին:
ՍԵԼԻԱ

Պալիս ես, քոլրիկ:

ՈՌՀԱՆԴՈՒՄ
Ահա գալիս եմ:
—Մընաք բարև, պարոն:
(Որովալնոց եւ Սեղմա դուքս են զնում):

ՕՐԼԱՆԴՈ

Կախում է լեզուիս վրայ այս ծանրութիւնը.
Չեմ կարողանում խօսել նորա հետ
Թէպէտե նա ինքը խօսք էր բաց անում:
(Մտնում է լը Բօ)

Ան քեզ, խեղճ Օրլանդօ, դու յաղթըւած ես
Եթէ ոչ Շարլը՝ նորանից թուլը
Քեզ նուաճել է:

ՀՀ ԲՕ

Սիրելի պարոն, բարեկամաբար
Խորհուրդ եմ տալիս ձեզ գնալ այստեղից:
Թէև արժանանաք բարձրը գովեստի,
Անկեղծ ներբողի և համակրութեան՝
Սակայն այնպէս է դուքսի բնութիւնը,
Որ թիւր է մեկնում ձեր բոլոր արածը:
Նա մաղձոտ մարդ է. թէ նա ինչ է, իրաւ
Լաւ է որ դուք խորհիք, քան թէ ես ասեմ:

ՕՐԼԱՆԴՈ

Ենորհակալ եմ, պարոն. բայց ինքը ասէք:
Դուքսի աղջիկը ո՞րն է այն երկուսից,
Որոնք ներկայ էին այս ըմբշամարտին:

ՀՀ ԲՕ

Եթէ բարքերից դատենք՝ ոչ մէկը:
Բայց դարձեալ նրա դուստրը կարճահասակն էր:
Միւսը աքսորուած դուքսի աղջիկն է,
Որին յափշշտակիչ իր հօրեղբալը
Պահած է ալտեղ իր աղջրկալ մօտ
Իբր ընկերուհի: Նոցա մէջ սէրը
Աւելի սերտ է՝ քան երկու քոյրերի
Բընական կապը: Բայց պէտք է ասեմ,

Որ դուքսը վերջերս սկսել է ատել
Իր եղբօր աղջրկան, առանց ալլ հիման
Թէ ոչ այն՝ որ մարդիկ նորան գովում են
Նորա առաքինի յատկութեանց համար,
Եւ նորան խղճում են ի սէր իր հօրը.
Եւ, երդուում եմ ես, դուքսի այդ քէնը
Օրիսրդի դէմ՝ յանկարծ է պալթելու:
—Պարոն, մընաք բարով, և այսուհետեւ
Սորանից լաւագոյն մի աշխարհի մէջ
Աը ցանկանալի ձեզ հետ ունենալ
Աւելի շատ սէր և ծանօթութիւն:

ՕՐԼԱՆԴՈ

Երախտագէտ եմ ձեզ, և Տէրը ձեզ հետ:
(Դուրս է գնում լը Բօ)
Այսպէս պէտք է անցնիմ ծըխից հեղձանոց:
Բոնակալ մի գքսից՝ դէպ բռնակալ եղբայր:
Բայց, ախ, երկնային իմ Ռոզալինդը:
(Դուրս է գնում),

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Մի սենեակ պալատում
Մտնում են ՌՈԶԱԼԻՆԴԻ և ՍԵԼԻԱ.

— զայր խոյրան

ՍԵԼԻԱ

Վահ, անուշիկս, վահ, Ռոզալինդս: —Կուսլիտն, ողոր-
միր: —Ոչ մի բառ:

ՌՈԶԱԼԻՆԴ

Ոչ մէկը շան առաջ ձգելու:

ՍԵԼԻԱ

Ո՞չ. քո բառերը չափազանց թանկագին են շների առաջ ձգուելու համար. ձգիր նորանցից մի քանիսը իմ վերայեկ. ոտքս կոտրիր քո պատճառաբանութիւններով։

ՈՂՋԱԼԻՆԴ

Այն ժամանակ երկու հօրեղբօրաղջիկներ կը լինէին հիւանդ պառկած. մէկը կաղ կը լինէր պատճառներով, միւսը խելագար՝ առանց պատճառի։

ՍԵԼԻԱ

Բայց ասա. հօրդ պատճառով է ալս բոլորը։

ՈՂՋԱԼԻՆԴ

Ոչ. մէկ մասն էլ իմ հօրս երեխալի պատճառով է։ Ե՛նչպէս փշերով լի է ալս լի օրերի աշխարհը։

ՍԵԼԻԱ

Դոքա միայն փշիշուկներ են, սիրելիս, որ ձգուած են քո վերայ մի տօն օրուայ խենթութեան ժամանակ։ Եթէ մենք կսխոտուած շաւիդներով չը գնանք՝ նոքա մեր եռապկաներին կը կպչին։

ՈՂՋԱԼԻՆԴ

Ես կարող էի այդ փշիշուկները թափ տալ իմ զգեստից. բայց նոքա սրտիս մէջ են խրուած։

ՍԵԼԻԱ

Հազարով դուրս բեր։

ՈՂՋԱԼԻՆԴ

Ես կը փորձէի, եթէ կարող լինէի դուրս բերել նրանց, և ներս բերել նորան։

ՍԵԼԻԱ

Լաւ, լաւ, մարտնչիր զգացումներիդ դէմ։

ՈՂՋԱԼԻՆԴ

Օ՛չ, նոքա կուսակից են դարձել ինձնից լաւ մի ըմբաւի։
ՍԵԼԻԱ

Օ՛, բարի յաջողութիւն քեզ։ Կը գայ ժամանակ, երբ դու այդ բանը կը փորձես, և ընկնելուց էլ չես վախենայ։ Բայց թողնենք այս կատակները և լրջութեամբ խօսինք. միթէ կարելի բան է, որ այսպէս լանկարծ ծերուկ Սըր Ռուլանդի կրտսեր որդին քո խելքդ գլխիցդ թոցրած լինի։

ՈՂՋԱԼԻՆԴ

Դուքսը, իմ հայրս, սաստիկ սիրում էր նորա հօրը։

ՍԵԼԻԱ

Միթէ դորանից հետեւում է, որ դու էլ պէտք է սաստիկ սիրես նորա որդուն։ Այս տրամաբանութեամբ՝ ես էլ պէտք է սաստիկ ատեմ նորան, որովհետեւ հայրս սաստիկ ատում էր նորա հօրը, բայց Օրլանդովին ես չեմ ատում։

ՈՂՋԱԼԻՆԴ

Ոչ, սիրեկանս, մի ատեր նորան. գոնէ իմ խաթեր համար։

ՍԵԼԻԱ

Ինչու չատեմ. միթէ տեղը չէ։

ՈՂՋԱԼԻՆԴ

Թող ես նրան սիրեմ հէնց այդ պատճառով. դու էլ սիրիր նորան՝ որովհետեւ ես եմ սիրում։ Նայիր, ահա դուքսը գալիս է։

ՍԵԼԻԱ

Աչքերը բարկութեամբ լեցուած։

(Մտնում է դուքս Ֆրեդերիկ, ազնուականների հետ)։

ԴՈՒԻՔՍ ՓՐԵԴԵՐԻԿ

Աղջիկ, պատրաստուիրքո բոլոր փոյթով
Եւ շուտով հեռացիր մեր արքունիքից:

ՈՌՉԱԼԻՆԴՐ

Ես, իմ հօրեղբար:

ԴՈՒԻՔՍ ՓՐԵԴԵՐԻԿ

Դու, իմ ազգական:

Եթէ մինչև տասն օր քեզ տեսնող լինի

Ոչ աւելի հեռու մեր արքունիքից,

Քան քըսան մղոն՝ վճիռդ մահ է:

ՈՌՉԱԼԻՆԴՐ

Ես պաղատում եմ ԶԵՐԾ բարձրութեան՝

Թոյլ տաք ինձ մեղիս գիտակից լինել:

Թէ ինքս ինձանից տեղեկութիւն ունիմ,

Կամ ծանօթութիւն փափաքներիս հետ,

Կամ թէ չեմ երազում, և ոչ էլ խենթ եմ,

(Որպէս վատահ եմ) ուրեմն, հօրեղբար,

Ոչ երբէք, և ոչ իսկ անձին խորհրդով

Մեղանչած եմ ես Զեր բարձրութեան դէմ:

ԴՈՒԻՔՍ ՓՐԵԴԵՐԻԿ

Դաւաճանները բոլորն այդպէս են:

Եւ եթէ նոցա արդարացումը

Լոկ բառերի մէջ կալացած լինէր՝

Նոքա կը լինէին անբիծ և անմեղ՝

Որպէս երկնալին սրբութիւնն ինքը:

Այսքան քեզ բաւ լինի, որ ես քո մասին

Կասկածանք ունիմ:

ՈՌՉԱԼԻՆԴՐ

Եւ սակայն չէ կարող

Զեր կասկածանքը ինձ մատնիչ շինել:

Սապցէք ինդըեմ, ինչ ապացուցներսակ:

Ունիք դուք իմ դէմ: Խօման գնացիք:

ԴՈՒԻՔՍ ՓՐԵԴԵՐԻԿ անց քաջանակ:

Դու քո հօր աղջիկն ես.

Այս բաւական է:

Դաշտեանու բայ մուտ ուժանութիւնի աղամ:

ՈՌՉԱԼԻՆԴՐ

Այս նոյնըն էի՞րով զի

Երբ Զեր բարձրութիւնը խլեց նորանից:

Նորա դքսութիւնը. Ես նոյնըն էի՞րով:

Երբ Զեր բարձրութիւնը աքսորեց նորան:

Դաւաճանութիւնը ժառանգական չէ.

Եւ նոյն իսկ թէ լինէր, տէր իմ, այդ ինձ:

Հայրըս գաւաճան չէր, ուրեմն, ազնիւ տէր,

Մի գատէք դուք ինձ այդշափ թիւր կերպով,

Որ ազքատութիւնըս գաւադիր կարծէք:

ՍԵԼԻԱ

Սիրելի վեհապետ, ականջ գըրէք ինձ:

ԴՈՒԻՔՍ ՓՐԵԴԵՐԻԿ

Ոչ, Սելիա. քեզ համար պահեցինք նորան,

Թէ ոչ իր հօր հետ այժմ կը թափառէր:

ՍԵԼԻԱ

Ոչ. այն ժամանակ ես չաղաչեցինք:

Նորան պահել այստեղ. այդ ձեր կամքըն էր,

Զեր խղճի խայթը: Եւ այն ժամանակ

Այնքան մանուկ էի, որ չէի կարող

Գնահատել նըրան. բայց այժմ ճանաչում եմ:

Եթէ նա մատնիչ է՝ ես էլ նոյնպէս եմ.

Մենք միասին ենք քընել և զարթել,

Միասին դաս առել, միասին խաղացել,
Միասին ենք ճաշել. և ուրգնում էինք.
Դիցուհի Յունոյի կարապների պէս
Զոյտ էինք գնում, և միշտ անբաժան:

ԴՈՒՐԱ ՓՐԵԴԵՐԻԿ

Ոչ, նա քեզ համար խիստ նըբամիտ է:
Նորա փափկութիւնը, նոյն իսկ լուութիւնը
Եւ համբերութիւնը խօսում են ամբոխին,
Որ խղճում է նորան: Դու խենթ ես, աղջիկ.
Նա քեզնից խլում է նոյն իսկ անունըդ.
Եւ դու կ'երեսս աւելի պայծառ աղու
Եւ առաքինի՝ երբ նա քո մօտ չէ:
Մի բանար ուրեմըն քո շրթունքները.
Վճիռս հաստատ է և անդառնալի.
Նա աքսորուած է:

ՍԵԼԻԱ

Ուրեմըն, հայր իմ,
Միւնոյն վճիռը տուր և իմ մասին,
Ես ապրել չեմ կարող նորանից անջատ:

ԴՈՒՐԱ ՓՐԵԴԵՐԻԿ

Դու խելագար ես. իսկ դու, այ աղջիկ,
Պատրաստութիւն տես, լսիր, ասում եմ քեզ,
թէ մի օր ուշանաս որոշուած օրից՝
Երդուում եմ պատուովս և խօսքիս վեհութեամբ,
Վճիռդ մահ է:

(Դուրսը եւ աղնուականները դուրս են գնում):

ՍԵԼԻԱ

Ո՞չ, իմ խեղճ Ռոզալինդ,
Ուր սկզբ է գնաս: Եկ, փոխենք հայրերս:
Ես իմըս քեզ կը տամ: Պաղատում եմ քեզ,
Մի լինիր ինձնից աւելի տիսուր:

Ես ունիմ պատճառ քեզնից աւելի:
ՍԵԼԻԱ

Զունիս, սիրելիս: Խնդրեմ, ուրախ եղիր:
Զը գիտես, դուքսը ինձ աքսորել է,
ինձ, իր աղջկան:

ԴՈՒՐԱ Դայ այս մայու
Ո՞չ, այդ ոչ.

ՍԵԼԻԱ

Ո՞չ, ինչպէս ոչ.
Ուրեմըն Ռոզալինդ չունի այն սէրը,
Որ քեզ ասում է՝ թէ դու և ես մէկ ենք:
Կարող ենք մենք զատուիլ, կարող ենք բաժանուիլ,
Սիրելի աղջիկ. ո՞չ: Թող հայրս իր համար
Սը ժառանգ գլտնէ. դէհ, եկ, մտածենք,
Թէ ինչ ձեռվ փախչինք, դէպի ուր գնանք,
Եւ ինչ տանենք մեզ հետ. և մի աշխատիր
Քեզ սեպհականել բախտիդ շըջումը,
Միայնակ կըրել սրտիդ ցաւերը,
Եւ ինձ դուրս թողնել: Վըկայ այս երկինքը,
Որ արդէն դունատ է մեր թախծութիւնից՝
Ինչ կ'ուգես ասա՝ կը գամ ես քո հետ:

ԴՈՒՐԱ Դայ

Լաւ, սըտեղ գնանք:

ՍԵԼԻԱ

Իմ հօրեղբօր մօտ:
ԴՈՒՐԱ Դայ
Վայ ինձ, մեզ համար ի՞նչ մեծ վտանգ է,

Երկու աղջլկաց, գնալ այսչափ հեռու:
Գեղեցկութիւնը քարշում է գողերին
Աւելի քան ոսկին:

Ublahu

Լաւ, ես կը հազնիմ
Աղքատիկ զգեստներ, չքաւոր ձեռվ.
Երեսս կ'աղտոտեմ մի տեսալ կաւով.
Նոյնն արա և դու, այսպէս մենք կ'անցնինք
Առանց զարթնացնեյու աւազակներին:

ԵՐԱԳԱԼԻՒԴ

Սըդեօք լաւ չի լինի, որ ես, որ ունիմ
Քիչ բարձր հասակ սովորականից՝
Հագնուիմ ճիշդ և ճիշդ տղամարդու պէս:
Գեղեցիկ մի թուր կողքից քաշ արած,
Վարագի նիզակ*) ձեռքումս բռնած,
Եւ—իմ սրտի մէջ որչափ էլ թաքչի
Կանացի երկիւղը—գոնէ արտաքուստ
Կունենամ ռազմասէր և վէս կերպարանք,
Ինչպէս շատ առնադէմ երկչուներ ունին,
Որոնք խրոխտում են իրանգ երկութուն:

ԱՅԼԻՆ

Ի՞նչ անուն տամ քեզ, երբ որ այս լինիս:

ԹՈՂԱԼԻՒԴ

Ես պէտք է ունենամ նոյնչափ լաւ անուն՝
Որչափ Արամազդի մանկաւիկինը.
Ապա պէտք է ինձ «Գանիմեդ» կանչես:
Իսկ դու ի՞նչ անուն ուզում ես կրրել:

^{*)} Վարագ սպանելու նիզակ:

ՄԵՂԱԿԱՆ

Այնպիսի մի անուն, որ յարմար լինի
իմ վիճակիս հետ. ոչ այլ ևս Սելիս,
Այլ Սլիքնա*):

ԸՆԴՀԱՆՈՒՐ

Բայց քուրիկ, լսիր.
Փորձենք գողանալ և տանել մեզ հետ
Քո հօր պալատից այն խեղկատակին:
Զես կարծում, որ նա ճամբորդութեան մէջ
Մեզ համար կը լինի մի մխիթարիկ:

UbaLhu

Ս.շխարհի միւս ծալըը նա կը գայ ինձ հետ։
Ինքըս կը փորձեմ նըլան համոզել։
Ե՞կ, գնանք հաւաքենք մեր գոհարները
Եւ հարստութիւնը, և յետոյ ընտրենք
Ապահով ճանապարհ և յարմար առիթ՝
Որ ազատ մընանք հետապնդումից,
Որ կը կատարեն մեր փախչելուց յետ։
Դէհ, գնանք գոհ սըտով դէպ ազատութիւն,
Ոչ դէպի տքսոր։

(Պուլս են դնում):

^{*)} Այի էնա նշանակում է օտարուհի:

200 J. M. V.

ქადა კასტრო გა დაინა მს ფიჭვის ა

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՇ

ամէ ըստ պետք և բարորդ գնձնութ
ամենասույն պահ սպառաւութ ոչ ոք

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Մանում են ԱՆԳԻԱՆԻԿ ԴՐԽԵՍԸ, ԱՄԻԼԵՆՍ և այլ աղնուականներ, անտառաբնակների ձեռով հագնուած:

ԱՆԴՐԱՄԱԿԻ ԴՐԱԽՈՒ

Ալժմ, իմ ընկերներ, աքսորակիցներ,
Ասացէք խնդրեմ, սովորովթը չէ
Դարձրել այս կեանքը աւելի անոլշ,
Քան պալատների սնգուրած շուքը:
Զե՞ն այս անտառները աւելի աղատ
Ամեն վտանգներից, քան նախանձայուղ
Արքունիքները: Մենք այստեղ զգում ենք
Նախահայր Ագամի պատիմի միայն—
Եղանակների տարբերութիւնը,
Ինչպէս ձմեռնալին խստաշունչ հողմի
Սառցալին ճիրանը և բիրտ տրտունջը:
Բայց երբ նա կծում է, փչում է մարմնիս վրայ,
Մինչև իսկ երբ ցրտից ես սարսրում եմ՝
Ժպտում եմ և ասում. «Փաղաքշանք չէ այս,
Սոքա են այնպիսի խորհրդականներ,

Որոնք գգալապէս ինձ համոզում են
Թէ ես ինչ բան եմ։ Քաղցը են ձախորդութեան
Արգասիքները, որ, ինչպէս գորտը,
Տգեղ և ժահըլից՝ ունի սակալն գլխին
Թանկագին մի գոհար։ Եւ այս մեր կեանքը,
Ազատ խուժանի ամբոխումներից՝
Գանում է լեզուներ խիտ ծառերի մէջ,
Գրքեր՝ սըրընթաց առօտակների մէջ,
Քարոզ՝ բարերի մէջ, բարիք՝ ամեն բանում։

ԱՄԻԼՅՈՒ

Ես չեկ կամենայ փոխել այս կեանքը:
Բայց երանի՞ է Ձերըդ բարձրութեան,
Որ կարող է բախտի դաժանութիւնը
Թարգմանել այս խաղաղ և անուշ ոճով:

ԱՆԴՐԱՆԻԿ ԴՈՒՔԸ

Եկէք, կուզէք գնանք երէ ըսպանենք.
Եւ սակալն այդ բանը ներհակ է խղճիս.
Խեղճ խայտաբղջէտ այդ անմիտները,
— Լինելով ըընիկներ ալս անմարդ շէնի, —
Իրանց սեպհական սահմանների մէջ՝
Երկնղի նետերով վէրք են ստանում
Իրանց կոյսուակ, գիրուկ գիստերում:

Առաջին Հոսք

Իրաւ է, տէր իմ. մելամազձիկ Փաքը
Սաստիկ ցաւում է այդ բանի վերալի.
Եւ նա երդուում է, որ Ձեր այդ գործով
Ինքներդ առաւել յափշտակիչ էք,
Քան ձեր եղբայրը, որ ձեզ աքսորեց:
Լորդ Ամիէնսն ու ես այսօր թագ կացանք
Նորա յետեր, մինչ նա պառկած էր
Մի կադնու ներքեւ, որի հին արմատը

Դուրս է բերել գլուխը այն առուի ափին,
Որ խոխում է անտառի միջով:
Այսեղ մոլորուած մի խեղճ եղերու,
Որսորդի աղեղից մի վէրք ըստացած՝
Եկած էր նուաղել. և, իրաւ, տէր իմ;
Հէք անասունը դուրս էր արձակում
Այսպիսի հեծեծանք, որ ամեն անգամ
Նորա ասրեղէն հագուստն ուռչում էր
Պալթելու աստիճան: Մեծ կոլոր արցունքներ
Նարում, իջնում էին անմեղ քթեցը ցած
Սրտառուչ հոսանքով: Եւ ահա այսպէս
Այն բրդոտ կենդանին, որին նալում էր
Մելամազիկ ֆաքը գորովուած սրտով՝
Կանգնած էր սրբնթաց առուակի ափին,
Յորդացնելով այն իր արցունքներով:

ԱՆԴՐԱՆԻԿ ԴՈՒՔԾ

Բայց պատմիր, ժաքը ինչեր էր ասում.
Զէր բանախօսում այն տեսարանի վրայ:

ԱՌԱՋԻՆ ՀՈՐԴ

Ի՞նչպէս չէ. հազար կերպ նմանութիւններով.
Նախ նորա լալու վրայ այն առուակի մէջ,
Որ նորա արցունքին կարօտ չէր բընաւ.
Հուշեղ եղնիկ, ասում էր, դու կտակ ես անում
Աշխարհի մարդկանց պէս՝ տալով գումարը
Այսպիսի մէկին, որ արդէն շատ ունի»:
Յետոյ նկատելով, որ նա մենակ է,
Լքուած իր թաւշամորթ բարեկամներից՝
«Այսպէս է, ասում էր. թշուառութիւնը
Այսպէս ցըւում է ընկներների լսումը»:
Յանկարծ երևաց անհոգ և ուրախ
Եղերուների մի ամբողջ նախիր.
Նոքա կուշտ կերած և ոստոստելով՝

Անցան վիրաւոր Եղջերուի մօտից,
Եւ չը կանգնեցին նոյն իսկ մի ըոպէ՝
Նըրան ողջունել: «Այ, ասաց ժաքը,
«Փախէք, մարպալից, գէր քաղաքացիք,
«Այսպէս է կարգը. ինչո՞ւ պէտք է նայենք
«Այն խեղծ եւ ջարդուած սընանկացածին»:
Այսպէս դառնագին իր սըլաքները
Սրձակում էր երկը, քաղաքի, պալատի,
Այն, և նոյն իսկ մեր այս կեանքի դէմ,
Երդուելով, որ մենք բռնակալներ ենք
Եւ յափշտակող, և դեռ աւելի վատ,
Որ սարսափեցնում ենք անասուններին,
Եւ նոցա սեպհական բնակավարի մէջ՝
Նըրանց հալածում և ըսպանում ենք:

ԱՆԴՐԱՆԻԿ ԴՈՒՔԾ

Եւ նրան թողեցիք դիտողութեան մէջ:

Այս, տէր արքայ. նա դեռ լալիս էր
Եւ խորհրդածում խեղճ եղնիկի վրայ:

ԱՆԴՐԱՆԻԿ ԴՈՒՔԾ

Յոյց տուէք ինձ տեղը. ես շատ սիրում եմ
Վիճել նորա հետ ալդ թղպած ժամերին,
Քանզի ալդ ժամանակ նա լի է նիւթով:

ԵՐԿՐՈՐԴ ՀՈՐԴ

Ես ձեզ կը տանիմ ուղղակի այնտեղ:
(Դուրս են գնում):

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Մի սենեակ պլալատի առաջ:

Մտնում են ԴՈՒՔՍ ՖՐԵԴԵՐԻԿ, աղնուականներ և սպասաւորներ:

ԴՈՒՔՍ ՓՐԵԴԵՐԻԿ
Կարելի է միթէ, որ ոչ ոք նըրանց
Տեսած չը լինի. անկարելի է:
Մի քանի սրիկաններ իմ արքունիքից
Նըրանց հետ համախոհ և գործակից են:

ԱԹԱՋԻՆ ՀՈՐԴԻ աղու
Չեմ կարողացել գտնել զեռ մի ոք,
Որ ձեր աղջրկան նըկատած լինի.
Բայց նաժիշտները նըրա սենեակի
Նըրան տեսել են իր անկողնի մէջ,
Եւ, վաղ առաւօտեան, գտել են մահիճը
Իր գտնձից թափուր:

Տէր, այն խենթուկը,
Որ այնքան յաճախ ջեր բարձրութեանը
Ծիծաղեցնում էր՝ նա էլ չէ երևում:
Եւ լշտանուհու նաժիշտ Հեսոլերիան,
Խոստովանում է, որ ինքը թաքուն
Ականջ է դըրել, երբ որ ձեր դուստրը
Եւ իր ազգականը գովում են եղած
Այն ըմբշի կազմուածքը և վայելչութիւնը,
Որ այս վերջերըս այնպէս տապալեց
Այն ջղոտ Շարլին. և նա կարծում է,
Որ ուր և իցէ գընացած լինին
Այն պատանին էլ անշուշտ այնտեղ է:

ԴՈՒՔՍ ՓՐԵԴԵՐԻԿ

Մարդ ուղարկեցէք նըրա եղբօր մօտ,
Եւ այստեղ բերէք ազնիւ պարոնին.
Եթէ նա չը կայ՝ եղբօրը բերէք:
Ես կը հարկադրեմ որ նըրան գտնէ.
Դէհ, ըշտապեցէք. թող ոչ մի խուզարկում,
Ոչ մի քննութիւն գործադուլ չանեն
Մինչև որ այդ խենթ փախստականները
Յետ բերուին կըկին:

(Դուրս են գնում):

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

ՕԼԻՎԻԼԻ տան առաջ:

Մտնում են ՕՐԼԱՆԴՈ և ԱԴԱՄ, միմեանց հանդիպելով:

Ո՞վ է:
Վահ, դուք էք, երիտասարդ տէրը.
— Ո՞վ իմ ազնիւ տէր, ով իմ անոյշ տէր,
Ո՞վ գուք, Սըր Ռոլանդի բարի լիշտակը,
Ի՞նչ էք անում ալստեղ. ի՞նչու ազնիւ էք գուք.
Ինչու պէտք է մարդիկ ձեզ այսքան սիրեն.
Ինչու վեհանձն էք դուք, ուժեղ, քաջասիրտ.
Ինչու յանդգնեցիք գետին տապալել
Նախանձու դուքսի ոսկըուտ ըմբիշին.
Զեր համբաւն եկաւ ձեզնից շատ առաջ:
Զը զիտէք, տէր իմ, շատ մարդկանց համար

Իրանց ձեռքերը թշնամիներ են.

Նոյնպէս են և ձերոնք. ձեր յատկութիւններն
են ձեր սուրբ և անմեղ դաւաճանները:
Օ՛չ, այս ի՞նչ աշխարհ է, ուր ամեն մի բան
Որ շնորհալի է՝ թունաւորում է
Իր ունեցողին:

ՕՐԼԱՆԴՈ

Վահ, ի՞նչ է եղել:

ԱԴԱՄ

Օ՛չ, գժբախտ պատանի.

Մի մտնէք այս դռնից, այս լարկի ներքեւ
Ապրում է ոսոխը ձեր բոլոր ձիրքերի,
Ձեր եղբայրը. — բայց ոչ, ոչ թէ եղբայրը...
Եւ սակայն որդին... ոչ, ոչ էլ որդին...
Ես նրան չեմ կարող անուանել որդի
Այն անձին, որին կամենում էի
Կոչել նորա հայրը. — նա արդէն լսել է
Ձեր յաղթանակը, և այս իսկ գիշեր
Միտք ունի ալրել այն բնակարանը՝
Ուր դուք ապրում էք, ձեզ էլ նորա մէջ:
Եւ եթէ այս բանում անլաջող մնայ՝
Ունի այլ միջոցներ ձեզ ըսպանելու —
Ես ծածուկ լսեցի նորա դաւերը.
Այս տունը տուն չէ, այլ ըսպանդանոց.
Սոսկացէք, վախեցէք, մի մանէք ալստեղ:

ՕՐԼԱՆԴՈ

Վահ, Ադամ, ի՞նչ անեմ. ուրեմն ուր գընամ:

ԱԴԱՄ

Ուր կուզէք գընացէք, միայն ոչ ալստեղ:

ՕՐԼԱՆԴՈ

Ուրեմն ուզում ես գընամ հաց մուրամ,
Կամ թէ մի խառնակիչ և ըստոր սըրով
Ճանապարհ կտրելով գողի կեանք շահեմ.
Այդ է մնում միայն, ուրիշ բան չը գիտեմ:
Բայց ինչ էլ անեմ՝ արդ ես չեմ անիլ.
Աւելի կը սիրեմ ենթարկել անձը
Փշացած մի արեան, արիւնխում մի եղօր
Նիւթած դաւերին՝ բան թէ այդ անել:

ԱԴԱՄ

Ոչ, լսիր. ես ունիմ հինգ հարիւր ոսկի,
Որ ես խնայել եմ ձեր հօր ժամանակ.
Ես այդ պահել եմ սև օրուայ համար,
Երբ որ զառամած իմ անդամներըս
Անկարող դառնան ծառալել այլ ես,
Կամ երբ ծերութիւնս, անտէր, անպաշտապան,
Անխընամ լքանուի անկիւնների մէջ:
Վեր առ այդ. և նա, որ ագռաւներին
Մնունդ է տալիս, և նախախնամաբար
Ճընճընուկներին կուտ է հայթալիթում՝
Նա ինքը թող լինի մխիթարիչը
Իմ ծեր հասակի: Ահա ձեզ ոսկին.
Ես այդ բոլորը տալիս եմ ձեզի.
Ինձ էլ թոյլ տուէք լինել ձեր ծառան:
Թէև ծեր եմ թւում՝ բայց ուժեղ եմ ես
Եւ առողջակազմ. քանզի չեմ խառնած
Տաք և թունդ խմիչքներ իմ արեանըս մէջ՝
Երբ պատանի էի. ոչ էլ որոնել եմ,
Անշինած ճակատով, անկարողութեան
Եւ տըկարութեան բուն պատճառները:
Այսպէս, իմ տարիքըս մի զօրեղ ձմեռ է,
Սառըն, բայց գորովի: Թողէք գամ ձեզ հետ,

Ես կը կատարեմ նոյն ծառակութիւնը՝

Ինչ կանէք ինձանից երիտասարդը,

ԳԵՐ ԲՈՂՈՐ ԱԼԵՄՔԵՐԻ և գործերի մէջ:

ՕՐԼԱՆԴՈ

ՕՇ, բարի ծերուկ. ի՞նչ լաւ երևում է
Քո մէջ այն տոկուն ծառայութիւնը
Նախկին աշխարհի, երբ մարդ տքնում էր
Ոչ թէ վարձի համար, այլ պարտականութեան։
Դու չես այս դարու մարդ, երբ ոչ ոք չէ տքնում
Եթէ ոչ միայն բարձրանալու համար,

Եւ երբ ձեռք են բերում իրանց փափաքը՝
Նոյն իսկ ըոսէին նոքա վերջ են տալիս
Իրանց ծառայութեան. իսկ դու չես այդպէս,
Ալ, խեղճ ծերունի, խնամք ես զըռալում
Մի փըտած ծառի, որ անկարող է
Տալ մի կոկոն անգամ փոխարէն քո խնամքի
Եւ մշակութեան: Բայց եկ, այդ հոգ չէ:
Մենք կերթանք միասին, և նախ քան վատնե
Քո պատանութեան օրերիդ վարձը՝
Կր ճարենք մի լարմար և համեստ վիճակ:

۲۷۸

Տէր իմ, առաջ անցեք. մինչև վերջին զունչս
Ես ձեզ կը հետեւիմ հաւատարմութեամբ
Եւ ճշմարտութեամբ։ Տասնեօթնից մինչ այժմ
Մինչ ութսուն տարիս, ալստեղ եմ անցրել,
Բայց եւ տարի հետո մէջ մէջ

Տակ ու այսուհետ չեմ ուզում կեսալ:
Տասնեօթը տարում շատեր բախտ են խնդրում,
Իսկ ուժունի մէջ ալդ արգէն ուշ է:
Եւ սակայն բախտը չէր կարող ինձ տալ
Աւելի մեծ տրիտուր՝ քան թէ լաւ մեռնել,
Ոչ թէ պարտական դէպի իմ տէրրաս: (Դուքս են գնամ)

ՏԵՍԱՐԱՆ ՀԱՐԻՇՈՒԴԻ

Արենի անտառ:

Մտնում են ՌՈԶԱԼԻՆԴ, պատաճու հագուստներով, ՍԵԼԻԱ, հագ-
նուած որպէս մի հովլուհի, և ՓՈՐՁԱՔԱՐ:

00261147

Ո՞յ Արամազդ, ի՞նչպէս յոդնած է ոգիս:

ФОРУМ

Ոգիս հոգըս չէ, եթէ ոտքերս ալսքան լոգնած չը լինէին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ

Սիրտս ինձ ասում է. շնորհազուրկ արա ալդ ալրական զգեստները, և նստիր մի կնոջ պէս լաց եղիր: Բայց ես պէտք է պահպանեմ աւելի դիւրաբեկ անօթը, քանի որ բաճկոնը և անդրավարտիքը պէտք է քաջասրտութեան օրինակ լինին եռավկաներին. ուրեմն, սիրտ առ, Ալիէնտ:

Ubuntu

Խնդրում եմ, նեցուկ Եղիս իմ լժուլութեանս. ես Ել
չեմ կարող գալ:

ΦΩΡΩΑΛΩΣ

Իսձ որ ասէք՝ ես աւելի կը սիրէի նեցուկ լինել ձեր
թուլութեան, քան թէ նեցուկ լինել ձեզ. բայց մինչեւ ան-
գամ եթէ ձեզ ուսերիս վրայ տանիմ՝ խոչ տարած չեմ լինի.
որովհետեւ, կարծեմ, մէկ սև փող չունիք ձեր քսակի մէջ:

ԹՈԳԱԼԻՒԴ

Վերջապէս հասանք Արդենի անտառը

ՓՈՐՁԱՔԱՐԱՎԱՐ

Լաւ, հիմա ես Արդենումն եմ, աւելի խենթ քան առաջ: Երբ ես տանն էի՝ աւելի լաւ տեղ էի, բայց ճանապարհորդ մարդը ամեն բանով պէտք է գոհ լինի:

ՄԵԼԱՄ Գողմանառ ՌՈՂԱԼԻՆԴՐԻ մ ՆԱԽԱՐԱՐ

Այն, այդպէս լաւ է, բարի Փորձաքար: Բայց նաևիր, այդ ով է գալիս. մի երիտասարդ և մի ծեր մարդ, տաք տաք խօսակցութեան բռնուած:

(Մտնում են Քորին և Սիլվիո)

ՔՈՐԻՆ

Այդ մի միջոց է, որով ևս աւելի
Արհամարհելի կը դարձնես դու քեզ:

ՍԻԼՎԻՈ

Աշխ, Քորին, երանի մի հասկանալիր
Որքան եմ սիրում նըրան:

ՔՈՐԻՆ

Մասամբ հասկանում եմ.
Իմ ժամանակին ես էլ եմ սիրել:

ՍԻԼՎԻՈ

Ոչ, Քորին, դու այժմ ծերացած լինելով
Չես կարող այդ բանը երևակալի,
Թէև եղած լինիս պատանութեան մէջ
Ամենաանկեղծ և ջերմ տարփածուն,
Որ երբ և իցէ հառաջած լինի
Կէս գիշերաին մի բարձի վերալ:
Բայց երբ և իցէ թէ քո սէրըդ
Նմանած է իմիս (մինչդեռ վստահ եմ,
Որ երեկ ոչ մի մարդ չէ սիրած ինձ պէս),
Ասա ինձ թէ որքան ծաղրելի գործերում
Քեզ քարշ է տուած սիրալին խանդըդ:

Հայանա՞ սասդյու նի գմբորին վայսա մայմ վաս
վամբունահանց մամիզոյան տամանադիս ուղարկած, գմբն Ս
առաջ ։ Ա այս շաբաթ մասն ու սշաբաթ ըլատ գմբն ա
ծառացահայիս դու մ այն ՍԻԼՎԻՈՍ մ սերմիու քէն մամին

Օ՛հ, երեկ ուրեմն այնպէս սրտագին

Չես սիրահարուած: Եթէ չես լիշում

Ամենաթեթև խենթութիւններըդ:

Որոնց մէջ ձգում էր քեզ բուռըն սէրըդ՝

Ապա դու չես սիրած:

Կամ եթէ չես նստած, ինչպէս ես հիմա,

Եւ քո ունկնդրիդ ձանձրոյիժ չես տուած

Անվերջ գովեստներով սիրուհուդ մասին:

Ապա դու չես սիրած:

Եւ կամ թէ յանկարծ քո ընկերներիդ

Չես թողած հեռացած, ինչպէս իմ կիրքս

Ինձ այս ըոպէիս բոնադատում է՝

Ապա դու չես սիրած: Օ՛հ, Ֆերէ, Ֆերէ,

Ֆերէ...

(Սիլվիոս գուրս է գնում):

ՌՈՂԱԼԻՆԴՐԻ

Աւաղ, իեղճ հովիւ, զննելով քո վէրքըդ՝

Ես, տխուր դիպուածով, գտնում եմ իմրս:

ՓՈՐՁԱՔԱՐ

Ես էլ իմս: Ես լիշում եմ, երբ ես սիրահարուած էի
սուրս զարկում էի քարին և ջարդում էի, և ասում էի.
«Էլի՞ գիշերավ կը գաս օրիորդ ժանէթին կը գտնես». և ես
լիշում եմ, թէ ինչպէս համբուրում էի նորա վուշ ծեծողի-
կը և այն կովի ստինքները, որ նորա սիրունիկ ճաքճըքած
ձեռքերը կթել էին. և ես լիշում եմ մի օր իմ սիրաբանու-
թիւնը մի ոլոռնի կեղեկ հետ, որ ես դրել էի իմ սիրուհու
տեղը, և որից հանելով երկու կեղենները՝ լետոյ կրկին լետ

տուի նրան ասելով. «կըիթ սորանք իմ սիրուս համար»:
Մենք, ճշմարիտ սիրահարներս, տարօրինակ քմահաճոյքներ
ունինք. բայց ինչպէս որ ամեն բան մահացու է բնու-
թեան մէջ՝ նոյնպէս էլ ամեն բնութիւն, որ սիրահարուած
է մահացու կերպով խենթ է:

ՈՂՋԱԼԻՆԴԻ

Դու շատ իմաստուն խօսքեր ես խօսում, աւելի քան
ինքդ ուշ ես դարձնում:

ՓՈՐՉԱՔԱՐ

Ոչ, ես երբէք ուշ չը պիտի դարձնեմ իմ սեպհական
սրամտութեան վերակ, մինչև որ մէկ օր բաղխուիմ նորան
և ոտքերս ջարդուին:

ՈՂՋԱԼԻՆԴԻ

Աստուած իմ, Աստուած. այս հովուի ցաւը
Ուրքան է նըման իմ սրտիս ցաւին:

ՓՈՐՉԱՔԱՐ

Նոյնպէս և իմիս. բայց իմ մէջ դա արդէն
Մի քիչ մաշուել է:

ՍԵԼԻԱՆ

Աղաչում եմ ձեզ,
Թող ձեզնից մէկը հարցնէ այն մարդուց,
Թէ նա մեզ փողով ուտելիք կը տայ.

Ես քաղցածութիւնից մօտ է նըւաղուիմ:

ՓՈՐՉԱՔԱՐ

Օհօ, դու, խեղկատակ:

ՈՂՋԱԼԻՆԴԻ

Զալնդ կտրիթ, խենթուկ,

Աղգականըդ չէ նա:

ՔՈՐԻՆ ան քորին ծաղրանաց նի
Ուկ է ինձ կանչում:
ՓՈՐՉԱՔԱՐ

Քեզնից լաւերը, պարոն: բաժանը վասի
Աղջման պահու աղու

Աղջակ ամ ներա ա անտա պայուն
Աղջակ ամ ներա ա անտա պայուն
Նատ թշուառ մարդիկ պէտք է լինէին:

ՈՂՋԱԼԻՆԴԻ
Սուս կաց, ասում եմ: — Բարի երեկոյ,
Բարեկամ:

ՔՈՐԻՆ
Աստուծոյ բարին,
Իմ աղնիւ պարոն, բոլորիդ ողջուն:

ՈՂՋԱԼԻՆԴԻ
Խնդրում եմ, հովիւ, թէ գութը կամ սոկին
Կարող են հալթալիթել այս ամալի տեղում
Հիւրասիրութիւն՝ ապա տար մեզ մի տեղ,
Ուր հանգիստ գտնենք և մի քիչ սնունդ:

Ոհա մի օրիորդ, որ ճամբորդելուց
Սաստիկ լոգնած է, և սիրտը գընում է
Անօթութիւնից:

ՔՈՐԻՆ
Իմ աղնիւ պարոն,
Ես նըրան խղճում եմ, և կուզենակի

Ոչ այնքան իմ խաթեր, որչափ նրա համար,
Որ բախտըս լինէր աւելի ընդունակ

Նորան օգնելու: Բայց ինքս հովիւ եմ
Մի այլ մարդու մօտ, և ես չեմ խուզում

Իմ արածացը հօտերիս բուրդը:
Իմ տէլըս մի տեսակ բարկացիոտ մարդ է,
Եւ շատ քիչ հոգս ունի արքայութիւն գնալ՝
Հիւրասիրութեան գործեր գործելով.
Բացի դորանից՝ նորա խրճիթը, Խրճիթ
Նորա հօտերը և արօտները
Բոլորը ծախու են. և այժմ նա ինքը
Բացակայ լինելով՝ մեր տնակի մէջ
Ոչ մի բան չը կայ ձեզ կերակրելու: Կ
Բայց այն ինչ որ կայ՝ եկէք և տեսէք.
Ես ինքս ձեզ կասեմ բարով, հազար բարով:

ՌՈԶԱԼԻՆԴ

Ո՞վ է ուզում գընել հօտն ու արօտը:
ՔՐԻՄԻՆ
Այս գեղջուկ պատանին, որ հիմա այստե
թէև նա առ ալժմ շատ քիչ հոգս ունի
Մի բան բնիւու:

ՕՐԱԳՈՎՈՐԾ

Խնդրում եմ հովիւ,
Թէ ազնըւութեան հակառակ չէ ալդ՝
Գընիւ ալդ տնակը, հօտն ու արօտը,
Եւ մեզնից կ'ստանաս նորանց արժէքը:

Utlhu

Եւ քո ռոմճիկդ էլ մենք կաւելացնենք:
Իրաւ, այս տեղը ինձ դիւր է գալիս,
Եւ յօժարութեամբ կը կամենայի
Այստեղ անց կացնել իմ ըոլոր կեանք:

ΛΟΥΦΗΣ

Անշուշտ, այդ բոլորը վաճառելի է:

Եկէք դուք ինձ հետ։ Թէ հարց ու փորձից յետ
Դուք սիրէք այս հողը և իր հասոյթը
Եւ այս տեսակ կեանքը՝ ապա ես կը լինիմ
Չեր հաւատարիմ սպասաւորը,
Եւ իսկոյն ձեր ոսկով կը գնեմ բոլորը։
(Դուրս են գնում)։

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆգԵՐՈՐԴ

Ծոյն տեղոք: անուն գլ. մաս, նաև

Մտնում են ԱՄԻԿՆՍ, ԺԱՔ և ՈՒԹԵՇՆԵՐ:

b f q

ԱՄԻՒԽՆՍ
Ով սիրում է ընկողմանել
Ինձ հնա դալար ծառի տակ,
Եւ իր ուրախ երգը զուգել
Թռչնի ծայնին ներդաշնակ՝
տեղ զայ, այստեղ զայ, այստեղ զայ:

Այստեղ զայ, այստեղ զայ, այստեղ զայ:

Այսուեղ չը կայ

Այլ թշնամին

στήνε αὐλαν

By author

552 C

συρ

ԽՆԱՌԵՄ, ԿՐԿԻՆ:

卷之三

ԱՐԻԷՎՈ

Դա ձեզ մելամաղձուտ կը դարձնէ, Մօսիէօ Փաք:

ԺԱՂ

Աւելի լաւ, կրկնիր, խնդրեմ, կրկին երգիր: Ես կարող եմ ծծել մելամաղձութիւն մի երգից՝ ինչպէս աքիսը. ծծում է հաւկիթները: Դարձեալ, խնդրեմ, դարձեալ:

ԱՄԻԼԵՆՍ

Իմ ձայնս խռապոտ է, գիտեմ. չեմ կարող քեզ դիւր գալ:

ԺԱՂ

Ես չեմ էլ ցանկանում որ դու ինձ դիւր գաս. ես ուզում եմ որ երգես. դէհ, նորից, մի տուն էլ. ինչպէս էք ասում, տուն էք ասում:

ԱՄԻԼԵՆՍ

Ինչպէս ուզում ես այնպէս ասա, Մօսիէօ ժաք:

ԺԱՂ

Բահ, ինչ հոգս է թէ անուններն ինչ են. ինձ հօպարտական չեն, որ անունները գիտենամ: Զես ուզում երգել:

ԱՄԻԼԵՆՍ

Աւելի քո խնդիրքդ կատարելու, քան թէ իմ հաճուքիս համար:

ԺԱՂ

Լաւ ուրեմն, եթէ երբ և իցէ մի մարդուց շնորհակալութիւն անեմ՝ այդ կը լինի քեզնից. բայց այն, ինչ որ անուանում են կոմպլիմէնտ՝ նմանում է երկու կապիկների միմեանց հանդիպելուն. և երբ մի մարդ ինձնից ջերմ շնորհակալութիւն է անում՝ ինձ թւում է, որ նորան մի քանի սե փող եմ տուել, և նա ինձ վերադարձնում է մուրացկանի շնորհակալութիւն: Դէհ, երգիր. իսկ դուք, որ չէք երգում սուս կացէք:

ԱՄԻԼԵՆՍ

Լաւ, ես կը վերջացնեմ երգի մնացորդը: —Պարոններ, դուք էլ ձեր կողմից սեղանը փուեցէք, դուքսը ուզում է այս ծառի տակ խմել: —(Ճարին) Այս բոլոր օրը նա քեզ էր որոնում:

ԺԱՂ

Ես էլ այս բոլոր օրը նորանից էի խոյս տալիս: Նաշատ վիճասէր է իմ ընկերութեան համար: Ես մտածում եմ նոյնչափ նիւթերի մասին, որքան նա ինքը բայց փառք եմ տալիս Աստծուն և չեմ պարծենում դորանցով: Դէհ, գեղգեղիր, հալդէ:

(Ամբինս երգում է բոլորի ընկերակցութեամբ):

Ե Ր Գ

Ով ուզում է փառքից խոյս տալ,

Արեւի տակ կեանք վարել,

Իր սընունդը ինքը հոգալ

Եւ գուածով գոհ ապրել՝

Այստեղ զայ, այստեղ զայ, այստեղ զայ:

Այստեղ չը կայ

Այլ թշնամի՝

Թէ ոչ ձմեռ

Եւ ցուրտ քամի:

ԺԱՂ

Ես քեզ կը տամ մի ոտանաւոր այդ եղանակով, որ եթէ ես շինեցի, հակառակ երեակայութեանս բժութեանը:

ԱՄԻԼԵՆՍ

Ես էլ կ'երգեմ:

ԺԱՂ

(Այս այլ վեճութեան մասին այլ տեսանկան պահանջական է)

Թէ պատահի, որ մի հարուստ

Յանկարծ դառնայ մի յիմնար,

Թողնէ տուն, տեղ, պատիւ, ապրուստ,

Որ կատարէ կամքն յամառ

Դուկղամ, դուկղամ, դուկղամ:

Այսեղ շատ կայ

Իր պէս դիտու

Եթէ նա զայ

Ամիի մօտ:

ԱՄԻՒՆՍ աժան մըսելում փառման

Ալդ դուկղամը ինչ է:

ԺԱՔ ժամանակը առաջանակ առաջանակ առաջանակ

Ալդ մի լունարէն ձայնարկութիւն է՝ խենթերին շրջանակի մէջ հաւաքելու համար: Ես գնում եմ. եթէ կարողանամ՝ կը քնեմ, եթէ չը կարողանամ՝ կը գոռզուամ Եղիպտոսի բոլոր անդրանիկների դէմ:

ԱՄԻՒՆՍ

Ես էլ կը գնամ դուքսին կը գտնեմ. նորա խնջոյքը պատրաստ է:

(Առանձին առանձին դուրս են գնում):

ՏԵՍԱՐԱՆ ՎԵՅԵՐՈՐԴ

Նոյն տեղը:

Մտնում են ՕՐԼԱՆԴՈ և ԱԳԱՄ

—

ԱՌԱՄ

Սիրելի տէրս, ես էլ չեմ կարող գալ. օ՛հ, քաղցածութիւնից մեռնում եմ: Հիմա այստեղ կը պառկիմ գետին, և

գերեզմանիս չափը կը բռնեմ: Մնաս բարով, իմ բարեսիրտ տէրս:

(Տարածում է գետին):

ՕՐԼԱՆԴՈ

Վահ, քեզ ինչ պատահեց, Ագամ. սիրտ հենց ալսքան էր. մի քիչ էլ ասլրիր, մի քիչ էլ կազդուրութիր, դու քեզ մի քիչ սիրտ տուր: Եթէ այս վալրի անտառը որևէ մի վալրենի բան արտադրում է՝ կամ ես նորան կերակուր կը լինիմ, կամ նրան կը բերեմ քեզ կերակուր: Երևակայութիւնդ աւելի մօտ է մահուան քան թէ ոյժերդ: Իմ խաթերս համար՝ կազդուրութիր, բազուկներովդ մահը քեզնից հեռու պահիր: Այս բովէիս ես յետ կը գամ, և եթէ ուտելիք չը բերեմ քեզ համար՝ այն ժամանակ քեզ թոլլ կը տամ մեռնել. բայց եթէ իմ գալուց առաջ մեռնես՝ ալդ կը նշանակէ, որ դու ծաղրում ես իմ քաշած նեղութիւնը: Նատ լաւ, դու հիմա լաւ ես երեսում. ալս բովէիս կը գամ:— Բայց դու այդտեղ սառն օդի տակ ես պառկած. թող քեզ տանիմ մի ծածկոցի տակ. և եթէ այս անտառում մէկ հատ շնչաւոր գտնուի՝ չեմ թողնիլ սովից մեռնես: Դէս, կազդուրութիր, բարի Ագամս:

(Դուրս են գնում):

ՏԵՍԱՐԱՆ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Նոյն տեղը:

Մի սեղան պատրաստուած.

Մտնում են ԱՆԴՐԱՆԻԿ ԴՈՒԲՍԻ, ԱՄԻՒՆՍ, ԼՈՐԴԵՐ և ՈՒՐԻՇՆԵՐ:

ԱՆԴՐԱՆԻԿ ԴՈՒԲՍ

Կարծեմ այս մարդը փոխակերպուած է

Վայրի գազանի, քանզի ուզ մի տեղ սիւներն չք
Ես նրան չեմ գտնում մտրդկալին ձեռվ։ .. այժմ
ԱՌԱՋԻՆ ՀՈՐԴ

Տէր իմ, ճիշդ հիմա նա հենց այստեղ էր,
Եւ մինչև հիմա զըւարձանում էր բաց շնորհ
Մի երգ լսելով։
ԱՆԴՐԱՆԻԿ ԴՈՒՔԸ
Եթէ երբէք նա,
Տարածալութեանց այդ համախումը, առն ունեա
Երաժշտութեան սիրահար դառնայ՝ զան
Ապա շատ շուտով պէտք է ունենանք այժմայ
Մոլորակների մէջ իրարանցում։
—Գնացէք, նըրանք բերեցէք այստեղ.

Ասացէք ուղում եմ նորա հետ խօսել։
(Մտնում է Ժաբը):

ԱՌԱՋԻՆ ՀՈՐԴ

Նա ինձ ազատեց ալդ նեղութիւնից.

Ահա նա ինքը...

ԱՆԴՐԱՆԻԿ ԴՈՒՔԸ

Վահ, ուր ես, պարոն,
Ի՞նչ տեսակ կեանք է ալդ, որ պէտք է ալսպէս
Խեղճ բարեկամները ալսքան թախանձեն
Ըսկերութիւնը։ Ի՞նչ, դու ուրախ...

ԺԱԲ

Վահ, մի խենթ, մի խենթ։ Ալոր անտառում
Մի խենթ եմ գըտել, խալտաճամուկ խենթ։
—Ա՛խ, թշուառ աշխարհ։ —Եթէ ճշմարիտ է,
Որ ես ապրում եմ սնունդ առնելով
Ապա ճշմարիտ է, որ մի խենթ տեսալ
Գետնի վրայ սլառկած արեգակի տակ

Նա տաքանում էր, և նոյն ժամանակ
Նա բարբառում էր տիկին բախտի դէմ,
Լաւ լաւ խօսքերով, կշռած խօսքերով,
Այնու ամենայնիւ գոյնը զգոյն մի խենթ։
Բարի լոյս, այս խենթ, ասացի նորան.
Ոչ, պարոն, ասաց նա, ինձ խենթ մի կանչեր,
Մինչեւ որ երկինքը ինօք բախտ ուղարկէ։
Յետոյ նա դուրս քաշեց իր ժամացոյցը
Եւ աղօտ աչքով նայելով նորան
Իմաստուն կերպով ասաց. ժամը տասն է,
Ահա տեսնում ենք, ասում է, թէ ինչպէս
Աշխարհն անցնում է։ Դեռ մի ժամ՝ առաջ
Ժամի ինըն էր, եւ մի ժամ՝ յետոյ
Կը լինի տասնըմէկ, եւ այդպէս ժամից ժամ
Հասունանում ենք եւ հասունանում,
Եւ յետոյ ժամից ժամ՝ փտում ենք, փտում,
Եւ այստեղ կախուած է մի ամբողջ պատմութիւն։
Երբ ես լսեցի ալդ խելագարի
Տրամախօսելը ժամանակի վրայ՝
Թոքերս ըսկսան աքլորի նըման
Կանչել ու կանչել. շուարել էի,
Թէ ինչպէս խենթերը կարող են լինել
Սկզանի խոր դիտող, և ծիծաղեցի
Նորա ժամացոյցով անընդհատ մէկ ժամ։
Օ՛հ, դու ազնիւ խենթ, արժանաւոր խենթ։
Խալտաճամուկից լաւ հագուստ չը կայ։

ԱՆԴՐԱՆԻԿ ԴՈՒՔԸ

Ալդ որ խենթըն է։

ԺԱԲ

Օ՛հ, ազնիւ խենթ..
Մի խենթ, որ եղել է մի պալատական։
Երբ տիկինները, ասում է ալդ խենթը,

Մատղաշեն և սիրուն՝ նոքանձիրքն առնին.
Իրանք հասկանալու: Եւ իր ուղեղում, —
Որ չոր է, որպէս վերջին փշուրը, —
Ճամբորդութիւնից մընացած հայի, —
Սլդ խենթը ունի տարօրինակ խորշեր,
Խճողուած ալէս-ալէս դիտողութիւններով,
Որ դուրս է թողնում կցկտուր խօսքերով:
Աշխ, երանի թէ ես խենթ լինէի:
Իմ միակ փափաքս է մի գոյն-գոյն հագուստ:

ԱՆԴՐԱՆԻԿ ԴՐՈՒՅ

Դու այդ կ'ստանաս:

ԺԱՅ

Սլդ՝ ինձ յարմարուող միակ հագուստն է,
Բայց այն պայմանով, որ դուք դուրս հանէք.
Չեր առողջամիտ դատողութիւնից
Այնտեղ արմատացած որ և է կարծիք՝
Թէ ես խելօք եմ: Պէտք է միւս կողմից
Վայելեմ կատարեալ մի ազատութիւն,
Այնչափ լայն իրաւունք, որչափ հողմն ունի՝
Փշելու ում վերայ որ կամենում է.
Քտնզի այդ՝ խենթերի արտօնութիւնն է.
Եւ նոքա, որոնք իմ խենթութիւնից
Աւելի ճանկութուին՝ ալէտք է միւսներից
Աւելի ծիծաղին: Եւ ինչու, տէր իմ. —
Սլդ «ինչուն» յայտնի է գիւղի եկեղեցու
Ճանապարհի պէս: Նա, որին մի խենթ
Խելացի մի խօսքով վիրաւորում է,
Որչափ էլ որ ցաւի ըստացած վերքը՝
Շատ լիմար մարդ է, եթէ ցոյց չը տայր
Որ անզգայ է նորա հարուածին.
Եթէ ոչ խելօքի լիմարութիւնը
Կ'անդամազնուի մերկապարանոց

Խենթի վալրիկերով ակնարկներով: Դու
Ուհի, հագողը էքսինձ գոյն-գոյն դգեստըն,
Տուեք ինձ իրաւունքը ասել իմ միտքը,
Եւ ես կը մաքրեմ մէկս ծալրից միւս ծալր,
Վարակուած աշխարհի աղտոտ մարմինը,
Եթէ համբերութեամբ ընդունեն դեղս:

ԱՆԴՐԱՆԻԿ ԴՐՈՒՅ
Գրողը քեզ տանի, գիտեմ ինչ կ'անձիր:

ԺԱՅ

Եւ ինչ կանէի, եթէ ոչ լաւ բան: ՀԵՅ
ԱՆԴՐԱՆԻԿ ԴՐՈՒՅ արևն նի

Ամենաչար, ժանտ մեղք, կշտամբելով մեղքը.
Քանզի դու ինքը ցոփակեաց ես եղել,
Նոյնչափ վաւաշոտ, որչափ նոյն ինքը
Գաղանալին խայթը, և այն հին ախտերը
Եւ ամեն թարախուած այն պալարները,
Որ դու, ազատ ոտքի շուալտութեան մէջ
Ստացել ես՝ հիմա դու լետ կը փսխես:
Ընդհանուր աշխարհի վրայ:

ԺԱՅ

Վահի, ով, բարբառելով հալարտութեան դէմ՝
Ամբաստանում է մի յատուկ անձի.
Սլդ մոլութիւնը չէ լորդում միթէ
Սհեղ, որպէս ծովը, մինչև ի վերջոյ
Իր միջոցներն իսկ լետ են նահանջում:
Ինչ կին եմ անուանում ամբողջ քաղաքում
Երբ որ ասում եմ, քաղաքացի կինը
Մի իշխանուհու փառքը կը ըստ է
Անարժան ուսի վրայ, ով կարող է դուրս գալ
Եւ ասել, թէ ես նրան եմ ակնարկում,

Երբ ինչպէս նա ինքն է՝ նոյնն էլ իր դրացուհին.
Եւ ով է այն մարդը, ամենաստոր դասից,
Որ ասէ, «ԵՇ պարոն, իմ շըռալլութիւնը
Դու չես վճարում», այնպէս կարծելով
Թէ իրան եմ ասում: Բայց ով այսպէս անէ,
Նոյն իսկ այս վարքով նա ենթարկում է
Իր խենթութիւնը իմ խօսքիս ոդուն:
Լաւ ապա, ինչպէս, ասացէք, ինչ բանով
Իմ լեզուս նըրան վիրաւորել է: Դա
Թէ նորա մասին ասածըս ճիշդ է՝
Ապա նա ինքն է իր դէմ մեղանչել.
Եթէ նա մեղք չունի՝ վահ, էլ ինչ վընաս.
Իմ մեղադրանքը վայրի սագի պէս
Թռչում է, և ոչ ոք չէ պահանջում նըրան:
— Բայց այս ով է դալիս,

ՕՐՀԱՆԴՅՈ

Կացէք, էլ չուտէք:
ԺԱՔ
Դեռ ոչինչ չեմ կերել:
ՕՐՀԱՆԴՅՈ
Ոչ էլ պէտք է ուտես,
Մինչեւ կարօտեալը չը բաւարարուի:
ԺԱՔ

Ո՞րտեղից լուս ընկաւ այս նոր աքլորը:
ԱՆԴՐԱՆԻԿ ԴՈՒՔԸ
Թշուառութիւնդ է այս կերպով, ա՛յ մարդ,
Քեզ յանդգնացնում, թէ բարի ձեւերի
Կոսիտ քամահանքը, որ ալդպէս զուրկ ես
Բարեկրթութիւնից:

ՕՐՀԱՆԴՅՈ
Զեր առաջին խօսքը
Գտաւ երակը: Մերկ թշուառութեան
Փշալից ծայրը ինձնից խլած է
Քաղաքավարութեան հարթ արտաքինը.
Եւ սակայն ծնուած եմ մի կրթուած երկրում
Եւ մի քիչ տեսել եմ դաստիարակութիւն:
Բայց կացէք, ասում եմ, ով դպչի այս պտղին,
Նախ քան ես ու գործըս գոհացում գտնենք՝
Կոպանեմ նըրան:

ԺԱՔ

Եթէ կարող չէ
Խոհականութիւնը գոհացում տալ քեզ՝
Ապա սկսաք է մեռնիմ:

ԱՆԴՐԱՆԻԿ ԴՈՒՔԸ

Ասա, ինչ ես ուզում.
Քո մեղմութիւնը մեր վերակարող է
Առաւել բոնանալ, քան բոնութիւնըդ
Կարող է շարժել մեզ դէպի մեղմութիւն:

ՕՐՀԱՆԴՅՈ

Ես մերձ ի մահ եմ քաղցածութիւնից.
Սընունդ տուէք ինձ:

ԱՆԴՐԱՆԻԿ ԴՈՒՔԸ

ԵՇ, նստիր ու կեր,
Եւ մեր սեղանին գալուստըդ բարի:

ՕՐՀԱՆԴՅՈ

Ալդպէս քաղցը էք խօսում: Ա՛խ, ներեցէք ինձ,
Ես կարծում էի որ ամենայն բան
Վալենի է այստեղ, և այդ պատճառով

Դաժան և պահանջող ձեւացրի ես ինձ:
 Բայց լսեցէք ինձ, ով որ էլ լինիք
 Այս անմատչելի անապատի մէջ,
 Թախծալից ճիւղերի ստուերի ներքոյ,
 Որ ժամանակի սահուն ժամերը
 Անխընայ վատնում էք անհօգութեան մէջ.—
 Թէ երբէք տեսել էք լաւագոյն օրեր.
 Թէ երբէք եղել էք՝ ուր զանգակները
 Զեղ հրաւիրել են դէպ եկեղեցի.
 Թէ երբէք նստել էք մի ազնիւ մարդու
 Սիրալիր խնջուքին. թէ երբէք սրբել էք
 Զեր թարթիչներից մի կաթիլ արցունք,
 Եւ գիտէք թէ ինչ է գժալ և գութ շարժել—
 Թող մեղմութիւնը լինի ուրեմն ուրեմն
 Իմ ամենամեծ բռնադատումը:
 Եւ ես այդ յոյսով ամօթահարում եմ
 Եւ սուրբս թագցնում:

ԱՆԴՐԱՆԻԿ ԴՐԻՋԱՅ

Այս, մենք տեսել ենք
 Լաւագոյն օրեր. և սուրբ զանգակը
 Մեղ էլ է հրաւիրել դէպ եկեղեցի.
 Մենք էլ ենք նստել լաւ մարդկանց խնջուքին,
 Սրբել մեր աչքից այն կաթիլները,
 Որ ծնեցրել է սուրբ գթութիւնը:
 Ուրեմն նստեցէք մեղմութեամբ և առէք
 Ամեն օգնութիւն՝ որ մենք կարող ենք
 Մատակարարել ձեր կարօտութեան:

ՕՐՀԱՆԴՈ

Ուշացրէք ուրեմն մի քիչ ձեր ճաշը,
 Մինչ ես, ալծեամի պէս, երթամ ձագըս բերեմ
 Եւ կերակրեմ նրան: Կայ մի խեղճ ծերուկ,

Որ խոնջեալ քայլերով ինձ հետեւածոէ
 Լոկ սիրուց դրդուած: Մինչև չը լագենայ
 Նա, որ տանջւում է երկու թուլութիւնից,—
 Տարիք և նօթութիւն, եսով մի պատառի
 Զեմ կարող դպչել:

ԱՆԴՐԱՆԻԿ ԴՐԻՋԱՅ

Գնա բեր նըրան, զի
 Եւ մինչև ձեր դարձը ոչինչ չենք ուտիլ:

ՕՐՀԱՆԴՈ

Երնորհակալ եմ: Աստուած ձեզ օրհնէ

Ձեր օգնութեան համար:

(Պուս է դնում):

ԱՆԴՐԱՆԻԿ ԴՐԻՋԱՅ

Տեսնում ես հիմա,

Լոկ մենք չենք դժբախտը այս աշխարհի մէջ:

Համաշխարհային այս մեծ թատրոնը

Ունի տեսիլներ աւելի վշտալց'

Քան այն տեսարանը, ուր մենք ենք խաղում:

ԺԱՔ

Աշխարհը համայն մի բեմ է միայն,

Եւ մարդիկ ու կանայք սոսկ դերասաններ.

Ամեն մէկն ունի իր մուտքն ու ելքը,

Եւ մի մարդ իր կեանքում խաղում է շատ դեր:

Արարուածները եօթը հասակն են.

Սկզբում, երեխայ՝ ճշում է, փսխում

իր ըստընտուի բազուկների մէջ.

Յետոյ՝ դպրոցի լալկան աշակերտ,

Պայուսակ ձեռքին, և առաւօտեան

Փալլուն երեսով խխունջի նման

Սողում է ակամալ դէպի վարժարան.

Յետոյ՝ մի սիրահար, որ հառաջում է
Հընոցի նըման, մի տխուր բալլագով,
Որ նուիրած է սիրուհու յօնքերին.
Յետոյ՝ զինուորական, հայհոյանքով լի,
Սրածայր մօրուքով՝ ընձառիւծի պէս,
Եւ պատուի կողմից նախանձախնդիր,
Կոռի անհամբեր և դիւրաբորբոք,
Որ թնդանօթի բերնի մէջ անգամ
Հետապնդում է պղպջակ համբաւին.
Յետոյ՝ մի դատաւոր, սիրուն, կլոր փորով,
Հաւի մսով լցուած, աչքերը խոժոռ,
Մօրուքը խուզուած պաշտօնական ձեռով,
Լի իմաստալից ասացուածներով
Եւ նոր առածներով:
Սա էլ այս կերպով խաղում է իր դերը:
Վեցերորդ տարիքը տեղափոխուում է
Հողաթափաւոր նեղ վարտիքի մէջ,
Ակնոցները քթին, մի տոպըակ կողքից,
Երիտասարդութեան իր գուլպաները
Դեռ լաւ պահպանուած, բայց խիստ լայնացած
Նորա կծկըւած սրունքների համար.
Այրական բամբ ձայնը նորից լետ դարձած
Դէպի մանկութեան զիլ գոչիւնները՝
Շաջում է և սուլում իր հնչիւնի մէջ:
Ամենավերջին այն տեսարանը,
Որ աւարտումն է այս արկածալից
Եւ օտար պատմութեան՝ է երկրորդ մանկութիւն
Եւ սոսկ մոռացութիւն, առանց ատամների,
Առանց աչքերի, առանց ճաշակի,
Առանց ամեն բանի:

(Մտնում են Օրբանդ եւ Աղամ):

Անդրանիկ Դոհիքս

Զեր գալուստը բարի:

Դէհ, հիմա ցած դըրէք ձեր յարգելի բեռը
Եւ թողէք սնանուի:

ՕՐՀԱՆԴՈ

Շնորհակալ եմ ձեզ

Այս մարդու կողմից:

ԱԴԱՄ

Եւ հարկաւոր է.

Լեզուս ոյժ չունի մի բառ խօսելու,
Որ ինքս իմ կողմից շնորհակալ լինիմ:

ԱՆԴՐԱՆԻԿ ԴՈՒՔՍ

Զեր գալուստը բարի. դէհ, թող ըսկըսենք.
Ես ձեզ չեմ ձանձրացնիլ հարցեր անելով
Զեր արկածների վրայ: Դէհ, մի քիչ մուզիկ.
Բարեկամ, երգիլ գուլ:

ԱՄԻՒՆՍ (երգում է)

Ե Ր Գ

Ա

Փչի՞ր դու, փչի՞ր, հողմ ձմեռնային.
Չեն այնքան անզութ տառնամնիքը՞
Որչափ ապերախտ սիրտը մարդկային.
Եւ ոչ էլ այնչափ սուր են ժանիքը՞.
Քանզի գէթ աչքի չես երեւում դու,
Թէեւ քո շունչը է այնպէս հատու:
Հէյ հօ, օ, հէյ հօ, կեցցէ բուք ու ծիւն,
Շատ սէր կայ կեղծիք է, շատ սէր խնն-
թութիւն:

Կեցցէ բուք ու ծիւն,
Այս կեանքն է ցնծութիւն:

զամաց վաճրուու զմա գէմի ճան անմէշ ՀՅԲ

Սառի՞ր դու, սառի՞ր, ո՞վ դառըն երկինք,
Դու դեռ չես կարող այնպէս սուր կծել,
Որպէս երախտիք մհոացող անձինք,
Թէնւ կարող ես դու ծովը կոծել.
Բայց չէ խայթոցըդ սայրասուր այնպէս
Մի երախտամիո բարեկամի պէս:
Հէյ հօ, օ, հէյ հօ, կեցցէ բուք ու ծիւն,
Շատ սէր կայ կեղծիք է, շատ սէր խեն-
թութիւն:
Կեցցէ բուք ու ծիւն,
Այս կենանքն է ցնծութիւն:

ԱՆԴՐԱՆԻԿ ԴՈՒՔԸ

Թէ Սըր Ռոլանդի որդին ես իրաւ,
Ինչպէս անկեղծօրէն ինձ շշնչեցիք —
Եւ աչքըս վկայ է նրա կերպարանքին
Իսկ և իսկ գծագրած և կենդանացած
Քո գէմքի վերայ, — ապա ուրեմըն
Գալուստը բարի: Ես այն գուքսըն եմ,
Որ հօրդդ սիրում էր: Եկ իմ քարայրըս,
Եւ այնտեղ պատմիք միւս արկածներըգ:
— Եւ գու, բարի ծերուկ, գու էլ բարի եկար,
Որպէս քո տէրըգ: — Բռնեցէք թևիցը:
— Տուր ինձ քո ձեռքըգ և եկ, պատմիք ինձ
Բոլոր արկածներըգ:

(Գնում են):

ՋԱԽԱՅ

զմաժներոյնաւ զմա ժի վանց ՀՅ
Նույսքաղար սր սուզին նի դժշամած
Ճանցն նմէ սուզր նոգմածն նի գծեցը սէ

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

Հայու սուր բիւր մարդան սր գդրցն
այդմամածօւչայ վասայ Յ բան ամ
զոյմէծաւյար և զմաս արմ մժանը
քայլա սուզր սուզր սուզր սուզր
համբ մէ սուզր

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Մի սենեակ պալատի մէջ:

Մտնում են ԴՈՒՔՍ ՖՐԵԴԵՐԻԿ, ՕԼԻՎԻԵ, ԼՈՐԴԵՐ և ՍՊԱՍԱԻՈՐՆԵՐ:

ԴՈՒՔՍ ՄԱՂԱՎԱ

ԴՈՒՔԸ

Ալնուհետեւ նրան չէք տեսած այլ ևս.
Ոչ, պարոն, պարոն, ալդ կարելի չէ:
Բայց եթէ չը լինէր մեծագոյն մասըս
Գթութիւնից կազմած ես չէի ընտրիլ
Մի այլ առարկայ իմ վրէժինդրութեան՝
Երբ գու ներկայ ես: Բայց լաւ ուշ դիր ինձ,
Գրտիր եղբօրըգ որտեղ որ լինի.
Ճրագով որոնիր, բեր նըրան այստեղ,
Կենդանի կամ մեռած, ալս տասներկու ամսում:
Եթէ ոչ չը գաւնաս կրկին մեր հոգում
Ապրուստըգ շահելու: Քո կալուածներըգ
Եւ այն բոլորը, ինչ քոնն ես կանչում
Գրաւելու արժանի՝ մեր ձեռքում կը պահենք,
Մինչև որ գու գաս քո եղբօր բերնով
Քեզ արդարացնես մեր կասկածներից:

ՕՂԻՎԻՒ

ՕՇ, երանի թէ ջեր յարգութիւնը
ծանաչէր իմ սիրտս այս պարագայում.
Ես երբէք իմ կեանքում եղբօրս չեմ սիրած:

ԴՐԻՋ ՅԱԿՈՎԱՐ

Ուշեմն առաւել անզգամ ես դու:
Տըղերք, այս մարդուն դոնից դուրս արեք,
Եւ թող իմ յատուկ պաշտօնեաներըս
Գրաւեն նրա տունը և կալուածները:
Դէհ, շուտ կատարեցէք և սրան դուրս արեք:
(Դուրս են գնում):

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Անտառը:

Մտնում է ՕՐԻԱՆԴՈՆ, մի թուղթ կախելով մի ծառից:

ՕՐՀԱՆԴՈ

Կախուիր այստեղ, քերթուած, իմ սիրոյս վկայ.
Եւ դու, եռապսակ գշիոյ գիշերուայ,
Դիտիր զգօն աչքավ քո գժգոյն գնդից,
Որսորդուհուդ անուան նալիր ալդտեղից,
Որին հպատակ է իմ ամբողջ կեանքը:
Որոզալինդ, այս ծառերն են իմ գըրեանքը,
Որոնց կեղեկ վրայ կը դրոշմեմ մտքերս,
Որ ամեն մէկ աչք որ նայում է ներս
Այս անտառի մէջ՝ տեսնէ քանդակուած
Առաքինութիւնը, ամեն տեղ լիշուած:

Դէհ, վազիր, Օրլանդօ, ամեն ծառի վրայ

Քանդակիր անունը չքնաղ աղջըկայ:

(Դուրս է գնում):

(Մտնում են Քորին եւ Փորձաքարը):

ՔՈՐԻՆ

Ի՞նչպէս ես գտնում այս հովուական կեանքը, վարպետ
Փորձաքար:

ՓՈՐՁԱՔԱՐ

Ճիշդն ասած՝ հովիւ, ինքն ըստ ինքեան վեր առած,
սա լաւ կեանք է. բայց որովհետեւ մի հովուի կեանք է՝ ո-
չինչ է: Քանի որ մենակութիւն է՝ ինձ շատ դիւր է գալիս.
բայց որովհետեւ առանձնութիւն է՝ շատ փուչ կեանք է:
Միւս կողմից, քանի որ դաշտերի մէջ է անցնում՝ ինձ շատ
հաճելի է. բայց որովհետեւ պալատի մէջ չէ տաղտկալի է:
Քանի որ մի ժուժկալ կեանք է, լսիր, իմ բնաւորութեան
շատ յարմար է գալիս. բայց որովհետեւ առատութիւն չը
կալ մէջը՝ շատ ներհակ է իմ ստամոքսիս: Փիլիսոփայութիւն
ունիս բնաւ քո մէջ, հովիւ:

ՔՈՐԻՆ

Իմ բոլոր իմացածս այս է, որ որչափ մի մարդ աւելի
հիւանդ է՝ այնչափ աւելի վատ է զգում իրան. թէ նա, որ
զուրկ է գրամից, միջոցներից և բաւականութիւնից՝ զուրկ
է երեք լաւ բարեկամներից. թէ անձրւի յատկութիւնն է
թրջել, և կրակինը՝ ալրել. թէ լաւ արօտը պարարտ ոչխար-
ներ է առաջ բերում, և թէ գիշերուայ մի մեծ պատճառը՝
արեւի բացակալութիւնն է. թէ նա, որ խելք չէ սովորել
ոչ բնութիւնից, ոչ արհեստից՝ իրաւունք ունի գանգատուե-
լու, որ լաւ դաստիարակութիւն չէ ստացել, և կամ թէ
շատ յիմար ծնողների զաւակ է:

ՓՈՐՉԱՔԱՐ

Այս մարդը՝ մի՞ բնական փելիսոփալ է: — Երբ և իցէ եղած ես պալատում, հովիւ:

(ոյսգանդամ քորին մէ նուն) ՔՈՐԻՆ

Ոչ, երբէք:

ՄԱՐԴ

ոմբյան ոքմանը մարդ ՓՈՐՉԱՔԱՐ ունար ու սիրած ոյագանցափ
Ուրեմն դու դժոխքի արժանի ես:

ՔՈՐԻՆ

Ոչ, լուս ունիմ որ... ՓՈՐՉԱՔԱՐ
Իրաւ, դու դժոխքի արժանի ես, ինչպէս մի հաւկիթ,
միայն մէկ կողմից խորովուած:

ՔՈՐԻՆ

Եւ ինչո՞ւ, որովհետև պալատում չեմ եղած: Պատճառ:
ՓՈՐՉԱՔԱՐ

Վահ, պարզ բան է. եթէ երբէք պալատում չես եղած՝ ապա երբէք չես տեսած լաւ բարք ու վարք, ուրեմն քո բարք ու վարքը պէտք է վատ լինի, և վատութիւնը մեղք է, և մեղքը դժոխքի արժանի: Քո բանը բուրդ է, հովիւ:

ՔՈՐԻՆ

Իրաւ, Փորձաքար. ինչ որ պալատի մէջ լաւ բարք ու վարք է՝ նոյնչափ ծիծաղելի է գիւղում՝ որչափ գիւղական վարուեցողութիւնը ծիծաղելի է պալատում: Դու ինձ ասացիր, որ պալատում դուք բարև չէք տալիս, այլ ձեռք էք համբուրում. այդ շատ անմաքուր կը լինէր՝ եթէ պալատականները հովիւ լինէին:

ՓՈՐՉԱՔԱՐ

—ա՞ Ապացոյց, շուտ, ապացոյց: քայիթրունակս ո՞չ
հյօսն ամի սմ ոյան ՔՈՐԻՆ

ՎԱԼԼԵՂՈՓ

Վահ, մենք միշտ ձեռքերս քսում ենք ոչխարներին,
և նոցա բուրդը, իմանում ես, ճարալու է: քայիթրունակս մասնամքո
ՓՈՐՉԱՔԱՐ ունար ունար առ ոյան

Վահ, միթէ պալատականների ձեռքերը չեն քրտնում,
և միթէ ոչխարի ճարալը նոյնչափ առողջարար չէ, որչափ
մարդու քրտինքը: Այդ ծանծաղ է, ծանծաղ եթէ կարող
ես՝ աւելի լաւ ապացոյց բեր: ՔՈՐԻՆ
Բացի դորանից մեր ձեռքերը կոշտ են:

ՓՈՐՉԱՔԱՐ

—ան ի՞նչ զնաս, ձեր զբժունքներն աւելի լաւ պ'զգան:
Այդուել ծանծաղ է, աւելի շնորհքով ապացոյց բեր: միցմմիզ
քայիթրունքան ապացոյց բարք ու վարքը քայիթրունքան ոգ ու
ուսուր քայիթրունքան ապացոյց բարք ու վարքը քայիթրունքան միայն ին
թառնեւնոքա շատ անգամ կարուտ են, երբ որմենք ոչ
խարների վերքերը բուժում ենք. կուզէիր որ մենք կուպը
համբուրէինք: Պալատականների ձեռքերը մուշկով օծուած են:
ուսուր քայիթրունքան ապացոյց բարք ու վարքը քայիթրունքան միայն
գոյի ու բազայի առ խոր զայդ ունափը զայդ առ ելլուն

ծանծաղամիտ մարդ, գու, որդ ընկած միս՝ մի գեղեցիկ կտոր մսի մօտ: Լսիր իմաստունից և լաւ մտածիր. մուշկը
աւելի ցած ծագում ունի քան կուպը. մուշկը կատուի ամենակեղտոտ արտաթորումն է: Աւելի լաւ ապացոյց բեր,
հովիւ:

(ոյսգանդամ քորին մէ նուն) 6

ԱՐՈՐԻԾ

Քո սրամտութիւնդ չտփազանց պալատակին է ինձ հա-
մար: Ես յետ մնացի:

ՓՈՐՉԱՔԱՐ

Հիմա կ'ընդունես մնալ դժոխքի բաժին: Աստուած քեզ
օգնութեան հասնի, ծանծաղ մարդ: Աստուած քեզ խելք
տալ, դու շատ հում ես եղել:

Պարոն, ես մի պարզ մշակ եմ. Ես կարող եմ կերածն
շահել և հագածս վաստակել. «Հ ոքի դէմ ոլս չունիմ, ոչ
ոքի երջանկութեանը չեմ նախանձում, ուրիշների օգտին ես
ուրախ եմ, և իմ վնասիս գոհ: Իմ ամենամեծ պարծանքս է՝
տեսնել ոչխարներիս արածելը և գառնուկներիս ծիծ ու-
տելը:»

ՓՈՐՉԱՔԱՐ

Սիդ էլ մի ուրիշ պարզամիտ միտք է քո մէջ, որ մա-
քիներին և խոյերին իրարու մօտ ես բերում, և աշխատում
ես քո ապրուստդ շահել արջառի զուգաւորութեամբ: Թո՛վ,
մի խոյի միջնորդը լինել, մի տասներկու ամսական էգ գառ-
նուկ տանել զցել մի եղջերաւոր, պառաւած, խայտառակ
խոյի ճանկը, հակառակ բոլոր օրինաւոր զուգակցութեան
օրէնքներին: Եթէ դորա համար դու դժոխքի կրակից ազա-
տուիս՝ ուրեմն յայտնի կը լինի, որ սատանան չէ ուզում
հովիւ ունենալ: Զը գիտեմ ինչ կերպով դու կարող ես փըր-
կուիլ:

ԲՈՐԻԾ

Ահա գալիս է երիտասարդ պարոն Գանիմեդը, իմ նոր
տիրուհուս եղբայրը:

(Մտնում է Ռոզալին, կարդալով):

ՈՐՋԱԼԻՆԴ

Արևելքից արևելքան Հնդկաստան
Զը կայ այնպէս գոհար ինչպէս Ռոզալինդ.
Իր քնքութեան անոյշ բոլորվ բուրաստան
Գարձընում է ամբողջ աշխարհ Ռոզալինդ:
Ամեն պատկեր, որչափ չքնաղ լինի այն
Սև է միայն, երբ փայլում է Ռոզալինդ.
Թող չը լիշուի էլ ոչ մի դէմք, և միայն
Թող անմոռաց մընալ չքնաղ Ռոզալինդ:

ՓՈՐՉԱՔԱՐ

Եթէ ես ուզեմ կարող եմ այդ տեսակ ոտանաւոր շի-
նել ամբողջ ութը տարի, բացի ճաշի, ընթրիքի և քնելու
ժամերից: Ճիշդ որ, կարծես կարագ ծախող գիւղացի կնկայ
քայլերգն է, երբ որ գնում է շուկայ:

ՈՐՋԱԼԻՆԴ

Կորին, խենթ մարդ:

ՓՈՐՉԱՔԱՐ

Ահա մէկ նմուշը.

Թէ մի եղնիկ կարօտ լինի իր էգին՝
Թող որոնէ նա և գտնէ Ռոզալինդ.
Եթէ կատուն հետապնդի իր արուին՝
Նոյնպէս անշուշտ կանէ նաև Ռոզալինդ:
Պէտք է ձմեռուայ հագուստներըն աստառեն.
Նոյն պէտքն ունի նաև նիհար Ռոզալինդ.
Հնձողները խուրձ կը շինեն, կը կապեն,
Սայլ գնելուն նորանց կ'օգնէ Ռոզալինդ:
Թթու կեղեւ ունին քաղցըը նշերը,
Այսպէս նուշ է նաև սիրուն Ռոզալինդ:
Ով որ գտնէ անուշահոտ վարդերը՝
Նա կը գտնէ սիրոյ փուշ և Ռոզալինդ:

Ալսպէս է ալդ ոտանաւորների կեղծ արշաւանքը: Ինչու ես դու քեզ դորանցով վարակում:

ՈՌՋԱՐԱԲԻ ԱԺԱՌ ՈՌՋԱԼՀԻՆԴ ՅԱՄԲԱ ՀԱՅ ԱՌ

Սուս կաց, լիմար գիծ, ես մի ծառի վերայ եմ գտել
ալս ոտանաւորները:

ՓՈՂՉԱՐԱՐ

Ես իմ հոգիս, ալդ ծառը շատ վատ պտուղ է տալիս:
ՈՌՋԱԼՀԻՆԴ

Ես նըան կը պատուաստեմ քո հետ, և յետոյ կը պատուաստեմ զկեռի հետ. յետոյ դա կը լինի այս գաւառի ամենից վաղահաս պտուղը. որովհետեւ դու դեռ չը հասած արդէն կը փտիս, և զկեռի յատկութիւնն ալդ է:

ՓՈՂՉԱՐԱՐ

Դու ասելիքդ ասացիր, բայց թէ խելացի էր ալդ թէ
ոչ՝ թող անտառը դատէ:

(Մտնում է Սելիս մի թուղթ կարդարով.)

ՈՌՋԱԼՀԻՆԴ

Սուս. ահա գալիս է իմ քոյլը կարդալով. մի կողմ քաշուեցէք:

ՍԵԼԻՍ

Ե՞ր այս անտառը պէտք է լուռ լինի.

Քանզի բընակիչ չունի. — քաւ լիցի.

Լեզուներ կը կախեմ ամեն մէկ ծառից,

Ոմանք կը խօսին խօսքեր խելացի:

Ոմանք կը յալտնեն, թէ նըքան արագ:

Սահում է մոլոր մարդկալին կեանքը,

Որ մի բուռի մէջ կը պարունակուի

Իր տարիների ամբողջ հոսանքը:

Ոմանք կը պատմեն, թէ նըքան յաճախ Բեկում են ուխտերն երկու սրտերի:

Բայց ամենալաւ ծառերի վերայ,

Ամենասիրուն նորա ոստերի,
Եւ իմ քերթուածիս ամեն մէկ տողին՝

Պէտք է Որդալինդ անունը գըրեմ,

Եւ ամեն նորանց, որ կարդալ գիտեն՝

Պէտք է անդադար ես մըտաբերեմ,

Որ հաւաքել է երկինքը նըա մէջ

Ամենայն հրապուր և վայելչութիւն,

Եւ հրամայել է երկինքը բնութեան՝

Խմբել մէկ մարմնում ամեն քնքութիւն

Եւ յամեն շնորհքներն՝ որ սկութած են այս

Յամժամ բնութիւնը զատեց ու փնջեց պյուսակ

Էակի մէջ այն

Հելէնի թուշը, բայց ոչ թէ սիրտը,

Կլէոպատրակի շքեղութիւնը,

Ստալանտայի չքնաղ հրապուրքը,

Խեղճ Լուկրեցիայի համեստութիւնը:

Սյամէս Որդալինդ պէս պէս մասերից՝

Երկնի սինոգով ձեակերպուեցաւ,

Տարբեր տչքերից, դէմքից, սրտերից՝

Ամենաքնքոյշ գծերն ըստացաւ:

Տայ երկինք, որ նա մընայ միշտ ալսպէս՝

Չքնաղ ու սիրուն,

Եւ ես յաւիտեան ապրիմ և մեռնիմ:

Գերի իր սիրուն:

ՈՌՋԱԼՀԻՆԴ

0-, բարերար Արամազդ, ալդ ինչ ձանձրալի սիրալին
քարոզով քո ժողովրդիդ գլուխը տանում ես, և չես էլ առւմ.
«համբերութիւն ունեցէք, օրհնեալ ժողովուրդ»:

սխածալ մազցո չենինսուր ցի գմանն
ՍԵԼԻՇԱ Այդ պղմանը մէ նուռա
ԱՌ, ալդ դուք էք. քաշուեցէք, պարոններ: —Հովիւ,
Հեռացիր մի քիչ. դու էլ, խենթուկ, գնա նորտ հետ:

ФОРМАТИВ

Եկ, հովիւ, եկ, պատուաւոր կերպով նահանջենք, եթէ
ոչ սարք ու կարգով գոնէ պարկ ու պուրկով։
(Փոքարար և Քորին յուրա են գնում):

Whill

Любопытныи птицы народов:

ՕՀՈ-ԳԱՎԱԻՆԴ

Այս, բոլորը լսեցի, և մի քան էլ աւելի. որովհետեւ նորանցից մի քանիսը աւելի ոտքեր ունին, քան թէ ոտանաւոր կարող է տանել:

WbLhu

Հոգ է, ոտքերը կը տանին ոտանաւորները:

ՕՐԱԳՈՎՈՐԾ

Բայց ոտքերը կաղ էին, և իրանք իրանց չէին կարողանում տանել, ուր մնաց ոտանաւորները տանին, և այդպատճառով նրանք կաղի ալէս կանգնել մնացել էին ոտանաւորների մէջ:

ՄԵՂԱԿԱՆ

Բայց, իրաւ, չես զարմանում, որ այսպէս ամեն ծառերի վերալ քո անունդ կախուած կամ փորսագրուած է:

ԹՐԱՎԱԼԻՒՐ

Ի՞նչպէս չէ. դու գեռ չեկած՝ զարմացքը ինձ տարել էր. որովհետև տես ինչ եմ գտել մի մայրի ծառի վերալ. երբէք իմ անունիս վրայ այնքան ոտանաւոր չէ շնուած Պիւթագորասի ժամանակից սկսեալ, երբ ես մի իրլանդական մուկ էի,— մի բան, որ ալժմ լաւ չեմ լիշում:

ԳՐԱԴԱՐԱՆ

Արդ Գուշակի թը, թէս ով է գրել այս բոլորը։ Հմայ ինք
մոթեաց ի՞չ զն սաման տողապահ ո՞ւ ծարա՞ և ու ուստա՞
վիճա հմայ իշմացաւ այսու դն ամեռ գիտախաղբան և
միլա Մի տղամարդ։ Այսու ամ ին էի ամաց նախօսաւ ու
քայս և ուսուց պրոց ՍԵԼԻԱ սուս նեղբան և աւիս
Անշուշտ մի տղամարդ, զեռ մի շղթայ էլ կղին, մի
շղթայ, որ մի ժամանակ դու էիր կրում։ Կահ, ինչու ես
գունաթափւում...
ՈՌԶԱԼԻՆԴ ողոջ ու մնայ նույն

ԽՆԴՐԵՄ ասա՞ , ով է

Աստուած իմ, Աստուած. ասում են որ գժուար բան է,
որ սիրահարները իրարուհանդիպին։ Բայց կարող ունէ վինել,
որ լեռները իրանց տեղից շարժուին երկրաշարժնվ։ և այդ
պիսով հանդիպին միմեանց։

ԹԵՂԱԼԻՒԹ

የተኞች ስዕራ, የመንግስት ተደርጓል

UvLhu

ՈՐՉԱՀԻՆԴ

Հաւ, յաւ. Հիմա ս

Հայ, լաւ։ Կրսա աղաչուսա սս քսկ, պաղատաւս սս,
ասս, սի է։

ՍԵԼԻԱ ազ. 16) ընդունված մէջքներ

Օ՛, զարմանալի է, զարմանալի, և ամենազարմանալի կերպով զարմանալի, և գորանցից յետոյ՝ ամեն բացառաշութիւնից բարձր զարմանալի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Վայ ինձ. ուրեմն կաթուամ ես, որովհետեւ տղամարդու հագուստ եմ հագած՝ որ բնաւորութեանս մէջ էլ բաճկոն և անդրավարտիք ունիմ. մի ըսպէ ուշացնելով՝ ինձ աւելի ես տանջում, քան թէ մի նաւագնացութիւն հարաւային ծովում։ Խնդրեմ ասա, ովէալն զրողը, շուտ, և արագ խօսիր. երանի թէ լեզուդ թոթով լինէր, որ այդ թաքցը-ըած մարդու անունը բերնիցդ դուրս թռչէր՝ ինչպէս գի-նին դուրս է ժայթում մի նեղ բերանով սրուակից—կամ շատ, կամ ոչինչ։ Խնդրեմ բերնիդ խցանը հանիր, որ կարո-ղանամ խմել քո լրերը։

ՍԵԼԻԱ ՅԱ ԽԱ ՇԱՄԱ ՀԱՅՈ ՏԵՎՈՒ

Այդ կերպով դու մի ամբողջ մարդ կուլ կը տաս:

ՈՉԱԼԻՒԴ

ՍԵԼԻԱ ամանենին միջոյրան իրավունք

ՍԵԼԻԱ

Երաւ, մի քիչ էլ մօրուք ունի:

جیلے تاریخیں جنہیں جو

Լաւ է, Աստուած էլ աւելի կը տայ՝ եթէ մարդը երախ-
տագէտ լինի. վնաս չունի, ես կ'ընդունեմ սպասել մինչև մօ-
րուքը երկարանալ, միայն թէ դու չ'ուշացնես նորա կզակի
նկարագրութիւնը:

לענין מילוי החלטה זו, נקבעו מועד ומקום מפגשם.

Երիտասարդ Օրլանդօն է. նա, որ մէկ հարուածով թէ
քմբշին տապայեց, թէ քո սիրտը:

մատուցածնեա մ ԾՈՉԱԼԻՆԴ ։ Ելամանզոր ։ 0
-մար ԳԵՂ, կատակը մնայ. Խօսիր լուրջ լօնքերով և որպէս
անկեղծ աղջիկ։

ԳՐԱԴԱՐԱՆ

0 **ρλωντόν**

ԱՆԴՐԱՎՐԱՐՈՒԹՅՈՒՆ անձունականացնելու գործընթացը

ՕՐԼԱՆԴՈՆ

ՌՈԴԱԼԻՆԴ

Վայ իմ գլխիս, հիմա այս բաճկոնն ու անդրավարտիքն ինչ անեմ:—Նա ինչ էր անում, երբ որ նրան տեսար. ինչ ասաց քեզ. ինչպէս էր դէմքը. ուր գնաց. ինչ է անում ալստեղ. հարցըց իմ մասին. որտեղ է կենում. ինչպէս բաժանուեց քեզանից, և երբ էք նորից տեսնուելու. դէ՛հ, շուտ արա, պատասխանիր ինձ մէկ բառով:

Պէտք է առաջ ինձ համար փոխ առնես Գալգանտուալի բերանը. այդ քո ուզած բառդ շատ մեծ է այս դարու բերանների համար։ Այդ քո ասած բոլոր բաներին լոկ «այո» կամ «ոչ» ասելը աւելի երկար կը լինի՝ քան թէ պատասխանել բոլոր քրիստոնէական վարդապետութեան։

ՈՌԶԱԼԻՆԴԻ
Բայց դու այն ասա, նա գիտէ որ ես ալս անտառումն եմ, այն էլ տղամարդու հագուստով. դարձեալ ալիսէս կայտառ և զուարթ է, ինչպէս այն ըմբշամարտելու օրը:

Աւելի գիւղին է հաշուել հիւլեները, քան թէ լուծել
մի սիրուհու խնդիրները։ Թէ՛հ, լաւ է, թող պատմեմ քեզ
թէ ինչպէս գտայ նրան, և մի քիչ բերանդ քաղցրացնեմ։
դու էլ երկեւզածութեամբ ճաշակեր։ Ես նրան գտայ մի
ծառի տակ, որպէս մի վայրի կաղին ծառից ցած ընկած։

ՈՌԶԱԼԻՒԴԻ

Այն ծառը, որ ալդ տեսակ միտուղի տալ՝ նրան պէտք է
կոչել Արամազդի ծառ:

ՍԵԼԻԱՆ

Բարեհաճեցէք ունկնդրութիւն շնորհել ինձ, ազնիւ
օրիորդ:

ՈՌԶԱԼԻՒԴԻ

Շաբունակիր:

Ագիսախաղը այս մասյածուց ուր անմիշ այսուհետ նի ընկ է
այսունիւ մասը որ զգ մասն չէ չոչ ամ — նիմա չո՞յն
նրան Ալնտեղ նա պառկած էր, ձիգ-ձիգ տարածուած, որդ
պէս մի վիրաւորուած ասպետ:

ՍԵԼԻԱՆ

Թէև ցաւալի է հանդիսատես լինել ալդ տեսակ տեսա-
րանի՝ բայց դա շատ յարմար է գալիս շրջակալ դաշտերին:

ՍԵԼԻԱՆ

Ա՛խ, ալդ լեզուիդ մէկ կապ դիր, խնդրեմ. շատ ան-
ժամանակ է թուչկոտում: Նա որսորդական հագուստ էր
հագած:

ՕՌԶԱԼԻՒԴԻ

Օ՛հ, չարագուշակ նշան. երեխ նա գալիս է իմ սիրառ
սպանելու:

ՍԵԼԻԱՆ

Ես ուզում եմ թողնես իմ երգս երգեմ, առանց քո
կրկներգիդ. գու ինձ եղանակից դուրս ես հանում:

ՕՌԶԱԼԻՒԴԻ

Միթէ չը գիտես, որ ես կինարմատ եմ: Հէնց որ խոր-
հիմ պէտք է խօսիմ: Դէհ, պատմիր, անուշիկս:

(Մտնում են Օրդանդ ու Ժար,)

ՍԵԼԻԱՆ

Դու բերնիս խօսքը ինձ մոռացնում ես: Սուս, այս
հէնց նա ինքը չէ:

ՕՌԶԱԼԻՒԴԻ

Նա ինքն է. եկ թագ կենանք ալստեղ, և գաղտուկ
նայենք:

(Սեփա եւ Ռոզալինդ Թագնում են):
ԺԱՐ

Շնորհակալ եմ ձեր ընկերութիւնից. բայց եթէ ճիշդն
ասեմ աւելի ուրախ կը լինէի, որ ինձ մինակ թողնէիք:

ՕՐԼԱՆԴԻ

Նոյնպէս և ես. բայց գարձեալ, քաղաքավարութիւնը
պահելու համար՝ նոյնպէս ես շնորհակալ եմ ձեր ընկերու-
թիւնից:

ԺԱՐ

Տէր ընդ ձեզ. որքան կարելի է քիչ տեսնուինք:

ՕՐԼԱՆԴԻ

Ես սրտանց փափաքում եմ, որ բոլորովին օտարական
լինինք միմեանց հետ:

ԺԱՐ

Ես իննդրում եմ, էլ այսուհետ չը փչացնէք մեր ծառերը,
սիրային երգեր փորելով նորանց վերալ:

ՕՐԼԱՆԴԻ

Ես էլ իննդրում եմ, որ էլ այսուհետ չը փչացնէք իմ
քերթուածները, անշնորհք կերպով կարդալով:

ԺԱՐ

Ձեր սիրուհու անունը Ռոզալինդ է:

ՕՐԼԱՆԴՈ

Արա Ալեքս: ուն հրամանան հմի զգառի սիմդի ար
ԺԱՔ: ոչ զգմի ամ զմի?

Ինձ դիւր չէ գալիս այդ անունը:

Վասոյաբ և ցամար ՕՐԼԱՆԴՈ
Ոչ ոքի մտքից չէր անց կենում, որ դա պէտք է ձեզ
դիւր գայ, երբ որ նրան մկրտում էին:

ԺԱՔ

Ի՞նչպիսի հասակ ունի:

ՕՐԼԱՆԴՈ

Ճիշդ այնչափ բարձր՝ որչափ իմ սիրտս:
ԺԱՔ
Դու լցուած ես սիրուն պատասխաններով: Զը լինի թէ
դու ծանօթ ես եղած ոսկերիչների կանանց հետ, և այդ
բաները մատանիների վերայից ես սովորել:

ՕՐԼԱՆԴՈ

Ոչ, այդպէս չէ. այլ ես ձեզ պատասխանում եմ մի և
նոյն ներկած կտաւից, որտեղից դուք սովորել էք ձեր հար-
ցումները:

ԺԱՔ

Դու միա աշխոնդ սրամտութիւն ունիս: Մտածում եմ
պէտք է Ատալանտալիքարշապարներից շինուած լինիդա:
Եկ, նստինք գետին, և բարբարինք մեր տիրուհու, աշ-
խարհի, և մեր բոլոր թշուառութեան դէմ:

ՕՐԼԱՆԴՈ

Ես աշխարհիս ոչ մի շնչաւորի դէմ տրտունջ չունիմ,
բացի միայն իմ դէմ, և ինքս իմ մէջ շատ պակասութիւն-
ներ եմ ճանաչում:

Նորութ չի բառ չմի ամ ժամանքը ոյս և ամի
Գո ունեցած ամենավատ պակասութիւնը հէնց այն է,
որ սիրահարուած ես:

ՕՐԼԱՆԴՈ

Այդ մի պակասութիւն է՝ որ ես չէի փոխիլ քո ամե-
նալաւ առաքինութեան հետ: Գլուխս տանում ես:

ԺԱՔ

Ես իմ հոգիս, ես մի գիտ էի որոնում երբ որ քեզ
դտայ:

ՕՐԼԱՆԴՈ

Գո որոնածդ առուի մէջ խեղդուել է. նալիր այնտեղ,
և դու կը տեսնես նրան:

ԺԱՔ

Առուի մէջ ես իմ պատկերը կը տեսնեմ:

ՕՐԼԱՆԴՈ

Որը, իմ կարծիքով, կամ գիտ է, կամ զերօ:

ԺԱՔ

Բաւական է, որքան ժամանակ շռալեցի քո հետ:
Մնաս բարով, բարի պարոն Սէր:

ՕՐԼԱՆԴՈ

Ես ուրախ եմ, որ գնում ես: Գնաս բարով, պարոն
Մելամաղձութիւն:
(Ճար դուրս է գնում. Սելիա եւ Ռոզալինդ առաջ են գալիս)

ՈՂՋԱԼԻՆԴ

Ես նորա հետ կը խօսիմ մի երես առած մանկաւիկի

պէս, և այս զգեստով նորա գլխին տես ինչ խաղ կը խաղամ:
— Լսիր, անտառապահ:

ՕՐԼԱՆԴՈ

Ի՞նչ ես ասում:

ՈՂՋԱԼԻՒՆԴ

Ասա՛ խնդրեմ, ժամը քանիսն է:

ՕՐԼԱՆԴՈ

Պէտք է հարցնէք, օրուայ որ ժամանակն է. անտառում ժամացոյց չը կալ:

ՈՂՋԱԼԻՒՆԴ

Ուրեմն այս անտառում ոչ մի ճշմարիտ սիրահար չը կալ. ապա թէ ոչ ամեն րոպէին մի հառաջանք, և ամեն ժամին մի հեծեծանք՝ աւելի լաւ կը նշանակէին ժամանակի դանդաղ ընթացքը՝ քան թէ մի ժամացոյց:

ՕՐԼԱՆԴՈ

Եւ ինչու ոչ ժամանակի արագ ընթացքը. միթէ այդ աւելի լարմար չէր լինի:

ՈՂՋԱԼԻՒՆԴ

Ամենափն, պարոն. ժամանակը քայլում է զանազան արագութեամբ զանազան մարդկանց համար. ես ձեզ կասեմ, թէ ժամանակը ում համար է քայլում, ում համար է տրոտ գնում, ում համար է արշաւում, ում համար է կանգնած:

ՕՐԼԱՆԴՈ

Ասացէք խնդրեմ. ում համար է տրոտ գնում:

ՈՂՋԱԼԻՒՆԴ

Ես իմ հոգիս, տրոտ է գնում, այն էլ շատ տանջող կերպով՝ մի մանկահասակ օրիորդի համար, իր նշանագրու-

թեան օրից մինչև պսակուելու օրը: Եթէ այդ միջոցը միայն եօթն օր էլ լինի՝ ժամանակի ընթացքը այնքան նեղացնող է, որ եօթը տարի է թւռմ:

ՕՐԼԱՆԴՈ

Ում համար է հանգիստ քայլում:

ՈՂՋԱԼԻՒՆԴ

Մի քահանակի համար, որ լատիներէնի հոտ չէ առել, և մի հարուստ մարդու համար, որ լոդացաւ չունի. որովհետեւ մէկը հանգիստ բարձի վերայ քնում է, չունենալով ոչինչ ուսանելու, և միւսը ուրախ զուարթ ապրում է, որովհետեւ ցաւ չէ զգում. մէկը ազատ է հալումաշ անող ուսման բեռից, միւսը չը գիտէ չքաւորութեան ծանր և տաղտկալի բեռը: Սոցա համար ժամանակը հանգիստ է քայլում:

ՕՐԼԱՆԴՈ

Ում համար է արշաւում:

ՈՂՋԱԼԻՒՆԴ

Մի գողի համար, որին տանում են կշիելու. թէ ժամանակը այնչափ դանդաղ է քայլում, որչափ որ ոտքը դանդաղ է շարժում՝ այնու ամենայնիւ նա մտածում է, որ խիստ շուտ տեղ հասաւ:

ՕՐԼԱՆԴՈ

Ում համար է կանգնած:

ՈՂՋԱԼԻՒՆԴ

Փաստաբանների համար, այն օրից, երբ դատարանը փակւում է՝ մինչև այն օրը, որ բացւում է. այդ բոլոր ժամանակը նոքա չեն նկատում, որ ժամանակը շարժում է:

ՕՐԼԱՆԴՈ

Ուրեղ էք ընակւում, սիրուն պատանի:

մասին պարզվել բայ ժիշտ ՈւռչԱԼԻՒՆԴար աշխան ըստո մասենց
քութափում մասմաս պարզութան մասմասնաւուն վեհական ու ու մեծուն
Այս հովուուհու մօտ, որ եմ քոլբս է. այստեղ անտառի
եզերքում, որպէս հաշիս եռուպկացի համար:

ՕՐԼԱՎԴՈ

Ալստեղազի՞ էք դուք:

ԹՐԱՎԱԼԻՒԹ

Այս շեշտը քիչ աւելի նույր է, քան կարող էիք ստա-
նալ այսպիսի առանձնացած մի բնակավայրում:

ՕՐՈՅԱՆԻՒՅԴ

Նատ մարդիկ են արել ինձ այդ գիտողութիւնը. բայց
բանը նորանում է, որ մի ծեր բարեպաշտ հօրեղբայր ունեի,
որ ինձ սովորեցրեց խօսել. նա իր երիտասարդութեան ժամա-
նակ ապրած է եղել քաղաքում. մի մարդ էր, որ կանանց
հետ սիրաքստիկ անել շատ լաւ գիտէր, և այնտեղ մի սի-
րահարութիւն է ունեցել: Նա ինձ շատ քարոզներ էր կար-
դում սիրահարութեան դէմ, և ես շնորհակալ եմ Աստծուց,
որ կին չեմ ծնուել և ազատ եմ մնացել այնքան խենթ ու
խելառ պակասութիւններից, որ նա գնում էր ամբողջ նոցա
սեռի գլխին:

ՕՐԱԿԱՐՈ

Կարսղ էք լիշել այդ գլխաւոր պակասութիւններեց մի քանիսը։

Գլխաւոր չը կար, բոլորը միմեանց նման էին՝ ինչպէս երկու խնձոր միջից կիսած։ ալդ յանցանքներից ամեն մէկը

ինքն ըստ ինքեան հրէշաւոր էր երեսում, մինչև որ մի նոր ընկերակիցը դուրս էր գալիս և նորա հետ զոյտ էր կազմում:

ՕՐԼԱՆԴԸ

Խնդրեմ, սկառմեցէք դորանցից մի քանիսը

ԹԵՐԱՎԱՐԻ

Ես զուր տեղ չեմ վատնի իմ գեղերս, այլ միայն հիւանդներին կը տամ: Մի մարդ կայ, որ այս անտառի մէջ թափառում է, որ փշացնում է մեր մատղաշ ծառերը, քանդակելով Ոոզալինդ անունը նոցա կեղեկի վերայ. կախ է տալիս երգեր թուփերի վերայ, և ողբերգութիւններ մացառների վերայ, բոլորը՝ Ոոզալինդի անունը աստուածացնելու համար: Եթէ Հանդիպէի այդ դատարկապորտին՝ ես նորան մի լաւ խորհուրդ կը տալիք. որովհետեւ ինձ այնպէս է թըւում, որ նա սիրալին գերմ ու տենդ ունի:

ՕՐԼԱՆԴՈ

Ես եմ ալդ սիրուց հիւանդ մարդը. խնդրեմ, ասացէք
ինձ ձեր դեղը:

ՌՈԶԱԼԻՆԸ

Իմ հօրեղբօր ասած նշաններից ոչ մէկը ձեր վերալ
չը կայ. նա ինձ սովորացրել է ճանաչել սիրուց տանջուած
մարդուն, և ես վստահ եմ, որ գուք նորա կնիւնէ վանդա-
կի մէջ չէք ընկած:

ՕՐԼԱՆԴՈ

ՈՐՈՇՆՔ ԷՒԽ այդ նշանները:

ԹՐԱՎԱԼԻՆԴ

Նիշար թուշ, որ գուք չունիք. կապոյտ և փոս
ընկած աչք, որ գուք չունիք. մոալյոտ տրամադրութիւն,

որի հետ խօսել չէ կարելի, այդ էլ դուք չունիք. թափ-թռփած մօրուք, որ դուք չունիք: Բայց ասենք, որ այդ մէկը ես ձեզ ներում եմ. որովհետև կրտսեր եղբօր բաժինը, իբրև մօրուք՝ հէնց այդքան կը լինի:—Ձետով, ձեր գուշան պէտք է անկատ լինի, ձեր գլխարկը անժամաւէն, ձեր զգեստը անկոճակ, կօշիկների թելերն արձակած, և ամեն բան ձեր վերայ անհոգ աւերմունքի յայտարար: Բայց դուք այդ տեսակ մարդ չէք. դուք ձեր հագուստների մէջ կարելի է ասել մինչև անդամ շքեղ էք, և կարծես դուք աւելի ձեզ էք սիրահարուած, քան թէ ուրիշի:

ՕՐՀԱՆԴՈ

Սիրուն պատանի, երանի թէ կարողանալի ձեզ հաւատացնել, որ ես իրաւ սիրում եմ:

ՈՂՋԱԼԻՆԴ

Ի՞նձ հաւատացնէք այդ. դուք աւելի շուտ կարող էք հաւատացնել այդ ձեր սիրականին, որը, խօսք եմ տալիս ձեզ, աւելի ընդունակ է ձեզ հաւատալու, քան թէ խոստովանուելու՝ որ հաւատում է. այդ էլ մէկն է այն կէտերից, որոնց մէջ կանալք խարում են իրանց խիղճը: Բայց եկէք և ճիշդն ասացէք, իրաւ դուք էք այն մարդը, որ ոտանաւորներ է կախ տալիս ծառերի վերայ, որոնց մէջ Ռոզալինդը այնպէս գովաբանուած է:

ՕՐՀԱՆԴՈ

Երդւում եմ ձեզ, պատանի, Ռոզալինդի սպիտակ ձեռքով, որ ես եմ այդ մարդը, այդ դժբախտ մարդը:

ՈՂՋԱԼԻՆԴ

Բայց իրաւ այնչափ սիրահարուած էք, որչափ ձեր թռփածները խօսում են:

Ո՞չ օրհանդած, ո՞չ արձակ չեն կարող լայտնել, թէ ո՞ր-չափ:

ՈՂՋԱԼԻՆԴ

Սէրը մի սոսկ հիւանդութիւն է, և ասեմ ձեզ, նոյն-չափ արժանի մութ բանդի և խարազանի՝ որչափ խեն-թերը. և պատճառը թէ ինչու նրանց այդ կերպով չեն պատժում և բժշկում, այն է, որ այդ լուսնոտութիւնը այն-քան սովորական է, որ գանակոծողներն իրանք էլ վարա-կուած են այդ ախտով: Այսու ամենայնիւ ես խօսք եմ տա-լիս, որ կարող եմ խորհուրդներով բժշկել այդ ախտը:

ՕՐՀԱՆԴՈ

Երբ և իցէ մէկին այդ ձեռք բժշկել էք:

ՈՂՋԱԼԻՆԴ

Այն, մէկին, և այս կերպով: Ես նորան ասացի, որ ինձ երեակալէ որպէս իր սիրուհին, իր տիրուհին, և ամեն օր ինձ հետ սիրահարութիւն անէ. միւս կողմից, ես ինքս լի-նելով լուսնի պէս փոփոխական մի պատանի՝ տրտմում էի, կանացի էի գառնում, յեղեղուկ, ցանկացող, սիրող, հպարտ, քմահաճ, կապկալին, թեթեսոլիկ, յողդողդ, լի արցունքնե-րով, լի ժպիտներով, ձեւացնելով ամեն կերպ, բայց իսկա-պէս ոչ մի կիրք չը զգալով, ինչպէս տղերքն ու աղջկերքը մեծ մասամբ այդ սանտրի կտաւ են: Երբեմն նրան սիրում էի, երբեմն զզւում էի նորանից. յետոյ սիրտը շահում էի, յետոյ երդւում էի՝ որ մէկ էլ նորա երեսին չեմ նայելու. մէկ՝ նորա համար լալիս էի, մէկ՝ թքում նորա վերայ: Վեր-ջապէս այնքան արեցի, որ իմ սիրահարիս քարշ տուեցի սի-րային խենթ տրամադրութիւնից դէպի ճշմարիտ խենթու-թեան տրամադրութիւնն, այն է ճգել հեռանալ աշխարհի մեծ հոսանքից, և մի վանական խուցի մէջ ապրել: Այսպէս ես նրան բժշկեցի, և ճիշդ այսպէս ես յանձն եմ առնում

լուանալ ձեր լեարդը այնպէս մաքուր, որպէս առողջ ոչ
խարի սիրաբ, որ սիրոյ մի բիծ անգամ հետք չը մնալ:

ՕՐԼԱՆԴՈ

Բայց ես չեմ կամենում բժշկուել, պատանի:
ՈՌԶԱԼԻՒՆԴ
Ես ձեզ կը բժշկեմ, միայն թէ դուք ինձ Ոռոգալինդ
կանչեք, և ամեն օր գաք իմ խրճիթը և սիրաբանէք
ինձ հետ:

ՕՐԼԱՆԴՈ

Լաւ, ես երդուում եմ իմ սիրուս վերալ, ես կը գամ-
ասացէք, որտեղ է ձեր խրճիթը:

ՈՌԶԱԼԻՒՆԴ

Եկէք ինձ հետ, և ես ցոյց կը տամ ձեզ: Բայց լաւ-
միտս եկաւ, դուք պէտք է ինձ ասէք՝ թէ ինքներդ անտա-
ռի որտեղումն էք բնակլում: Գալի՞ս էք:

ՕՐԼԱՆԴՈ

Ամենալն յօժարութեամբ, բարեսիրտ պատանի:

ՈՌԶԱԼԻՒՆԴ

Չեղաւ. դուք ինձ պէտք է Ոռոգալինդ կանչեք: — Ե՛կ,
քոյլիկ, չես գալիս գնանք: (Դուրս են գնում):

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Մտնում են ՓՈՐՁԱՔԱՐ և Ա.ՈՒԴՐԻՒ, ԺԱ.Բ, Հեռուից ՆՐԱՆԳ
դիմուլով:

ՓՈՐՁԱՔԱՐ

Եուտ եկ, սիրելի Առողջը. Ես կը գնամ ալծերդ կը բե-
րեմ, Առողջի: Դէհ, ասա, ինչպէս եմ, Առողջի, սրտիդ ու-
ղած մարդն եմ թէ ոչ. իմ պարզ կերպարանքից գոհ ես:

ԱՌԻԴՐԻ

Քո կերպարանքից. Աստուած ազատէ. ինչ կերպարանք:
ՓՈՐՁԱՔԱՐ

Ես այստեղ եմ, քեզ և քո ալծերիդ հետ՝ ինչպէս ա-
մենից քմահաճոյ բանաստեղծը, պարկեշտ Օվիդը՝ Գոթե-
րի հետ:

ԺԱ.Բ (առանձին)

Օհ, իմաստութիւն վատ բնակուած, աւելի վատ քան
Արամազդը մի լարդածածկ տան մէջ:

ՓՈՐՁԱՔԱՐ

Երբ որ մի մարդու ոտանաւորները չեն հասկացւում,
կամ մի մարդու սրախօսութեանը օգնութեան չէ հասնում
այն վաղահաս երեխան, Խմացականութիւնը՝ ալդ բանը մար-
դուս աւելի մահացու հարուած է տալիս, քան մի մեծ
հաշիւ մի փոքրիկ հաշուեթղթի մէջ: Ալո՛, ես կը ցան-
կալի, որ աստուածները քեզ բանաստեղծական ստեղծէին:

ԱՌԻԴՐԻ

Ես չը դիտեմ բանաստեղծական ասած բանը ինչ է.
պարկեշտ բան է խօսքով և գործով. մի ճշմարիտ բան է:

ՓՈՐՉԱՔԱՐ

Իրաւն ասեմ՝ ոչ, որովհետև ամենից ճշմարիտ բանաստեղծութիւնը ամենից կեղծն է, և սիրահարները անձնատուր են լինում բանաստեղծութեան, և ինչ որ նոքա երդում են բանաստեղծութեամբ, կարելի է ասել որպէս սիրահար՝ նոքա կեղծում են:

ԱՌԻԴՐԻ

Դորահ համար էիր ուզում, որ աստուածները ինձ բանաստեղծական շինած լինէին:

ՓՈՐՉԱՔԱՐԱՐ

Իսկապէս, ես այդ եմ ուզում. որովհետև դու ինձ երդում ես, որ առաքինի ես. լաւ, եթէ դու բանաստեղծ լինէիր՝ ես կարող էի մի քիչ լոյս ունենալ, որ դու սուտ ես ասում:

ԱՌԻԴՐԻ

Չես ուզում ուրեմն, որ ես առաքինի լինիմ:

ՓՈՐՉԱՔԱՐ

Ոչ, իրաւ, միայն: թէ շատ տգեղ լինէիր. որովհետև առաքինութիւնը երբ միանում է գեղեցկութեան հետ՝ նոյն բանն է՝ ինչ որ մեղը շաքարի հետ խառնած:

ԺԱՅ

Բանիմաց նիւթաւոր մի խենթ է սա:

ԱՌԻԴՐԻ

Լաւ, ես սիրուն չեմ, ուրեմն խնդրում եմ աստուածներից, որ ինձ առաքինի դարձնեն:

ՓՈՐՉԱՔԱՐ

Լաւ, բայց առաքինութիւնը դուրս ձգել մի տգեղ կեղ-

տոտ կնոջ վերայ՝ նոյն բանը կը լինէր, ինչպէս համեղ կերակուրը աղտեղի ամանի մէջ դնելը:

ԱՌԻԴՐԻ

Ես կեղտոտ կին չեմ, թէև շնորհակալ եմ աստուածներից՝ որ տգեղ եմ:

ՓՈՐՉԱՔԱՐ

Լաւ, փառք տուր աստուածներին քո տգեղութեան համար. կեղտոտութիւնն էլ յետոյ կը գայ: Բայց ինչ կուզէ՝ թող լինի, ես քեզ հետ պէտք է ամուսնանամ, և այդ նպատակով ես տեսել եմ Սըր Օլիվիէ Մար-Տեկստին, մերձակայ գիւղի փոխերեցին, որ խոստացել է գալ ինձ մօտ անտառի այս տեղը և մեզ պատկել:

ԺԱՅ (առանձին)

Կուզէի հանդիսատես լինել այդ տեսակցութեան:

ԱՌԻԴՐԻ

Լաւ, աստուածները քեզ ուրախութիւն տան:

ՓՈՐՉԱՔԱՐ

Ամէն. մարդ եթէ երկչոտ սիրտ ունենայ՝ կարելի է կը վարանուի այս փորձի առաջ. որովհետև այստեղ ոչ մի տաճար չունինք բացի անտառից, և ոչ վկայ՝ բայց եղջերաւոր անասուններից. բայց ինչ վնաս. սիրտ պինդ պահիր. թէև եղջիւրները ատելի են՝ այնու ամենայնիւ հարկաւոր են: Առակ է, թէ շատ մարդիկ իրանց ունեցած բարիքների օգուտը չը գիտեն. Ճիշդ է, շատ մարդիկ լաւ եղջիւրներ ունին, և չը գիտեն նոցա օգուտը: Վահ, գա իրանց կնոջ օժիտն է. իրանք հօ չեն շահել: Եղջիւրներ, այն: Միայն խեղճ մարդկանց համար:—Ոչ, ոչ. ամենապնիւ եղնիկն ունի նոյնչափ ահագին եղջիւրներ, որչափ ամենափատը: Ուրեմն երջանիկ է ամուրի մարդը: Ոչ, ինչպէս պատնիշապատ քաղաքն աւելի փառահեղ է քան գիւղ՝

նոյնպէս ամուսնացած մարդու ճակատը տւելի պատուաւոր է, քան ամուրիի մերկ ճակատը, և որքան որ պաշտպանութիւնը աւելի լաւ է անճարտար շէնքից՝ նոյնքան էլ աւելի լաւ է եղջեւը ունենալը, քան թէ չունենալը:

(Գալիս է Սըր Օլիվիէ Մար-Տեկստ)

Ահա Սըր Օլիվիէն:—Բարե ձեզ, Սըր Օլիվիէ Մար-Տեկստ, բարով էք եկել. հիմա կարող էք մեզ պսակել ախտեղ, հէնց այս ծառի տակ, թէ պէտք է գանք ձեր մատուռը:

ՍՀՐ ՕԼԻՎԻՀԻԼ

Ալստեղ ոչ ոք չը կայ, որ հարսը լանձնէ փեսային:
ՓՈՐՉԱՔԱՐ

Ես չեմ առնիլ նրան որպէս ընծալ ուրիշի ձեռքից:

ՍՀՐ ՕԼԻՎԻՀԻԼ

Բայց կարգն ալնպէս է, որ մի մարդ պէտք է լանձնէ հարսը փեսային, եթէ ոչ ամուսնութիւնը օրինաւոր չի լինի:

ԺԱՅ (դուրս դարս)

Սկսեցէք, սկսեցէք. Ես կը լանձնեմ նրան:

ՓՈՐՉԱՔԱՐ

Ա՛յ, բարի իրիկուն, ազնիւ պարոն այս ինչ. ինչպէս էք, պարոն. բարով, հազար բարի: Աստուած ձեզ վարձ տայ ձեր այս ընկերակցութեան համար, շատ ուրախ եմ ձեզ տեսնելով (ցոյց տալով ժարի զիսարկը):—Ինչո՞ւ էք այս խաղալիքը ձեր ձեռքումը բռնել. ոչ, ինդիեմ, դրէք ձեր գլխարկը:

ԺԱՅ

Ուրեմն ուզո՞ւմ ես ամուսնանալ, խալտաճամուկ:

ՓՈՐՉԱՔԱՐ

Ինչպէս որ եզն ունի իր լուծը, այ պարոն, ձին՝ իր երասանակը, բազէն՝ իր զանգակները՝ նոյնպէս մարդն ունի

իր ցանկութիւնները. և ինչպէս աղաւնիները կտուցի են տալիս՝ նոյնպէս ամուսնները սիրում են իրար փաթաթուել:

(Համբ 1 այսու)

ԺԱՅ

Ամօթ չէ քեզ պէս կրթուած մի մարդու համար, որ մի թուփի տակ ամուսնանաս, մուրացկանի նման: Գնա եկեղեցի, մի լաւ քահանայ գտիր, որ կարողանայ գոնէ քեզ ասել, թէ ամուսնութիւնը ինչ բան է. այս մարդը ձեզ այնպէս իրար կը կցէ՝ ինչպէս տախտակները կցում են միմեանց. մէկ էլ տեսար՝ ձեզնից մէկը դուրս կը գայ մի կծկուած տախտակ, և ամեն թաց փայտի նման կը ծռուի ու կը ծըռուի:

ՓՈՐՉԱՔԱՐ (մի կողմը)

Իմ խելքս այնպէս է կտրում, որ հէնց սորա ձեռքով ամուսնանալս աւելի լաւ է քան թէ ուրիշի ձեռքով. որովհետեւ սա որ կայ, ինչպէս երկում է, չէ կարող մեզ լաւ պսակել, և լաւ պսակուած չը լինելը իմ ձեռքում մի լաւ պատրուակ կը լինի, որ լետոյ կնկանիցս բաժանուիմ:

ԺԱՅ

Պու եկ ինձ հետ, ես քեզ մի լաւ խորհուրդ կը տամ:

ՓՈՐՉԱՔԱՐ

Ե'կ, իմ անուշ Առողջի, կամ պէտք է պսակուինք, կամ անառակութեամբ ապլինք:—Դէհ, մնաս բարով, ազնիւ Սըր Օլիվիէ:

Ոչ թէ (երգում է) «Ո՞վ անոյշ Օլիվիէ,

Ով իմ քաջ Օլիվիէ,

ինձ ետեւ մի՛ թողնիր»:

Բայց զնա հեռացի՛ր.

Ոչ, ես էլ չեմ զալու

Քո ձեռքով պսակուելու:

ՍԼՐ ՕՀԻԱՀԻԵ¹ Հոգածածինալմանը ոյ
Հոգս չէ. այս բոլոր փոփոխամիտ սրիկաներից ոչ մէկը
չէ կարող անպատռել իմ պաշտօնս:

(Դուքս է գնում):

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Նոյն տեղը մի խրճիթի առաջ:

Մտնում են ՌՈԶԱԼԻՆԴ և ՍԵԼԻԱ:

ՌՈԶԱԼԻՆԴ

Ել մի խօսիր ինձ հետ. ես լաց կը լինիմ:

ՍԵԼԻԱ

Լաց եղիք, խնդրեմ. բայց դարձեալ բարեհաճիր նկատի
առնել, որ արտասուքը տղամարդուն չէ վայելում:

ՌՈԶԱԼԻՆԴ

Լաց չը լինիմ, ինչ անեմ. պատճառ չունիմ լաց լի-
նելու:

ՍԵԼԻԱ

Ալնքան լաւ պատճառ՝ որչափ ուզում ես. ուըեմն լաց
եղիք:

ՌՈԶԱԼԻՆԴ

Նորա մազերն էլ մինչեւ անգամ կեղծաւոր գոյն ունին:

ՍԵԼԻԱ

Քիչ աւելի թուխ են Յուդայի մազերից, ես իմ հոգիս.
Համբոյները հօ իսկ և իսկ Յուդայի զաւակներն են:

ՌՈԶԱԼԻՆԴ

Բայց ճշմարիտը խօսինք, մազերը լաւ գոյն ունին:

ՍԵԼԻԱ

Սքանչելի գոյն. շագանակգոյնը վաղուց քո սիրած
գոյնդ է:

ՌՈԶԱԼԻՆԴ

Եւ նորա համբոյները նոյնչափ լի են սրբութեամբ՝
որչափ սուրբ նշխարի հպատութիւնը:

ՍԵԼԻԱ

Նա Անահիտից գնած կը լինի մի զոյտ շրթունք: Զմեռ-
նալին միաբանութեան կոլսերից ոչ մէկը չէ կարող աւելի
ջերմեռանդութեամբ համբուրել: Զգաստութեան նոյն իսկ
սառուցը նրա համբոյների մէջ է:

ՌՈԶԱԼԻՆԴ

Բայց ինչու երդուեց, որ այս առաւօտ կը գալ, և հի-
մա չէ գալիս:

ՍԵԼԻԱ

Լաւ, տեսնում ես, որ նրա մէջ ճշմարտութիւն ասած
բանը չը կալ:

ՌՈԶԱԼԻՆԴ

Կարծում ես:

ՍԵԼԻԱ

Անպատճառ. ես չեմ ասում, որ նա գրպանահատ է,
ոչ էլ ձիու գող. բայց գալով նորա ճշմարտութեան սիրալին
գործերում կարծեմ նա այնչափ փուք է, որչափ որդնոտած
ընկոյզը, և այնչափ դատարկ, որչափ բերանը ծածկած մի
գաւաթ:

— 100 —

ՈՌԶԱԼԻՒՆԻ

Հիմա դու ասում ես, որ նա սիրոյ մէջ ճշմարիտ չէ:

ՍԵԼԻԱ

Այո, երբ որ նա մէջն է. բայց ես մտածում եմ, որ
նա մէջը չէ:

ՈՌԶԱԼԻՒՆԻ

Դու հօ լսեցիր. նա ինձ երդումներ էր անում հաստա-
տելու համար՝ որ ինձ սիրում էր:

ՍԵԼԻԱ

«Ե՞ր» ուրիշ բան է, «Ճ'» ուրիշ. բացի դորանից, սիրա-
հարի երդումը աւելի ուժեղ չէ, քան գինեվաճառինը. եր-
կուքն էլ երդում են իրանց կեղծ հաշիւները հաստատելու
համար: Նա այստեղ անտառի մէջ է կենում քո հօրդ, դքսի
ծառալութեան մէջ:

ՈՌԶԱԼԻՒՆԻ

Ես երեկ հանդիպեցի դքսին, և շատ ասուլիս արեցինք:
Նա ինձնից հարցրեց, թէ դու ինչ տոհմից ես. ասացի, իմ
տոհմս ձեր տոհմից պակաս չէ. նա ծիծաղեց և ինձ թողեց
գնաց: Բայց ինչո՞ւ խօսինք հայրերի մասին՝ երբ որ Թրլան
դոյլ պէս մի տղամարդ կալ:

ՍԵԼԻԱ

Օ՛չ, նա մի քաջ տղամարդ է, գրում է քաջ ոտանա-
ւորներ, խօսում է քաջ խօսքեր, երդում է քաջ երդում-
ներ, և երդումները բեկանում է քաջութեամբ, ճիշտ իր
սիրուհու սրտի վերալ, ինչպէս մի անփորձ նիզակ խաղա-
ցնող, որ իր ձին միայն մէկ կողմից է խթում և կոտրում է
իր սիզակը քաջ լիմարի պէս. բայց քաջ է ինչ որ երե-

տասարդութիւնը հեծնում է և իւնթութիւնը առաջնոր-
դում է: — Ո՞վ է գալիս այստեղ:

(Մտնում է Քորին)

ՔՈՐԻՆ

Տիրուհի և տէր, դուք լաճախ հարցրել էք
Այն հովուի մասին, որ սիրուց հիւանդ էր,
Որ, ինձ հետ տեսաք մարգի վրայ նստած,
Գովում էր այն գոռոզ և խրոխտ հովուհուն,
Որ իր սիրուհին էր:

ՍԵԼԻԱ

Լաւ, հիմա ի՞նչ կայ:

ՔՈՐԻՆ

Թէ ուզում էք տեսնել մի ճիշդ տեսարան
Որ հանդիսացնում են, բընական խաղով,
Անխարդախ սիրոյ դալկատիպ գոյնը,
Եւ սէգ անարդանքի և քամահրանքի
Կարմրաժառ շողքը՝ տպա եկէք մի քիչ,
Ես ձեզ կ'առաջնորդեմ, եթէ կամք ունիք
Հանդիսատես լինել:

ՈՌԶԱԼԻՒՆԻ

Օ՛չ, եկ, եկ գնանք,
Սիրոյ տեսարանը սնունդ է սիրողին: —
Տար մեզ նըրանց մօտ, և դու կը տեսնես,
Որ ես էլ կը դառնամ մի ժիր գերասան՝
Նոցա խաղի մէջ:

(Դուրս են գնում):

ՏԵՍԱՐԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

(Տեսարանի համար)

Անտառի մի այլ մասը:

Մանուսմ են Սիլվիոս և Ֆեբէ:

— Սիլվիոս
Իմ անուշիկ Ֆեբէ, ինձ մի քամահրեր,
Մի աներ, Ֆեբէ. ասա՝ քեզ չեմ սիրում,

Բայց ոչ դառնութեամբ: Նոյն խոկ դահիճը,
Որ մահուան առօրեայ տեսարաններից
Սիրտը քարացել է՝ չէ զարկում տապարը
Խոնարհած վզին՝ առանց նախապէս
Ներում ինդրելու: Աւելի՞ խիստ ես դու,
Քան նա, որ ապրում է մինչև իր մահը
Արեան կաթիլներով:

(Մանուսմ են Ռողափինդ, Սեփա եւ Քորին մեռուից):

ՓԵԲԼ

Ես չեմ կամենում լինել քո դահիճը.
Ես քեզնից փախչում եմ. քանզի չեմ ուզում
Քեզ տանջանք պատճառել: Դու ինձ ասում ես՝
Քո աչքերիդ մէջ ըսպանութիւն կայ:
Այդ սիրուն է, անշուշտ, շատ էլ հաւանական,
Որ մարդուս աչքերը, որոնցից փափուկ
Եւ նուրբ բան չը կայ, որոնք մէկ հիւլէից
Փակում են իրանց երկչոս դռները՝
Կոչուին բռնակալ, դահիճ, մարդասպան:
Դէհ, հիմա ես բոլոր իմ կարողութեամբ
Խոժոռացնում եմ աչքերս քո վրայ,
Եւ եթէ նոքա կարող են վէրք տալ՝
Թող քեզ ըսպանեն. դէհ, ուշաթափուիր,

Վահ, ցած տապալուիր, եթէ չես կարող՝
Օ, ամօթ, ամօթ, էլ սուտ մի խօսիր,
Ասելով աչքերս մարդասպաններ են:
Դէհ, հիմա ցոյց տուր, որն է այն վէրքը,
Որ իմ աչքերըս գործել են քո մէջ:
Դու քեզ ճանկըռոթիր մի գնդասեղով—
Էլի մի ըսպի կը մընայ այնտեղ,
Մի ըովէ լենուիր եղէգի վրայ—
Թարձեալ մի վալրկեան քո ձեռքիդ ափը
Կը կըէ նորա տապաւորումը
Եւ թողած հետքը. բայց ալժմ աչքերս,
Որ քո վրայ յառել եմ՝ քեզ չեն վնասում,
Ոչ էլ երբէք ոլժ կայ որեկիցէ աչքում,
Որ վնասել կարենայ:

Սիլվիոս

Օհ, սիրելի Ֆեբէ:
Եթէ երբ և իցէ (և ալդ երբ և իցէն
Կարող է մօտ լինել) մի թարմ թշի մէջ
Դու տեսնես դիւթելու կարողութիւնը՝
Յայնժամ կիմանաս այն թաքուն վէրքերը,
Որ սիրոյ նետերը կարող են գործել:

ՓԵԲԼ

Բայց մինչև այն ժամը մի գար դու ինձ մօտ,
Եւ երբ որ հասնի ալդ ժամանակը՝
Դու ինձ չարչարիր քո ծաղրերովըդ,
Եւ ինձ մի գթար, ինչպէս մինչ այն ըովէն
Ես քեզ չեմ զթալու:

ՈՂՋԱԼԻՆԴԻ

Եւ ինչո՞ւ, խնդրեմ,
Քեզ ով է ծնել, որ այսպէս անխընայ
Լուտանք ես թափում թշուառների վրայ

Եւ հրճուանք անում նոցա ցաւերով:
 Եւ մինչև անգամ թէ սիրուն լինիս,
 (Այն էլ, ես իմ հոգիս, չեմ տեսնում քո մէջ
 Առաւել քան այն, որ առանց ճրագի
 Կարող ես մուժը տեղ անկողին մտնել):
 Միթէ տալիս է դա քեզ իրաւունք
 Լինել անողորմ և այդքան գուոզ:
 Վահ, այդ ինչ միտք ունի. ինչո՞ւ ես նախում ինձ:
 Ես քո մէջ չեմ տեսնում աւելի մի բան
 Քան բնութեան հասարակ շուկայի ապրանք:
 Վայ իմ խեղճ կաշուս. կարծես այս կինը
 Իմ էլ աչքերըս ուզում է դիւթել:
 Ոչ, միամիտ կաց, հպարտ օրիորդ,
 Կտրիր այդ լոյսըդ և լաւ իմացիր,
 Ոչ թանաքի գոյն սիրուն յօնքերըդ,
 Ոչ այդ մետաքսեալ սեփ-սե մազերըդ,
 Ոչ էլ թուխ աչքերիդ այդ գնտակները,
 Ոչ կաթի երես այդ թշիկներըդ՝
 Կարող չեն հոգիս այնպէս հմայել՝
 Որ պաշտեմ ես քեզ:—Դու, լիմար հովիւ,
 Ինչո՞ւ ես ընկել սորա ետևից,
 Որպէս միգամած հարաւը՝ փչելով
 Քամի և անձրւե: Ինքդ հազար անգամ՝
 Աւելի լաւ ես, որպէս տղամարդ,
 Քան նա՝ որպէս կին: Զեզ պէս լիմարներն են,
 Որ աշխարհ լցնում են տգեղ զաւակներով:
 Նորա հայելին չէ, ալ դուք էք այդպէս
 Շողոքորթում նրան, և նա ձեր աչքով
 Ինքն իրան տեսնում է աւելի սիրուն,
 Քան իր գծերից որ և է մէկը
 Ցոյց կը տար նըրան:—Իսկ դու, օրիորդ,
 Ճանաչիր դու քեզ: Պէտք է ծնկաչոք
 Եւ ծոմ պահելով փառք տաս Աստուծոյ,

Որ մի լաւ մարդուց այդպէս սիրուած ես:
 Քանզի պէտք է ես բարեկամաբար ու
 Ականջիդ ասեմ. ծախիր՝ երբ տեղն է.
 Դու ամեն շուկալի յարմար ապրանք չես:
 Ներում ինդըրիր մարդուց, և սիրիր նըրան,
 Եւ շուտ ընդունիր նորա առաջարկը:
 Տգեղը բիւր անգամ աւելի տգեղ է՝
 Երբ տգեղ լինելով՝ և ծաղը անող է:
 Պէհ, հովիւ, առ նըրան, և մընաք բարով:

ՓԵԲԷ

Խնդրեմ ինձ կշտամբիր, անոյշ պատանի,
 Ամբողջ մէկ տարի, աւելի քաղցր է ինձ
 Լսել քեզանից յանդիմանութիւն,
 Քան թէ այս մարդուց սիրային խօսքեր:

ՈՂՋԱՀԻՒԴԻ

Այս հովիւը սիրահարուած է այս կնոջ տգեղութեանը,
 և այս կինը կը սիրահարուի իմ բարկութեանը: (Սիլվիոսին)
 Հիմա որ այդպէս է, երբ որ նա քեզ պատասխանէ խոժոռ
 աչքերով՝ ես էլ նրան կը համեմեմ դառն բառերով:—Ին-
 չո՞ւ ես այդպէս նախում ինձ:

ՓԵԲԷ

Ոչ մի չար մտքով:

ՈՂՋԱՀԻՒԴԻ

Խնդրում եմ չը լինի ինձ սիրահարուիս:
 Ես աւելի կեղծ եմ՝ քան արբեցութեան մէջ
 Տըրուած խոստումները: Եւ այդ էլ թողած՝
 Դու ինձ դիւր չես գալիս: Եթէ ուզում ես
 Իմանալ իմ տունը՝ ահա այստեղ է,
 Չիթենիների այն պուրակի մէջ:

— ԶԵՍ գալիս, քոյրիկ: — Հովիւ, դու նըրան
Սաստիկ ստիպիլ: — ԵԿ, գընանք, քոյրիկ:
— Հովւուհի, նորա հետ աւելի լաւ վարուիր,
Եւ հպարտ մի լինիր: Ամբողջ աշխարհը
Եթէ իր աչքը տնկէր քեզ վերայ:
Մէկը չէր լինի, որ այս մարդու չափ
Շըլանար քեզմով: — Դէհ, եկէք գընանք
Մեր հանգրուանը:
(Դուրս են գնում Ռողավոր, Սելիա եւ Քորին):

ՓԵԲԷ

Դու մեռեալ հովիւ,
Հիմա տեսնում եմ խօսքիդ զօրութիւնը,
Երբ ասում էիր. «Ո՞վ երբէք սիրած է,
Եթէ չէ սիրած առաջին ակնարկից»:

ՄԻԼՎԻՌՈՒ

Իմ անոյշ Ֆերէ:

Հա, ինչ է, Միլվիոս:

ՄԻԼՎԻՌՈՒ

Անուշիկ Ֆերէ, գթա ինձ վերայ:

ՓԵԲԷ

Վահ, սիրելի Միլվիոս, տիսուր եմ քեզ համար:

ՄԻԼՎԻՌՈՒ

Ուր տիրութիւն կայ՝ կայ և՝ ըսփոփանք:
Եթէ դու տիսուր ես իմ սիրուս ցաւից,
Տալով ինձ քո սէրը՝ քո ցաւն ու իմ վիշտը
Երկուքն էլ միասին բնաջինջ կը լինին:

ՓԵԲԷ

Դու ունիս իմ սէրս: այդ գթութիւն չէ:
ՍԻԼՎԻՌՈՒ

Ես քեզ եմ ուզում: պրոսով ոյ պ ՓԵԲԷ եկած մզման
Այդ աղահութիւն է:
Միլվիոս, կար ժամանակ, երբ քեզ ատում էի.
Չեմ ուզում ասել՝ որ ալժմ սիրում եմ.

Բայց որ դու կարող ես սիրային լեզուն
Մոյքան լաւ խօսել՝ քո ընկերութիւնը,
Որ առաջ ինձ համար ձանձրացուցիչ էր,
Հիմա տանելի է: Քեզ մի գործ կը տամ.
Բայց մի լսպասիր աւելի մեծ տրիտուր,
Քան քո սեփական ուրախութիւնը
Որ ինձ ծառայում ես:

ՄԻԼՎԻՌՈՒ

Իմ սէրս այնպէս սուրբ և կատարեալ է
Եւ ալնալիս չքաւոր գթութեան կողմից
Որ ինձ կը թուի մի շատ առատ հունձք՝
Թէ միայն հասկերի բեկոր ժողովեմ
Հնձողի ետևից: Երբեմքն երբեմքն
Մի ժամկտ միայն թող դու վայր ընկնի,
Ես հէնց այդքանով ապրել կարող եմ:

ՓԵԲԷ

Ճանաչում ես դու այն պատանեակին,
Որ ինձ հետ հիմա այստեղ խօսում էր:

ՄԻԼՎԻՌՈՒ
Ոչ շատ լաւ: Բայց յաճախ տեսել եմ նըրան:
Այս նա՛ է որ գընեց այն հիւղն ու մարզը,
Որ պատկանում էր այն ծեր գիւղացունք:

ՓԵՐԵՒ

Չը կարծես, Սիլվիոս, նըրան սիրում եմ,
Որ նորա մասին հարցեր եմ անում։
Մի խոռվկան տղայ է, բայց լաւ է խօսում։
Բայց ինձ ինչ բառերը. այնու ամենայնիւ
Բառերն ախորժ են՝ երբ որ խօսողը
Դիւր է գալիս նորանց, որոնք լսում են։
Մի սիրուն տղայ է, բայց ոչ շատ սիրուն։
Սակայն նա հպարտ է, այնու ամենայնիւ՝
Հպարտութիւնը նորան սազ է գալիս։
Նա շատ կարգին մարդ կարող է դառնալ։
Ամենից լաւ բանը, որ կայ նորա մէջ՝
Մորթի գոյնըն է. և աւելի շուտ,
Քան նորա լեզուն վիրաւորում էր՝
Աչքը բուժում էր։ Բարձրահասակ չէ,
Եւ սակայն բարձր է տարիքին նայած։
Ոտքը. էհ, վատ չէ, մինչև անգամ լաւ է,
Եւ շրթունքում կայ մի սիրուն կարմրութիւնը՝
Քիչ աւելի հասուն և առողջ մի գոյն,
Քան նորա թշին խառնըւած թոյըը,
Ժիշդ այնքան տարբեր, որչափ թունդ կարմիրը
Խառնած դամասկից։ Կանալք կան, Սիլվիոս,
Որ եթէ նըրան զննած լինէին,
Այնպէս մաս առ մաս, ինչպէս ես զննեցի՝
Մինչև անգամ նորան կը սիրահարուէին։
Գալով ինձ՝ ես նըրան բընաւ չեմ սիրում,
Ոչ էլ ատում եմ, և սակայն առաւել
Ես պատճառ ունիմ նըրան ատելու,
Քան թէ սիրելու։ Նորա ինչ գործն էր
Ինձ պախարակել։ Նա ինձ ասում էր,
Աչքերը սե են, մազերը սե են,
Եւ հիմա տեսնում եմ, նա ինձ ծաղըւում էր։
Չը գիտեմ ինչո՞ւ պատասխան չը տուի.

Բայց բոլորը մէկ է։ Մոռացումը ներում չէ։
Ես նորան կը գրեմ մի շատ խիստ նամակ,
Եւ դու պէտք է տանիս. կը տանիս, Սիլվիոս

ՍԻԼՎԻՈՏ

ՓԵՐԵՒ, ԲՈԼՈՐ ԱՐՄՈՎՆ

ՓԵՐԵՒ

Հէնց հիմա կը գրեմ։
Այս բանը գամուել է գլխիս, սրտիս մէջ։
Ես դառըն կը լինիմ նորա հետ, և շատ կարճ։
Եկ ինձ հետ, Սիլվիոս։

(Գնում են)։

այս պատու նու նորդու ու ամսաբու մասնի նմուրըն
առաջ բազ յանանշուման

ԾԱՌԱՋՈՂՈՅ

առ բյան միջրանոյն վե առ ու նուալ

ՊԱՅ

այծ չել մազ սիյար և պար վիւն հմի բր և պայ
պարած

ԾԱՌԱՋՈՂՈՅ

մամելուրապարան ջն յամի նոր պին գմայ ազու
ոյր չել մազ պին և ոմ թիրան վիւն նուսան ոմ
պարած մամ ու նունան նուն ըմայ գմայ զմայն
մամելուրապարան

ՊԱՅ

ունաց չմին և չմին նուսան և մայ այս պայ

ոչ նեղամ զնաբառն ոչ թէն պղաց ըստ
վահան առջի առա ին նեցք ով մարտ ո՛վ
առջիյի սպառաւ ով ամեաւ ո գոյն առ ո՛վ

ՍԱՐԾԱՅ

ԱՐԱՐՈՒԱԾ ՀՈՐԻՌՈՐԴ

ՏԱՅՔ

ՆԵՋՔ ով անդը բմ-ը

ՉՅՆ սխաց ամսն ո լուսար զնայ ով մ

ձնաթ առա և առ ամսն ո լուսար ով մ

(մմ նամբ) Նոյն տեղը:

Մտնում են ՌՈԶԱԼԻՆԴ, ՍԵԼԻԱ և ԺԱ.Բ.:

ԺԱ.Բ.

Խնդրեմ, սիրուն պատանի, ես ուզում եմ աւելի լաւ
ծանօթանալ քեզ հետ:

ՌՈԶԱԼԻՆԴ

Ասում են, դու մի մելամաղձիկ մարդ ես:

ԺԱ.Բ.

Ճիշդ է. այդ ինձ աւելի դիւր է գալիս, քան թէ ծի-
ծաղելը:

ՌՈԶԱԼԻՆԴ

Նոքա, որոնք մէկի կամ միւսի մէջ ծայրակեղութեան
են հասնում զզուելի մարդիկ են և աւելի քան թէ գի-
նովները իրանք իրանց ենթարկում են ամեն հանդիպողի
քննադատութեան:

ԺԱ.Բ.

Վահ, լաւ բան է տրտում լինել և ոչինչ չասել:

ՌՈԶԱԼԻՆԴ

—օմ Վահ, ուրեմն լաւ բան է մի գերան լինել; ոչի
ԺԱ.Բ. հայ ոչ ու յս

(Հ Կամբ)

Ես չունիմ ոչ ուսանողի մելամաղձութիւնը, որ մրցա-
սիրութիւն է. ոչ երաժշտինը, որ երևակալութիւն է. ոչ
պալատականինը, որ գոռոզութիւն է. ոչ զինուորինը, որ
փառասիրութիւն է. ոչ փաստաբանինը, որ քաղաքական է.
ոչ տիկնոջը, որ սիրուն է. ոչ սիրահարինը, որ այդ բոլորը
միասին է. այլ մի առանձին, ինձ սեփական մելամաղձու-
թիւն է, բաղկացած շատ խոտերից, և շատ բաներից հա-
նուած, և իրաւ, ճանապարհորդութեանց տարբեր տարբեր
դիտողութիւնները, որոնց մէջ խորասուզում է ինձ իմ սո-
վորական մտախոհութիւնը՝ բոլորովին մի ուրախ տեսակի
տրտմութիւն է:

ՌՈԶԱԼԻՆԴ

Ճանապարհորդ. Ես իմ հոգիս, իրաւունք ունիս տխուր
լինելու: Ես վախենում եմ, որ դու գնացած, քո սեփական
հողերդ ծախած լինիս, որպէսզի գնաս ուրիշներինը տես-
նես. շատ բան տեսնել և ոչինք չունենալ՝ նշանակում է
ունենալ հարուստ աչքեր և աղքատ ձեռքեր:

ԺԱ.Բ.

Այո, ես թանկ եմ վճարել իմ փորձառութիւնս:
(Մտնում է Օրլանդոն):

ՌՈԶԱԼԻՆԴ

Եւ քո փորձառութիւնը քեզ տխուր է դարձնում: Ես
աւելի կը սիրէի ունենալ մի խենթութիւն, որ ինձ ուրա-
խացնէր, քան թէ մի փորձառութիւն՝ որ տրտմեցնէր. այն
էլ ինչ. այդպէս ոչինչ բանի համար ճանապարհորդել:

ՕՐԼԱՆԴ

Բարեւ ձեզ և երջանկութիւն, սիրելի Ռոզալինդ:

ԹԱՐԱՎԻ

ԴԵՇ, լաւ, հիմա որ դուք սկսեցիք ոտանաւորով խօսել՝ ես չը կամ:

(Գնում է):

ՈՂՋԱԼԻՆԴ

Գնաս բարով, պարոն ճանապարհորդ: Տես, քեզ բան եմ ասում, աշխատիր լեզուդ ծոմոել և օտարազգի զգեստներ հագնել: Վատաբանիր քո հայրենիքիդ բոլոր բարութիւնները. վայ տուր ծնուած օրիդ, և մինչև անգամ տըրտնջիր Աստուծոյ դէմ, որ քեզ այդ դէմքով է ստեղծել. եթէ ոչ՝ ես չեմ կարող հաւատալ, որ դու երբ և իցէ մի գոնդոլի մէջ նաւարկել ես:—Վահ, այդ դուք էք, Օրլանդո, որտեղ էիք մնացել այս բոլոր ժամանակը: Դուք սիրահար:—Եթէ մէկ էլ այս տեսակ խաղ խաղաք ինձ հետ՝ էլ աչքիս չերևաք:

ՕՐԼԱՆԴ

Իմ ազնիւ Ռողալինդ, ես իմ խոստացած ժամանակից միայն մի ժամ ուշացել եմ:

ՈՂՋԱԼԻՆԴ

Մի ժամով խոստումը կոտրել: Ով որ մի ըոպէն բաժանէ հազար մասի, և մի ըոպէի հազարերորդ մասի մի չնչին մասի չափ ուշանայ սիրալին գործերում՝ նորա համար կարելի է տսել, որ Կուպիդոնը միայն թեահարել է նորա ուսը, բայց ես երաշխաւոր եմ, որ նորա սիրու ողջ առողջ է:

ՕՐԼԱՆԴ

Ներիր ինձ, սիրելի Ռողալինդ:

ՈՂՋԱԼԻՆԴ

Ու, եթէ դուք այդքան յապաղկոտ լինիք՝ մէկ էլ չը գաք իմ մօտ: Որ ալպէս լինի՝ ես աւելի կը սիրէի իբրև սիրահար ունենալ մի խխունդ:

ՕՐԼԱՆԴ

Մի խխունդ: Յի լաւի մէջազնա՞ զի թէն զանձ

ՈՂՋԱԼԻՆԴ

Այս, մի խխունդ. որովհետեւ թէւ նա կամաց կամաց է գալիս, բայց իր տունը իր գլխին է կրում. այդ աւելի լաւ օժիտ է կարծեմ, քան ինչ որ դու կարող ես բերել քո կնոջդ: Բացի դորանից՝ նա իր ճակատագիրը իր հետն է բերում:

Ալդ որն է:

ՈՂՋԱԼԻՆԴ

Վահ, եղջիւրները, որոնց մասին դուք որ կաք, պարոններ, պէտք է ձեր կանանցից ակնկալութիւն ունենաք. բայց նա գալիս է իր բախտով արդէն զինուած, և առիթ չէ տալիս, որ իւր կինը բամբասանքի առարկայ լինի:

ՕՐԼԱՆԴ

Առաքինութիւնը եղջիւր շինող չէ, և իմ Ռողալինդս առաքինի է:

ՈՂՋԱԼԻՆԴ

Եւ ես քո Ռողալինդն եմ:

ՍԵԼԻԱ (Ռողալինդին)

Նորան դիւր է գալիս քեզ այդպէս անուանել, բայց նա ունի քեզնից լաւ Ռողալինդ:

ՈՂՋԱԼԻՆԴ

ԴԵՇ, սիրաբանիր ինձ հետ, սիրաբանիր, որովհետեւ հիմա ես մի տօն օրուայ տրամադրութեան մէջ եմ, և բաւական պատրաստ եմ տեղի տալու:—Լաւ, հիմա ինձ բնչ կաէիր, եթէ ես իրաւ քո Ռողալինդը լինէի:

ՕՐԼԱՆԴՈ

Առաջ մէկ կը համբուրէի, յետու կը խօսէի:

ՈՂՋԱԼԻՆԴ

Ոչ, աւելի լաւ կը լինէր, որ առաջ խօսէիր, եթէր որ
խօսքդ վերջանար և նեղն ընկնէիր՝ այն ժամանակ կարող
էիր առթից օգուտ քաղել և մէկ համբոյր առնել: Լաւ ա-
տենախօսները, երբ խօսքի թելը կորցնում են, սկսում են
հազար. գալով սիրահարներին՝ երբ որ էլ խօսք չեն գտնում
(Աստուած հեռու անէ), այն ժամանակ ամենից մաքուր
հնարքը, որին դիմում են՝ համբուրելն է:

ՕՐԼԱՆԴՈ

Իսկ եթէ համբոյը զլացու՞ի:

ՈՂՋԱԼԻՆԴ յանձնին իմ ես մեռնում եմ: առջու ան-
մանակ ամեն չանք արել էր սիրուց մեռնելու համար, և չէր
յաջողել, և նա տիպար սիրահարներից մէկն է: Իսկ Լէանդը
շատ ու շատ տարիներ կարող էր ապրել, մինչև իսկ եթէ
Հէրօ միանձնուհի դարձած լինէր, եթէ այն ամառնալին
գիշերը այնպէս սաստիկ տօթ ըլ լինէր: Խեղճ տղան գնաց
Հեղեսպոնտէսի մէջ լողանալու, և զղափին կծկումից բռնուե-
լով՝ ջրի մէջ խեղգուեց. այն դարու տիսմար ժամանակագիր-
ները ձևացրին, որպէս թէ մահուան պատճառը Սեստոսի
Հէրօն էր: Բայց այս բոլորը սուտ է: Ամեն ժամանակ մար-
դիկ մեռած են, և որդերը նորանց կերած են, բայց ոչ թէ
սիրոյ պատճառով:

ՕՐԼԱՆԴՈ

Ո՞վ է որ խօսքից զուրկ լինի, երբ որ իր պաշտելի սի-
րուհու մօտ է:

ՈՂՋԱԼԻՆԴ

Հէնց մէկը դու, եթէ քո սիրուհիդ լինէի. ապա թէ
ոչ պէտք է իմ առաքինութիւնը աւելի բերտ լինէր, քան
իմ սրախօսութիւնը:

ՕՐԼԱՆԴՈ

Զուրկ ինչքց, զգեստներից:

ՈՂՋԱԼԻՆԴ

Ոչ զգեստներից, այլ սրտիդ փափաքից: Միթէ ես քո
Ռոզալինդը չեմ:

Եթէ նշանաբան ոք անյօ՛ՕՐԼԱՆԴՈ՛ պար վահաբան քայլու-
թա չմէ և ուրախ եմ ասել այս, որովհետեւ միշտ նում առ
նորա վերայ խօսել:

ՈՂՋԱԼԻՆԴ

Լաւ, յանձին նորա ես ասում եմ որ քեզ չեմ ուզում:
ՕՐԼԱՆԴՈ

Եկայն ուրեմն յանձին իմ ես մեռնում եմ: առջու ան-
մանակ մզմզո սոյն ոչ մզմզ
ՈՂՋԱԼԻՆԴ

Ոչ, նեղութիւն մի քաշիր. փոխանորդով մեռիր: Խեղճ
աշխարհը մօտ վեց հազար տարեկանէ, և այս բոլոր ժա-
մանակ դեռ մարդ չէ եկած աշխարհ, որ անձամբ մեռած
լինի, այսինքն սիրոյ պատճառով: Տրոյիլոսի գլուխը մի յու-
նական լախտից ջախջախուեց, և սակայն մինչև այն ժամա-
նակ ամեն ջանք արել էր սիրուց մեռնելու համար, և չէր
յաջողել, և նա տիպար սիրահարներից մէկն է: Իսկ Լէանդը
շատ ու շատ տարիներ կարող էր ապրել, մինչև իսկ եթէ
Հէրօ միանձնուհի դարձած լինէր, եթէ այն ամառնալին
գիշերը այնպէս սաստիկ տօթ ըլ լինէր: Խեղճ տղան գնաց
Հեղեսպոնտէսի մէջ լողանալու, և զղափին կծկումից բռնուե-
լով՝ ջրի մէջ խեղգուեց. այն դարու տիսմար ժամանակագիր-
ները ձևացրին, որպէս թէ մահուան պատճառը Սեստոսի
Հէրօն էր: Բայց այս բոլորը սուտ է: Ամեն ժամանակ մար-
դիկ մեռած են, և որդերը նորանց կերած են, բայց ոչ թէ
սիրոյ պատճառով:

ՕՐԼԱՆԴՈ

Ես չէի կամենալ, որ իմ իսկական Ռոզալինդը այդ տե-
սակ գաղափարներ ունենար. որովհետեւ, երդւում եմ, նորա
մէկ խոժոռ նայուածքը ինձ տեղն ու տեղը կ'սպանէր:

ՈՂՋԱԼԻՆԴ

Ես էլ այս ձեռքովս երդւում եմ, մի ճանճ անգամ չէր

ՕՐԼԱՆԴՈ

Մինչեւ յաւիտեան, և մէկ օր էլ աւելի։
ՈՌԶԱԼԻՆԴ

Ասա մէկ օր, առանց յաւիտեանի։ Ոչ, ոչ, Օրլանդո։
մարդիլ ապրիլ են սիրահարուելիս, գեկտեմբեր՝ պսակուելիս։
օրիորդները մայիս են՝ քանի դեռ օրիորդ են, բայց երկինքը
փոխում է, երբ կին են դառնում։ Ես քեզ վերայ աւելի
նախանձոտ պէտք է լինիմ, քան մի Բարբարիալի աղաւնի
իր էգի վերայ, աւելի աղմկալից, քան թութակը անձրես
դէմ. աւելի տարօրինակ, քան կապիկը. աւելի գիծ իմ փա-
փաքներիս մէջ, քան կապկի ձագը. ոչնչի համար լաց կը լի-
նիմ, ինչպէս Դիանան աղբիւրի մէջ, և այդ հէնց այն ժա-
մանակ՝ երբ դուտրամադրուած ես ուրախութեան, մի ըն-
ձի նման կը ծիծաղեմ, և այդ՝ երբ որ քո քունդ տա-
նում է։

ՕՐԼԱՆԴՈ

Բայց իմ Ռոզալինդս երբէք ալդպէս բաներ չի անիւ։
ՈՌԶԱԼԻՆԴ

Ես իմ հոգիս, ինչ որ ես անում եմ՝ նա էլ կանէ։

ՕՐԼԱՆԴՈ

Բայց նա խելօք է։
ՈՌԶԱԼԻՆԴ

Անշուշտ, եթէ ոչ բաւական խելք չէր ունենայ այդ-
պէս անելու։ Որչափ խելօք՝ այնչափ թափառաշընիկ։ Դու-
ռը կապիր մի կնոջ խելքի առաջ—պատուհանից դուրս կը
գնայ. այն էլ կապիր—բանալիքի ծակից դուրս կը դայ. այն
էլ գոցիր—ծխի հետ ծխնելոյզից դուրս կը թռչի։

ՕՐԼԱՆԴՈ

Մի մարդ, որ այս տեսակ սուր խելքով կին ունի՝
կարող է ասել. խելք, ուր ես մոլորում։

ՈՌԶԱԼԻՆԴ

Ոչ, այդ բացագանչութիւնը պահիր այն օրուալ հա-
մար, որ տեսնես կնոջդ խելքը գնում է գրացուդ անկողնի
մէջ։

ՕՐԼԱՆԴՈ

Եւ խելքը այդ ժամանակ ի՞նչ խելք կունենայ պա-
տրուակ գտնելու համար։

ՈՌԶԱԼԻՆԴ

Բահ, բաւական է որ ասէ. «Եկել էի քեզ գտնելու»։
Դու երբէք նրան առանց պատասխանի չես տեսնիլ, միայն
թէ առանց լեզուի տեսնես։ Օ՛, այն կինը, որ չէ կարող
իր մեղքը իր ամուսնի վզին դնել՝ նա երբէք արժանի չէ
իր երեխալին կաթ տալու, որովհետեւ նրան կը լիմարացնէ։

ՕՐԼԱՆԴՈ

Մինչեւ երկու ժամ, Ռոզալինդ, պէտք է քեզնից հե-
ռանամ։

ՈՌԶԱԼԻՆԴ

Վայ, ինձ, սիրականս, ես չեմ կարող երկու ժամ քեզ
կարօտ մնալ։

ՕՐԼԱՆԴՈ

Պէտք է ճաշին դքսի հետ լինիմ. ժամը երկուսին նո-
րից կը գամ քեզ մօտ։

ՈՌԶԱԼԻՆԴ

Լաւ, գնա, գնա։—Ես իմանում էի դու ինչ ես դառ-
նալու. իմ բարեկամներս էլ ասում էին, ես էլ իմանում
էի. քո այդ շողոքորթ լեզուդ խելքս ձեռքիցս առաւ։ Ահա
մի խելզ կին դուրս ձգուած։ Դէհ, եկ, մահ։—Ասացիր
ժամը երկուսին կը գաս։

ՕՐԼԱՆԴՈ

Այս, իմ անուշիկ Ոռղալինդս: Ուրաքանչաց պատճենը այս այս վայրութեան բարեացը է նույնական քննութեան մասնաւունք ու պահ

Երդւում եմ ես, և շատ լուրջ կերպով և, Աստուած-
վկայ, ամեն սիրուն երդւումներով, որոնք վտանգաւոր չեն.
Եթէ պատահի, որ դու քո տուած խոստմանդ մէկ նշանա-
խեցը կոտրես, կամ որոշուած ժամից մէկ ըսպէ ուշանա-
ես քեզ կը համարեմ ամենաճոռոմախօս ուխտադրուժը, ա-
մենախարդախ սիրահարը և ամենաանարժանը նորան, որին
Ուղաղինդ ես կանչում, որ երբ և իցէ կարելի է դտնել
ուխտադրուժների աշագին հրոսախմբի մէջ։ Ուրեմն զգու-
շացիր իմ կծու լեզուից, և խօսքդ պահիր

ՕՐԼԱՆԴՈ

Ես իմ խօսքս կը պահեմ այնպիսի բարեալաշտութեամբ,
որպէս եթէ դու իսկապէս իմ Ռոզալինդը լինէիը։ Ուրեմն
զտեսութիւն։

ԹՐԱՎԱԼԻՒԹ

Լաւ, ժամանակը այն ծերունի դատաւորն է, որ դատում է բոլոր այդ տեսակ լանցաւորներին, և թող ժամանակը դատէ: Յտեսութիւն:

(0 թանգօ դնում է):

ՄԵՂԱԿԱՆ

Դու հօ ուղղակի խայտառակեցիր մեր սեռը քո սիրալին
զրուցների մէջ պէտք է բաճկոնդ ու անդրավարտիքդ հա-
գացած հանենք և ցուց տանք ամբողջ աշխարհին՝ թէ թըռ-
չունը ինչ աւերմունքներ է գործել իր սեպհական բոյնի
մէջ։

ԸՆԳԱԼԻՒՐ

0-Հ, քուրիկ, քուրիկ. իմ սիրուն պստիկ քուրիկ. Ե-

ըանի՞ մէկ գլխաւունալիր քանի՞ հազար կանգուն խորասուզուած եմ սիրոյ մէջ. բայց անկարելի է չափել այդ խորութիւնը. իմ սիրուս լատակը դեռ անծանօթ է, Պորտուզալեան ծոցի պէս:

UCLhU

Կամ աւելի լաւ է ասել՝ բնաւ յատակ չունի... որովհետեւ որքան մեկ կողմից սէր ես թափում նորա մէջ՝ միւս կողմից դուրս է վագում:

ԹՈԳԱԼԻՒԴ

Ոչ, այդ միենոյն Վեներայի չար լակոտը, որ ծագում
առաւ մտածութիւնից, լղացուեցաւ մաղձոտութիւնից և ծնաւ
խենթութիւնից, այդ կոյր սրիկայ տղան, որ ամենի աշ-
քերը եղջում է, որովհետեւ ինքն աչք չունի՝ թող հէնց
նա ինքը դատէ, թէ ես որքան խոր մխուած եմ սիրոյ մէջ։
Ասեմ քեզ, Ալիէնա, ես չեմ կարող ապրել Օրլանդօյի աչքից
հեռու։ Գնամ մէկ ծառ գտնեմ, և նորա շուրջի տակ նստած
հառաչեմ, մինչև որ նա լետ գառնալի։

UCLhU

ԵԱՀԱՅԱ

(Պուրս են գնում):

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

Անտառի մի այլ մասը

Մտնում են ԺԱՅ և ՀՈՐԴԵՐ, որսորդի զգեստով:

ԺԱՂ

Եղիշը սպանողը ո՞րն է:

Պարսն, Ես եմ: Ի պայման ըստ ջեկատու և պատասխան առնելու նի

Տանինք սրան ներկայացնենք դքսին, որպէս մի հռո-
մակեցի աշխարհակալ, և լաւ կը լինէր եղջերուի եղջիւր-
ներն էլ տնկէինք սորա գլխին, որպէս յաղթական պսակ:
—Գուռ ոչ մի երգ չը դիտես, որսորդ, այս պարագայի համար:

ԵՐԿՐՈՇԴ ՀՈՐԴ

Digitized by Google

ԺԱՐ

Աւըեմն Երգիր. Եղանակը ի՞նչ կուզէ լինի, միայն թէ
բաւական աղմուկ հանէ:

Ե Ր Գ

1 Ճախն ի՞նչ է վարձը այն մարդու,
Որ եղնիկ է որսացել.—

2 Ճախն Կըել զլիսին եղջիւրները
Եւ կաշին էլ գործ ածել:

1 Ճախն Դէ՞ս ամենքըս թող երգենք
Եւ երգելով տուն տանենք:
Մի՛ ամաչեր եղջիւր կըել.—

Տատ առաջ քո ծնուելուց } Խումբը պէտք է
Դա պըսակ էք, եւ ոչ ոք } երգէ կրկները:
Զէր ամաչում կըըելուց:

1 Ճախն Հօրը հայրը կըըում էք:
2 Ճախն Եւ հայրը էլ սիրում էք:

ԱՐԵՎՈՅՆ

Կեցցէ եղիւր,
Առոյգ եղիւր.
Զէ ծաղկելի,
Անարգելի:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Համեմատի գույնի ըստ Անտառության մակարդակության:

Մտնում են ՍԵԼԻԱ և ՌՈԶԱՆ ինք:

արմաս է այս հայոց առաջնորդութիւնը

Digitized by srujanika@gmail.com

Հիմա ի՞նչ ես ասում. Ժամը երկուսն է, և դեռ 0ըլանդուից նշան չը կալ:

U6Lhu

Ես քեզ խօսք եմ տալիս, որ նա, իր անբիծ սկըռվ և խառնակուած ուղեղով, առել է իր նետն ու աղեղը և գնացել է... քնելու:-Նախոր, մէկը գայիս է, ո՞մ է:

(Անդրական կազմություն):

Միջային (Ողջայինուն)

Ես ձեզ հետ գործ ունիմ, սիրուն պատանի:
Իմ սիրուն Ֆեբէն ինձ հրամայել է
Տալ ձեզ այս թուղթը:

(Տալով մի նամակ)

Ես ինքս չը գիտեմ բովանդակութիւնը.
Բայց որքան դատում եմ այն խենթ՝ այսուածքից
Եւ խալթիչ շարժուածքից, որ գրած ժամանակ
Նորա դէմքն ունէր՝ դա պէտք է ունենալ
Զալլրալից մի նիւթ. բայց ինձ ներող եղէք,
Ես միայն մի անմեղ պատգամաբեր եմ:

ՕՐԱԳԱԼԻՒՐ

Համբերութիւնն իսկ տլսպիսի նամակից
Ոտքի կը կանգնէր և կը յոխորտար։
Սորան հանդուրժողը ինչ չի հանդուրժի։
Նա ալստեղ ասում է, որ ես ազնիւ չեմ,

Թէ բարեկիրթ չեմ, թէ ես հպարտ եմ,
Եւ թէ նա չէր կարող ինձ երբէք սիրել՝
Թէ մարդիկ նոյն էսկ Փիւնիկի նման
Հազուագիւտ լինէին: Բայց, փառք Աստուծոյ,
Նորա սէրը չէ այն նապաստակը,
Որ ուզում եմ որսալ: Ինչու է այսպէս
Նամակ գըրում ինձ:—Լաւ, հովիւ, հասկացայ.
Այս մի նամակ է, որ ինքդ ես գըրել:

ՍիլվիոՍ

Ոչ, երգւում եմ ձեզ. ես չեմ իմանում
Ինչ կալ դորա մէջ. Ֆերէն է գրել:
ՈՌԶԱԼԻՒԴ
Բահ, բահ, դու խենթ ես, և սիրոյ տագնապից
Միտքդ խառնակուել է: Ես տեսալ նրա ձեռքը.
Նա ունի ցամաքած կաշեղէն մի ձեռք՝
Որձաքարի գոյն: Ճիշդը, ես կարծեցի
Որ նա կրում էր հին ձեռնոցները.
Բայց յետոյ տեսայ իր ձեռքերն էին:
Նա ունի տընարար մի կնոջ ձեռքեր:
Բայց դա իմ գործըս չէ. ես քեզ ասում եմ,
Որ այս նամակը նա չէ շարադրած,
Այլ մի մարդու գործ է, ալր մարդու ձեռք է:

ՍիլվիոՍ

Հաւատացնում եմ ձեզ, դա նորա գիրն է:

ՈՌԶԱԼԻՒԴ

Սա մի պոռոտախօս և վայրագ ոճ է,
Ըմբէշների մի ոճ. ինձ կոռւի է կանչում,
Ինչպէս մի տաճիկ մի քրիստոնեալի.
Երբէք մի կընոջ քնքոյշ ուղեղը
Չէր կարող ժալթքել այսպէս բիրտ բառեր,

Այսպէս ահագին խուժադուժ լուտանք,
Այսպէս եթովպեան դառնաշունչ խօսքեր,
Աւելի սկ նիւթով, քան արտաքինով:
Ուզում ես արդեօք լլսել նամակը:

ՍիլվիոՍ

Եթէ կը հաճիք. քանզի դեռ չեմ լսած:
Թէև ֆերէի անգըրթութիւնը
Խիստ շատ եմ լսել:

ՈՌԶԱԼԻՒԴ

Նա ինձ խաբում է:
Լսիր ինչ է գրում բռնապետուհին.
Աստուած ես միթէ դու, հովիւ դարձած,
Որ մի ինդ կրյսի սիրտըն ես այրած:—
Կարո՞ղ է մի կին այսպէս նախատել:

ՍիլվիոՍ

Ալդ նախատինք է:

ՈՌԶԱԼԻՒԴ
Աստուածութիւնը ի՞նչո՞ւ ես թողնում,
Մի կնոջ սրտի դէմ պատերազմ մշղում:—
Լսել ես երբէք այսպէս նախատինք:
Քանի մարդկային մի աչք ինձ հայցեց,
Երբէք այդ աչքը սիրտըս չը խցեց:—
Ուզում է ասել, թէ ես գազան եմ:
Թէ պայծառ աչքիդ արհամարհանքը
Կարող է ինձ տալ այսպիսի մի սէր,
Ի՞նչ կլինէր ապա՝ եթէ գգուանքը
Քո ակնարկի մէջ խառնըւած լինէր:
Ես քեզ սիրեցի՝ երբ կուսմ էիր,
Ի՞նչ կլինէր ապա՝ թէ ինձ շոյէիր:
Նա, որ սերում է քեզ այս նամակը,

իմ այս ջերմ սիրուց քընաւ լուր չունի:
Եւ նորա ծեռքով յայտնիր քո կամքը,
Թէ մատղաշ սիրուղ արդեօք կընդունի,
Որ ես քեզ ձօնեմ հաւատարմութեամբ
իմ անձը, սոլոր իմ ըստացուածքով:
Եւ եթէ մերժես իմ սիրուս ձօնը՝
Լուր տուր ինձ դարձեալ այս մարդու ծեռքով:
Յայնժամ ինձ միայն կը մընայ խորհնել՝
Թէ ինչպէս մեռնել:

ՍԻԼՎԻՌՈՒ

Ալդ կշտամբել է:

ՍԵԼԻԱՆ

Աւաղ, խեղճ, հովիւ:

ՌՈԴԱԼԻՆԴԻ (Սիլվիոն)

Դու խղճում ես նորա վերայ. ոչ, նա արժանի չէ խըլ-
ճալու:—(Սիլվիոն) Դու ինչպէս կարող ես սիրել այս տեսակ
կին: Վահ, որ քեզ մի գործիք շինէ և սիսալ եղանակներ
նուագէ քեզ վերայ. միթէ կարելի է հանդուրժել: Դու գի-
տես, գնա նորա մօտ,—որովհետեւ տեսնում եմ, սէրը քեզ մի
ընտելացած ոձ է դարձել,—և ասա այս նորան, որ եթէ
նա ինձ սիրում է՝ ես նորա վերայ պարտականութիւն եմ
դնում սիրել քեզ. Եթէ ոչ, ես նրան երբէք չեմ ուզի՝
միայն թէ դու նորա համար բարեխօսես:—Եթէ դու մի
անկեղծ սիրահար ես գնա առանց մի բառ ասելու, որով-
հետեւ ահա ուրիշ մարդիկ են գալիս: (Սիլվիոն զնում է):
(Մտնում է Օլիվիէն)

ՕԼԻՎԻԷՆ

Բարի լոր, սիրուներ. ասացէք խնդրեմ,
Եթէ դուք գիտէք, թէ ո՞ր կողմն արդեօք
Այս անտառների շրջականերում

Կայ ոչխարի մի գոմ, վանդակափակուած
Ծիթենու ծառերով:

ՍԵԼԻԱՆ

Գէպի արևմուտք
Մերձակալ ձորի մէջ, աջ կողմ թողնելով
Մընջուն առուակի եզերքին տնկուած
Ուրիների շարքը՝ կը հասնէք այնտեղ:
Բայց օրուայ այս ժամում այնտեղ մարդ չը կայ,
Եւ տունը ինքն է իրան պահպանում:

ՕԼԻՎԻԷՆ

Թէ աչքը լեզուից օգուտ կը քաղէ՝
Պէտք է ձեզ ճանաչեմ նըկարագրութեամբ:
Ճիշտ նոյն հագուստները, ճիշտ նոյն տարիքը.—
«Ճան գեղեցիկ է, կանացի ընթշութեամբ,
Բոլորովին նման մի հասած քըրոջ.
Բայց աղջիկը կարծ է, եւ աւելի թուկն
Քան իւր եղայրը: Ասացէք, դուք չէք
Իմ որոնած տան կալուածատէրքը:»

ՍԵԼԻԱՆ

Պարծենալ չի լինիլ երբ դուք հարցնում էք,
Զեզ պատասխանել՝ թէ այս, մենք ենք:

ՕԼԻՎԻԷՆ

Օրանդօն զրկում է ձեզ երկուսիդ էլ
Յարդական բարևներ, և այն պատանուն,
Որին նա կոչում է իւր Ռոզալինդը
Նա ուղարկում է արիւնաթաթախ

Այս թաշկինակը: Դուք նա էք:
ՌՈԴԱԼԻՆԴԻ

Ես նա եմ:
Բայց մենք դորանով ինչ պէտք է հասկանանք:

ՕՀԻՎԻՀԵՆ ՈՒ ԱՅՍԻՀԱ ՀԱՅ
Ամօթ ինձ համար՝ եթէ կամենաք
Հարցնել ինձանից, թէ ինչ մարդ եմ ես,
Թէ ինչու, և ինչպէս, և ինչտեղ արդեօք
Այդթաշկինակը ներկուելու այսպէս:

ՍԵԼԻԱ

Պատմեցէք ինդլեմ:

ՕՀԻՎԻՀԵՆ մզմէ պատու այ

Երբ վերջին անգամ
Պատանի Օրլանդօն հեռացաւ ձեզնից՝
Նա ձեզ խոստացաւ մէկ ժամից յետ գալ,
Եւ անտառի մէջ շրջադալով
Եւ որոճալով երևակայութեան
Քաղցր ու դառն սնունդը՝ յանկարծ նա նայեց,
Եւ վահ, ինչ է տեսնում.—մի կաղնու ներքոյ,
Որի ճիւղերը տարիքից մամուտած,
Եւ բարձր կատարը չոր հնութիւնից
Ճաղատ էր դարձած՝ մի խեղճ թշուառ մարդ,
Ցնցոտիներ հագած, մազերը երկարած՝
Քնած էր մէջքի վրայ: Նորա վզի շուրջը
Գալարուած էր մի օձ, կանաչ և ոսկեգոյն,
Որ իր սպառնալից և թեքուն գլխով
Մօտենում էր մարդու կիսաբաց բերնին:
Բայց հէնց որ օձը Օրլանդօլին տեսաւ՝
Նա կամաց կամաց յետ արձակուեցաւ
Եւ ատամնաձեւ գալարումներով
Սողաց ու մտաւ մի թըփի ներքւ:
Բայց նոյն թըփի տակ մի մատակ առիւծ,
Ցամաքած ծծերով, գլուխը գետին դրած՝
Մի կատուի նման դարձան էր մտած,
Հսկելով, թէ երբ այն քընած մարդը

Կը շարժուէր տեղից. քանզի այդ անասնի
Թագաւորական սովորութիւնն է՝
Զ'որսալ ոչ մի բան, որ մեռած թուալ:
Օրլանդօն տեսնելով մօտեցաւ նորան
Եւ տեսաւ, որ ինչ—իւր եղբայրըն է,
Անդրանիկ եղբայրը:

ՍԵԼԻԱ

Օ՛Հ, նա ինձ խօսել է
Այդ եղբօր վերալ, նկարագրելով
Որպէս ամենից հրէշաւոր եղբայրը,
Որ երբ և իցէ ապրած է մարդկանց մէջ:

ՕՀԻՎԻՀԵՆ

Եւ իրաւունք ունէր. ես շատ լաւ գիտեմ,
Որ հրէշաւոր էր:

ՈՂՋԱԼԻՒԴԻ

Բայց գանք Օրլանդօլին:
Թողեց իր եղբօրը, որ ճարակ դառնալ
Այն սովալըլուկ ցամաքած առիւծին:

ՕՀԻՎԻՀԵՆ

Նա երկու անգամ կռնակ դարձըրեց,
Եւ այդ միտքն ունէր. բայց բարութիւնը,
Միշտ աւելի ազնիւ, քան վրէժ առնելը,
Եւ բընութիւնը, աւելի զօրաւոր,
Քան արդար քէնը՝ նըրան ըստիպեց
Կռուել առիւծի դէմ, որ անմիջապէս
Ցատկեց նրա առջև, և այդ աղմուկից
Ես վեր ցատկեցի իմ անուշ քընից:

ՍԵԼԻԱ

Դուք էք եղբայրը:

ՈՌԶԱԼԻՆԴՐ պարեղաց զի
Նա ձեզ է փրկել:
ՍԵԼԻԱ մասն մօքամայի
Դուք էք ուրեմն, որ անքան յաճախ
Դաւեր էք նիւթել նորա կեանքի դէմ:

ՕՀԻՎԻՀ

Ես էի, բայց ես չեմ, և չեմ ամաչում
Ասել թէ ինչ էի, երբ իմ վոխարկմամբ
Անքան անոյշ է ինձ լինել՝ ինչ որ եմ:

ՈՌԶԱԼԻՆԴՐ

Իսկ թաշկինակը:

ՕՀԻՎԻՀ

Հիմա կը պատմեմ:—

Երբ մեր երկուսի մէջ արտասուքները
Քաղցրութեամբ թանացին մեր պատմութիւնքը
Սկզբից մինչև վերջ, և երբ ես պատմեցի,
Թէ ինչպէս պատահեց, որ եկալ այստեղ,
Այս անբնակ տեղը՝ կարճ, նա ինձ տարաւ
Բարի դքսի մօտ, որ ինձ շընորհեց
Հիւրընկալութիւն և նոր ըզգեստներ,
Յանձնարելով եղբօրըս սիրոյն.
Եւ նա անմիջապէս տարաւ ինձ իւր այրը:
Այնտեղ նա հանուելով՝ տեսանք որ առիւծը
Պատռել էր թեկիցը մի մեծ կտոր միս,
Որից արիւնը այս բոլոր ժամանակ
Հոսել էր անդադար, և այնտեղ իսկոյն
Նա ուշքից գնաց, և թալկանալիս՝
Իւր Մոզալինդի անունն էր տալիս:
Մէկ խօսքով՝ նըրան ուշքի բերեցի,
Վէրքը կապեցի, և մի քիչ յետով,

Երբ որ կազդուրուեց՝ ինձ անծանօթիս մասսայի զի
Սլստեղ ուղարկեց, որ անցքը պատմեմ զի զմէ զէք
Եւ ինդրեմ ձեզանից, որ ներող լինիք
Նորա խոստմնազանց լինելուն համար,
Եւ այս թաշկինակը, իր արեամբ ներկուած
Տամ այն սիրուն հովուին, որին կատակելով
Նա անուանում է իր Մոզալինդը:

ՍԵԼԻԱ

Վահ, ինչ է, Գանիմեդ, անուշիկ Գանիմեդ:
(Ոոզալինդ ուշաթափում է:)

Հատ մարդիկ, իրաւ, արիւն տեսնելիս
Ուշաթափում են:

ՍԵԼԻԱ

Սւելի՛ պատճառ կայ:
— Սիրելիս, Գանիմեդ:

ՕՀԻՎԻՀ
Տես, ըսթափում է:

ՈՌԶԱԼԻՆԴՐ

Ա՛ս, տանը լինէի:
ՍԵԼԻԱ

Քեզ տուն կը տանինք:
(Օֆիկին:)

Խնդրեմ, բոնեցէք նորա բազուկից:
ՕՀԻՎԻՀ

Քաջ եղիր, պատանի:— Դու, մի տըղամմրդ.
Քո մէջ բնաւ չը կալ տըղամմրդու սիրտ:

ՈՌԶԱԼԻՆԴՐ

Ճիշդ է. խոստովանում եմ: Ա՛հ, պարոն, ամեն մարդ

կը խոստովանուէր, որ ես լաւ ձեացըի. խնդրեմ պատմեցէք ձեր եղբօրը, թէ՞ որքան լաւ ձեացըի: Հա, հա:

ՕՂԻՎՈՒՅՏ

Ոչ, այդ ձեւացնել չէր: Զեր երեսի գոյնը լաւ վկայում
է, որ այդ ճշմարիտ տառապանք էր:

ԿԵՂՋ ԷՐ, ՀԱԼԱՄԱԳԵՐ:

ՕՂԻՎԻՒԻ

Լաւ ուրեմն, սիրտ առէք և ձեացըէք, որպէս թէ
տղամարդ էք:

ԹՐՁԱԼԻՆ

Ես էլ այդ եմ անում. բայց իրաւ աւելի պատշաճ կը լինէր, որ ես կին եղած լինէի:

Ublhu

Վահ, ինչ է, աւելի և աւելի գունաթափում ես:
Խնդրեմ գառնանք տուն:—Ազնիւ պարոն, եկէք մեզ հետ:

ՕՂԻՎԻՒՆ

Անշուշտ կը գամ, որովհետև պէտք է պատասխան տանիմ, թէ դուք ինչ բառերով ներում եք իմ եղբօրս, Ո՞գայինդ:

ԹՐԱՎԱԼԻՒՐ

Ես պէտք է մի բան երևակալեմ. բայց, խնդրեմ, գովեցէք նորա մօտ, թէ ինչպէս լաւ կեղծեցի:—Չէք գալիս: (Գնում են):

ԱՐԱՐՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ

առաջ սիմբոլական առաջնորդ գովազ առաջին այլ պատճենները հայոց պատճենները չեն և գումար առաջնորդ այլ պատճենները այլ պատճեններ չեն:

ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋՈՒՆ

Նոյն տեղը:

Մտնում են ՓՈՐՁԱՔԱՐ և ԱՌԵԴՐԻ:

ФОРГУР

Մենք յարմար ժամանակ կը գտնենք, Առղջի, Համբերի, սիրելի Առղջի:

110 h26

Ես իմ հոգիս, այն քահանան բաւական լաւ էր, հակառակ այն ծերուկի բոյոր ասածներին:

ՓՈՐՁԱՔԱՐ

Մի շատ անպիտան մարդ էր այդ Սըր Օլիվիէն, Առւղըի,
մի ամենախայտառակ Մար-Տեկստ*): Բայց լսիր, Առւղըի,
մի պատանի կայ այստեղ անտառի մէջ, որ քո վերալ աչք
ունի:

*) Սար-Տելկստ բառացի թարգմանութեամբ նշանակում է «բնագիր եղծող»:

ԱՌԻԴՐԻ

Այս, իմանում եմ ում ես ասում. նա իմ վերայ ոչ մի
տեսակ իրաւունք չունի: Ահա ասածդ մարդը գալիս է:
(Մտնում է Վիլիամ):

ՓՈՐՉԱՔԱՐԱՐ

Ինձ համար ուտելիք և խմելիք է մի ծիծաղելի գեղ-
ջուկ տեսնել: Գլուխս վկալ, մենք սրախօս մարդիկս շատ
էլ հաշիւ ունինք տալու: Մենք միշտ պէտք է մէկը գըտ-
նենք ծաղրելու: չենք կարող մեզ զսպել:

ՎԻԼԻԱՄ

Բարի իրիկուն, Առւդրի:

ԱՌԻԴՐԻ

ԱՍՏՈՒՃՈՒ բարին, Վիլիամ:

ՎԻԼԻԱՄ

Չեզ էլ բարի իրիկուն, պարոն:

ՓՈՐՉԱՔԱՐ

Բարի իրիկուն, ազնիւ բարեկամ. գլուխդ ծածկիր,
գլուխդ ծածկիր, խնդրեմ, գլուխդ ծածկիր: Քանի տարեկան
ես, բարեկամ:

ՎԻԼԻԱՄ

Քսան և հինգ, պարոն:

ՓՈՐՉԱՔԱՐ

Հասուն տարիք է. անունդ Վիլիամ է:

ՎԻԼԻԱՄ

Այս, պարոն:

ՔՈՐՉԱՔԱՐ

Սիրուն անուն է: Այս անտառի մէջ ես ծնուել:

ՎԻԼԻԱՄ

Այս, պարոն, փառք Աստուճոյ:

ՓՈՐՉԱՔԱՐ

Փառք Աստուճոյ.—լաւ պատասխան է: Հարժուստ ես:
ՎԻԼԻԱՄ
Ե՛հ, պարոն, քչից շատից:

ՓՈՐՉԱՔԱՐ

Քչից շատից.—լաւ է, շատ լաւ, շատ շատ պատուա-
կան: Բայց այնու ամենայնիւ շատ լաւ չէ, այլ միայն քը-
չից շատից: Խելացի ես:

ՎԻԼԻԱՄ

Ե՛հ, պարոն, բաւական լաւ խելք ունիմ:

ՓՈՐՉԱՔԱՐ

Վահ, լաւ ասացիր. Հիմա լիշում եմ մի առած, ասում
են ախենթն իրան խելօք է կարծում, բայց խելօքը զիտէ,
որ ինքը խենթ է: Հեթանոս փիլիսոփան, երբ խոզող էր
ցանկանում ուտել՝ բաց էր անում շրթունքները, բերանը
դնելիս. գորանով նա ուզում էր ասել, որ խաղողը ստեղծուած
է ուտելու և շրթունքները՝ բացուելու համար: Թու այս
օրիորդին սիրում ես:

ՎԻԼԻԱՄ

Սիրում եմ, պարոն:

ՓՈՐՉԱՔԱՐ

Չեռքդ տուր ինձ. գիտնին ես:

ՎԻԼԻԱՄ

Ոչ, պարո՞ն:

ФОРГУРУС

Ուրեմն սովորիր այս բանն ինձնից. ունենալ՝ նշանակում է ունենալ, որովհետև ճարտասանութեան մի օրինակ է, որ ըմպելիքը՝ դուքս թափուելով մի բաժակից մի գաւաթի մէջ, լցնելով մէկը՝ դատարկում է միւսը։ Որովհետև քո բոլոր գըողները համաձայն են, որ «ըստ» նշանակում է «նա ինքը»՝ հիմա դու չես «ըստ», որովհետև ես եմ «նա ինքը»։

ՎԻԼԻԱՄ

Ի՞նչ նա ինքը, պարոն:

ФОРГУР

Այն նա ինքը, պարոն, որ պէտք է առնէ այս կնկան։
Ուրեմն դու, գեղջուկ, լիք,—որ նշանակում է ռամ-
ան լեզուով՝ բաց թող—զիենակցութիւն—որ ռամկաբար
նակում է՝ ընկերութիւնը—կնամարդոյս այսորիկ—որ
ոխի խօսքով նշանակում է՝ այս կինարմատի. և բոլորը
սին լինում է, լիք զիենակցութիւն կնամարդոյս այսո-
ապա թէ ոչ՝ դու ի կորուստ մատնեսցիս, և կամ որ-
զի լաւ մտնէ ուղեղիդ մէջ՝ դու կը սատակիս։ Ըմբռնիր,
քեզ կ'սպանեմ, կեանքդ կը փոխարկեմ ի մահ, արեդ կը
արեցնեմ, աղատութիւնդ կը փոխեմ ստրկութեան. քեզ
հալածեմ թոյնով, գաւաղանով, պողովատով. կը մաքտ-
քո դէմ գաւադրութեամբ, կը յաղթահարեմ քեզ քա-
ականութեամբ, հարիւր լիսուն կերպով քեզ կ'սպանեմ։
մն դոզա, և կծիկդ դիր:

ԱՆԻԴՐԻ

Այս, հեռացիր, բարի Վկիլամ:

ՎիկիԱՄ՝ քայլ բացարձ գմբն զո
անկութիւն տալ, պարոն: (Իուրո է զնում):

Տէս և տիրուհիս քեզ կանչում են. Եկ, շուտ արա,
շուտ:

ՓՈՐՉԱՔԱՐ ՓՈՐՉԱՔԱՐ
Փախիր, Առւղըի, Փախիր, Առւղըի:—Փալիս եմ, գա-
լիս եմ:

ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

‘Unjū unbijō

Մանուկ Են ՕՌԱՆԴԻՇ և ՈՒԽ ԻՆ

Այդ ի՞նչպէս բան է, որ այսքան քիչ ծանօթութեամբ նորան այնքան հաւատացիր, որ մէկ անգամ տեսար թէ չէ՝ սիրահարուեցար. սիրահարուեցար թէ չէ՝ խնդրեցիր նորա սէրը, և խնդրեցիր թէ չէ՝ ձեռք բերեցիր. ուրեմն հաստատ վճռել ես վախեյլ նրան:

ՕՂԻՎԻՒՆ

Մի վեճեր ոչ իմ խենթութեան վերայ, ոչ նորա աղքատութեան, ոչ մեր քիչ ծանօթութեան, ոչ իմ լանկարծակի սիրախօսութեան, ոչ էլ նորա յօժարման վերայ. այլ ասա ինձ հետ, որ սիրում եմ Ալիքնային, ասա նորա հետ, որ նա ինձ սիրում է. Համաձայնուիր մեզ երկուսիս հետ,

որ մենք կարող ենք վայելել միմեանց: Քո օգուտդ էլ դորա
մէջ է. քանզի հօրս տունը և բոլոր այն եկամուտները, որ
ծերունի Սըր Ռոլանդին էին պատկանում՝ այդ բոլորը ես
կը թողնեմ քեզ, և այստեղ կ'ապրիմ և կը մեռնիմ որպէս
մի պարզ հովիւ:

(Մտնում է Ռողավինդ):

ՕՐԼԱՆԴՈ

Ես համաձայն եմ. հէնց վաղը հարսանիք արէք. ես
կը հրաւիրեմ դքսին և բոլոր նորա զուարճասէր հետևորդ-
ներին: Դու գնա Սլիւնալին պատրաստիր, որովհետեւ ահա
գալիս է իմ Ռողալինդս:

ՌՈՂԱԼԻՆԴ (Օրլանդոյին)

Բարե քեզ, եղբայր:

ՕԼԻՎԻՀ

Եւ քեզ, սիրուն քոյրիկ:

ՌՈՂԱԼԻՆԴ

Օ՛, իմ սիրուն Օրլանդօ, որչափ ցաւալի է ինձ տես-
նել, որ սիրտ այդպէս կտպկալել ես վիրակապի մէջ:

ՕՐԼԱՆԴՈ

Այս իմ բազուկս է:

ՌՈՂԱԼԻՆԴ

Ես կարծեցի, թէ սիրտ վիրաւորուած է մի մատակ
առիւծի ճիրաններից:

ՕՐԼԱՆԴՈ

Վիրաւորուած է, այս, բայց մի օրիորդի աչքերից:

ՌՈՂԱԼԻՆԴ

Եղբայրդ պատմեց քեզ, թէ ես ինչպէս ուշաթափու-
թիւն ձեացըի, երբ նա ինձ ցոյց տուաւ քո թաշկինակդ:

ՕՐԼԱՆԴՈ

Այս, և աւելի զարմանալի բաներ:

ՌՈՂԱԼԻՆԴ

Օ՛, գիտեմ ինչ ես ուզում ասել. իրաւ որ երբէք այս-
պիսի յանկարծակի բան չէ պատահած, ի բաց առեալ երկու
խոյերի կուիւր, կամ թէ կեսարի ֆրասոնական*) յոխորտանքը
— եկայ, տեսայ եւ յաղթեցի. որովհետեւ քո եղբայրդ և իմ
քոյրս հազիւ թէ միմեանց հանդիպեցան՝ իրարու նայեցին.
հազիւ թէ նայեցին՝ սիրահարուեցան. հազիւ թէ սիրահա-
րուեցան՝ հառաչեցին. հազիւ թէ հառաչեցին՝ պատճառը
հարցըին միմեանցից. հազիւ թէ պատճառը գտան՝ ճարը
որոնեցին. և այս աստիճաններով նոքա շինեցին մի սան-
դուխք դէպի ամուսնութիւնը, որից պէտք է կամ անժուժ-
կալ կերպով վեր ելնեն, կամ անժուժկալ լինին դեռ չամու-
մացած. սիրոյ ամենաբուռն կատաղութեան մէջ են, և
անպատճառ պէտք է միանան. լախտերը չեն կարող նրանց
միմեանցից բաժանել:

ՕՐԼԱՆԴՈ

Նոքա վաղը պէտք է ամուսնանան, և ես գուքսին
հարսանիքի կը հրաւիրեմ: Բայց ախ, ինչ դառն բան է
երջանկութեան վերայ նայել ուրիշի աչքերով, և վաղը որ-
քան աւելի իմ եղբայր երջանիկ տեսնեմ իր սրտի ցանկա-
կացածը ձեռք բերելու համար, այնքան աւելի իմ սրտիս
գողձուկը սաստիկ կը լինի:

ՌՈՂԱԼԻՆԴ

Վահ, միթէ վաղը ես չեմ կարող քեզ մօտ Ռողալինդի
գերը խաղալ:

*) Թլասո մի սնապարծ և բարբառող զինուրի անուն է Տե-
քէնսի «Ներքինի» թատրերգութեան մէջ:

ՕՐԼԱՆԴՈ

ԱՌԻ, ԵՍ ՀԵՄ ԿԱՐՈՂ ԱՎ ԵՍ ԵՐԿԱԿԱԽՈՒԹԵԱՄԲ ԱՎԼԵԼ:

ՈՂՋԱԼԻՆԴ

ՈՐ ԱՎԴԱԼԵՍ Է՝ ԵՍ ԷԼ ՔԵՂ ՀԵմ Ճանձրացնի ունալն խօսքերով. բայց թող քեղ մէկ բան ասեմ (և հիմա ես լուրջ կերպով եմ խօսում), որ ես քեղ ճանաչում եմ մի խելքը գլխին տղայ. Ես այս չեմ ասում՝ որ դու լաւ գաղափար կազմես իմ իմաստութեան վերայ, քեղ ցոյց տալով՝ որ գետեմ թէ դու ով ես. ոչ էլ ջանք եմ անում գնահատուիլ քեղանից՝ եթէ ոչ մի փոքրիկ չափով, և այն նորա համար՝ որ դու վատահութիւն ունենաս դէպի ինձ քո սեպհական օգախի, ոչ թէ իմ սլարծանքիս համար։ Ուրեմն հաւատա, խնդրեմ, որ ես կարող եմ տարօրինակ բաներ անել. Ես երեք տարեկան հասակից ծանօթութիւն եմ ունեցել մի վհուկի հետ, որ իր արհեստի մէջ շատ հմուտ էր, և սակայն ոչ մի կերպով դատապարտութեան արժանի չէր։ Եթէ իսկապէս դու Ռոզալինդին ավդալէս ջերմ կերպով սիրում ես, ինչպէս քո վարմունքդ աղաղակում է, ապա երբ որ եղբայրդ Ալիքնալի հետ ամուսնանայ՝ դու էլ կ'ամուսնանասքու սրտիդ սիրածի հետ։ Ես գիտեմ թէ նա բախտի ինչ կիրճերի մէջ ընկած է, և եթէ կուզես՝ ինձ համար անկարելի չէ վաղը նրան բերել քո տչքի առաջ, մարդկարին կերպարանքով և առանց որ և իցէ վտանգի։

ՕՐԼԱՆԴՈ

Առանց կատակի ես խօսում։

ՈՂՋԱԼԻՆԴ

Առանց կատակի, կեանքս վկայ, մի բան՝ որ իմ աչքում շատ թանկ է, թէե ասացի որ կախարդեմ։ Ուրեմն վաղը հագիր քո ամենալաւ զարդերդ, հրաւերիր բարեկամներիդ, որովհետեւ եթէ խսկալէս դու կամք ունիս վաղը

պստկուելու՝ կը պսակուիս, և այն էլ Ռոզալինդի հետ, եթէ ուզում ես։ (Պահանջ դիմաց նև սիրության ուժ ամ վեց Մարտին Սիրիոս եւ Յերէ)։

Նայիր, ահա գալիս է իմ սիրուհիս, և նորա սիրահարը ետեից։

ՓԵԲԵ

Պատանի, դու ինձ խիստ անպատուեցիր,
Քեղ գըրած նամակս այնպէս ցոյց տալով։

ՈՂՋԱԼԻՆԴ

Ինձ ինչ փոյթ. Հոգըս չէ. իմ բոլոր ջանքս է
Քո աչքիդ քամահրող և բիրտ երեալ։
Տես, քեղ հետեւում է մի սիրող հովիւ,
Նայիր, սիրեր նրան. նա քեղ պաշտում է։

ՓԵԲԵ (Սիրիոսին)

ԱՌԻ, դու բարի հովիւ, մէկ պատմիր սորան,
Թէ ինչ բան է սիրել։

ՍԻԼՎԻՌՈՍ

Սիրել՝ ասել է
Լինել ամբողջապէս արցունք ու հառաչ.
Եւ ես ավդալէս եմ Ֆեբէի համար։

ՓԵԲԵ

Եւ ես՝ Գանիմեդի։

ՕՐԼԱՆԴՈ

Եւ ես՝ Ռոզալինդի։

ՈՂՋԱԼԻՆԴ

Եւ ես՝ ոչ մի կընոջ։

ՍԻԼՎԻՌՈՍ

Սիրել՝ ասել է լինել ամբողջապէս

Հաւատարմութիւն, անձնութրութիւն. այսուցաւ
եւ ես ալդպէս եմ ֆերէի համար: առ հարա
ֆերէ
եւ ես՝ Գանիմեդի:

ՕՐԼԱՆԴՈ

Եւ ես՝ Ռողալինդի:
ՌՈՂԱԼԻՆԴ

Եւ ես՝ ոչ մի կընոջ:

ՍԻԼՎԻՈՐ

Սիլբէլ՝ ասել է

Լինել ամբողջապէս յափշտակութիւն,
Ամբողջապէս կիրք, ամբողջ՝ ցանկութիւն:
Ամբողջ՝ պաշտողութիւն, յարգանք, ակնածութիւն,
Ամբողջ՝ խոնարհութիւն, ամբողջ՝ համբերութիւն
Եւ անհամբերութիւն, ամբողջ՝ սրբութիւն,
Ամբողջ՝ ճգնութիւն և հնազանդութիւն.—
Եւ ես ալդպէս եմ ֆերէի համար:

ֆերէ

Եւ ես՝ Գանիմեդի:

ՕՐԼԱՆԴՈ

Եւ ես՝ Ռողալինդի:

ՌՈՂԱԼԻՆԴ

Եւ ես՝ ոչ մի կընոջ:

ֆերէ (Ռողալինդի)

Եթէ ալդպէս է

Ինչու ուրեմըն կշտամբում ես ինձ,
Որ քեզ սիրում եմ:

ՍԻԼՎԻՈՐ (Ֆերէին)

Ինչու ուրեմըն կշտամբում ես ինձ,
Որ քեզ սիրում եմ:

ՕՐԼԱՆԴՈ

Ինչու ուրեմըն կշտամբում ես ինձ,
Որ քեզ սիրում եմ:

ՌՈՂԱԼԻՆԴ

Ալդ ում ես ասում.
«Ինչու ուրեմըն կշտամբում ես ինձ,
Որ քեզ սիրում եմ»:

ՕՐԼԱՆԴՈ

Մէկին՝ որ այստեղ չէ,
Եւ ինձ չէ լսում:

ՌՈՂԱԼԻՆԴ

Ինդրեմ բաւական է. դա նման է իրանդտական գալերի
լուսնահաջին:—(Սիլվոսին) Ես քեզ կ'օգնեմ, եթէ կարող եմ:
—(Ֆերէին) Ես քեզ կը սիրէի, եթէ կարող լինէի:—Վաղը բո-
լորդ միասին եկէք ինձ մօտ:—(Ֆերէին) Ես քեզ հետ կ'ամուս-
նանամ՝ եթէ երբ և իցէ մի կնոջ հետ ամուսնանամ, և
վաղը ես ամուսնալու եմ:—(Օրլանդոյին) Ես քեզ կը գոհա-
ցնեմ՝ եթէ երբէք մի տղամարդու գոհացնեմ, և դու վաղը
կ'ամուսնանաս:—(Սիլվոսին) Ես քեզ կը բաւականացնեմ՝ եթէ
այն որ քեզ գիւր է գալիս՝ կարող է քեզ բաւականացնել,
և վաղը դու կ'ամուսնանաս:—(Օրլանդոյին) Եթէ դու սիրում
ես Ռողալինդին՝ եկ:—(Սիլվոսին) Եթէ դու սիրում ես ֆե-
րէին՝ եկ.—և ես, որ ոչ մի կնոջ չեմ սիրում՝ ես էլ կը
գամ:—Ուրեմն մնաք բարով, ես ձեզ թողեցի իմ պատուէր-
ներս:

ՍԻԼՎԻՈՐ

Ես պնհանգանդ չեմ լինի, եթէ կենդանի մնամ:

(միջնորդ) ԱՅ ՓԵՔԵ

Ոչ էլ ես: ամ նույնառոցը մցնելու առջմ
ՕՐՀԱՆԴՅՈ

Ոչ էլ ես: ՕՐՀԱՆԴՅՈ
. ամ ամ նույնառոցը մցնելու առջմ
— ամ նույնառոցը բժիշկ զի

ՏԵՍԱՐԱՆ ԵՐՐՈՐԴ

Նոյն տեղը:

Մտնում են ՓՈՐՁԱՔԱՐ և ԱՌԻԳԲԻ:

ՓՈՐՁԱՔԱՐ

Վաղը մեր ուրախութեան օրն է, Առւդրի, վաղը մենք
պսակուելու ենք:

ԱՌԻԳԲԻ

Եւ ես փափաքում եմ դորան իմ բոլոր սրտով, և յոյս
ունիմ, որ մի անպարկեշտ փափաք չէ՝ փափաքել մի տնա-
րար կին լինել: Ահա գալիս են աքսորուած դքսի մանկա-
ւիկներից երկուսը:

(Մտնում են երկու մանկաւիկ):

ԱՌԱՋԻՆ ՄԱՆԿԱԼԱՀԻԿ (Փորձաքարին)

Ա. Ի, Ի՞նչ լաւ պատահեցինք, ազնիւ պարոն:

ՓՈՐՁԱՔԱՐ

Ես իմ հոգիս, լաւ պատահեցինք. եկեք, նստեք, նըս-
տեք, և մի երգ երգենք:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՆԿԱԼԱՀԻԿ

Մենք պատրաստ ենք. դու եկ մէջտեղ նստիր:

ԱՌԱՋԻՆ ՄԱՆԿԱԼԱՀԻԿ (Երկրորդին)

Առում ես հէնց ուղղակի սկսենք երգել, առանց կո-
կողդներս մաքրելու, առանց հաղալու, կամ առանց ասելու,
որ մեր ձայնը բռնուած է, որոնք մի վատ ձայնի նախա-
բաններն են:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՆԿԱԼԱՀԻԿ

Այս, այս, և երկուսս մէկ եղանակով, ինչպէս երկու
գնչու մէկ ձիու գերայ նստած:

Ե Ր Գ

Ա Ա Ա

Սիրահար պատանին

Եւ սիրուն գեղջկուհին,

Երգելով հէյ ու հօ,

Երգելով նօ, նի, նօ,

Անցնում են արտերից||

Եւ կանանչ մարգերից,

Գարնան եղանակում.

Սիրոյ ժամանակում:

Երը որ թռչունները

Անուշիկ երգում են

Սիրահար սրտերը

Գարունը սիրում են:

Բ

Հաճարի արտերում,

Ցորենի անդերում,

Երգելով հէյ ու հօ,

Երգելով նօ, նի, նօ,

Այս սիրուն գեղջուկներ

Պանկում են ողջ գիշեր:

Գարնան եղան...

Գ

այ քմուռ ովքը Այսպիսի մի ժամհամ ունեցած առ նույն
առջանա քմուռ և Այս երգն են ըսկըսում, յաղզան սղմանը բայտամ
առաջան իման առ նույն դաման դաման դժն դո
երգելով հէյ ու հօ,
թէ կեանքն է մի ծաղիկ,
Մի ծաղիկ գեղեցիկ:

Գարնան եղան...

Հայուս լայմի այլ թիմ առաջ առաջ

Դ

Դէհ, օգուտ քաղեցէք
Այս ժամից ցնծացէք,
երգելով հէյ ու հօ,
երգելով նօ, նի, նօ:
Զի սէրը պսակում է
Երբ գարուն ծաղկում է:
Գարնան եղան...

ՓՈՐՉԱՔԱՐ

Ճիշդն ասած՝ տղերք, թէւ շատ նիւթ չը կար երգի
մէջ, այնու ամենայնիւ եղանակը շատ աններդաշնակ էր:

ԱՌԱՋԻՆ ՄԱՍԿԱՀԻՒԿ

Դուք սխալում էք, պարոն, մենք չափը լաւ պահե-
ցինք, ժամանակը չը կորցրինք:

ՓՈՐՉԱՔԱՐ

Զը կորցրիք հապա ի՞նչ արիք, իմ կարծիքով այդպիսի
լիմար մի երգ լսելը ժամանակ կորցնել է: Աստուած ձեզ
հետ, և երանի թէ մի քիչ ձեր ձայները կարկատէ: Եկ,
Առողի:

(Գնում են):

ՏԵՍԱՐԱՆ ՉՈՐՐՈՐԴ

Անտառի մի այլ մասը:

Մտնում են ԱՆԴՐԱՆԻԿ ԴՈՒՔՍԸ, ԱՄԻՔՆՍ, ԺԱՔ, ՕՐԼԱՆԴՈ,
ՕԼԻՎԻԵ և ՍԵԼԻԱ:

ԱՆԴՐԱՆԻԿ ԴՈՒՀՔԸ

Հաւատում ես, Օրլանդօ, որ այդ տղան կարողանալ իւր
բոլոր խոստացածները կատարել:

ՕՐԼԱՆԴՈ

Մերթ հաւատում եմ, մերթ չեմ հաւատում.
Ինչպէս այն մարդիկ, որ վախենում են,
Այնու ամենայնիւ դարձեալ յոյս ունին:
(Մտնում են Ռողայնդ, Սիլիոս և Ֆերէ):

ՇՈՇԱՀԻՆԴԻ

Քիչ էլ համբերեցէք, մինչև ամփոփենք
Մեր պայմանները:
(Դուքսին)

Դուքս, դուք ասում էք,
Եթէ ես բերեմ ձեր Ռողալինդին՝
Դուք նըրան կը տաք այս Օրլանդօին:

ԱՆԴՐԱՆԻԿ ԴՈՒՀՔԸ

Կը տամ, և երանի ես ունենալի
Ժագաւորութիւնք նորա հետ տալու:

ՇՈՇԱՀԻՆԴԻ (Օրլանդօին)

Եւ դուք ասում էք, որ նըրան կ'ընդունէք՝
Եթէ ես բերեմ:

ՕՐԼԱՆԴՈ
ԹԵԿՈՒՂ ԿԱԽՐՈՒԹԵԱՆց ԿԱԽՐԸ ԼԻՆԵՒ:
ՌՈՂԶԱԼԻՆԴԻ (Ֆեքին)
Իսկ դու ասում ես, որ համաձայն ես
Պըսակուիլ ինձ հետ, թէ ես կամենամ:
ՓԵԲՀ

Ես կ'ամուսնանամ՝ թէկուղ իմանամ
Որ մի ժամ յետոյ հոգիս պէտք է տամ:
ՌՈՂԶԱԼԻՆԴԻ (Սիլվոսին ցոյց տալով)
Բայց եթէ մերժես ինձ հետ պսակուիլ
Դու պէտք է առնես այս սիրող հոգուին:
ՓԵԲՀ
Ես համաձայն եմ:
ՌՈՂԶԱԼԻՆԴԻ (Սիլվոսին)

Իսկ դու ասում ես,
Ֆեքին կ'առնես, թէ նա յօժարուի:
ՍԻԼՎԻՈՍ
Թէկուղ նրան առնել և մահ ընդունել
Նոյն բանը լինին:
ՌՈՂԶԱԼԻՆԴԻ

Ես խոստացել եմ
Հարթել ալդ բոլորը: (ցոյց տալով Օրլանդոին)
Դուքս, պահեր քո խօսքը:
Տալ սորան աղջիկը: — Դու, քոնը, Օրլանդո,
Որ է ընդունել նորա աղջրկան: —
Դու էլ քո խօսքը, Ֆեքի, որ ինձ կ'առնես.
Եւ եթէ ինձ մերժես՝ կ'առնես այս հոգուին: —

Դու էլ քոնը, Սիլվիոս, որ նըրան կ'առնես՝
Թէ նա ինձ մերժէ: Եւ այժմ զնում եմ
Հարթել ալս բոլոր տարակոյները: (Որովայնով եւ Սիլվա զնում են):
ԱՆԴՐԱՆԻԿ ԴՈՒՅՔ
Ես այս պատանի հոգուի դէմքի մէջ սոյս վայս
Գտնում եմ աղջրկանս աշխոյժ գըծերը:

ՕՐԼԱՆԴՈ
Տէր, առաջին անգամ նըրան տեսնելիս՝
Կարծեցի ձեր գստեր եղբայրն է նա.
Բայց, ազնիւ տէր իմ, այս տըղան ծնուած է
Այս անտառի մէջ, և նա ուսած է
Մի քանի ծածուկ ուսմանց տարերքը
Իւր հօրեղբօրից, որը, ասում է նա,
Մի մեծ վըհուկ է, որ թագնըւսծ է
Նոյն այս անտառի շըշապատի մէջ: (Մտնում են Փորձաքար եւ Առղրի):

ԺԱՔ

Երեկ մի նոր ջրհեղեղ է լինելու, որ սոքա զոյգ-զոյգ
գալիս են դէսկի տապանակը: Ահա մի զոյգ շատ տարօրի-
նակ գաղաններ են գալիս, որոնց բոլոր լեզուներով տ-
նուանում են խենթ:

ՓՈՐՁԱՔԱՐ

Բարե և ողջոյն բոլորիդ: (Դուքսին)
ԺԱՔ (Դուքսին)

Ազնիւ տէրս, սորան լաւ ընդունելութիւն արէք: սա
այն խալտաճամուկ խելքով պարոնն է, որին ալնքան յա-
ճախ հանդիպել եմ անտառի մէջ, նա երդւում է, որ ինքը
մի ժամանակ պալատի մարդ է եղել:

ՓՈՐՁԱՔԱՐԱՐ

Ով որ չէ հաւատում՝ թող ինձ քննութեան ենթարկէ։
Ես չափով պարել եմ, տիկիններին շողոքորթել եմ, բարե-
կամներիս հետ քաղաքագիտութիւն եմ գործ դրել, թշնա-
միներիս հետ՝ փափկութիւն, երեք դերձակ եմ տնաքանդ
արել, չորս մենամարտութիւն եմ ունեցել, և մօտ էր որ
հինգերորդն էլ ունենալի։

ԺԱՅ

Ուրեմն ինչպէս վերջացաւ։

ՓՈՐՁԱՔԱՐԱՐ

Ինչպէս։ Ալսպէս.—մենք հանդիպեցանք միմեանց և
տեսանք՝ որ կռիւը եօթներորդ պատճառի վերայ էր։

ԺԱՅ

Եօթներորդ պատճառն ինչ է։ (Դուքսին) Ազնիւ տէր,
այս մարդը ձեզ շատ դիւը կը դայ։

ԴՈՒԻՔՍ

Նա ինձ շատ դիւը է գալիս։

ՓՈՐՁԱՔԱՐԱՐ

Աստուած էլ ձեզ փոխարէնը տայ, տէր իմ, ձեզ էլ
ցանկանում եմ, որ ինձ պէս դիւրեկան մարդ լինիք։ Ես գա-
լիս եմ այստեղ, տէր իմ, այս միւս գեղջուկ զոլգերի հետ
միասին երդուելու և երդմնազանց լինելու, ըստ այն կա-
նոնի՝ որ ամուսնութիւնը կապում է, և արիւնը արձակում է։
(Ցոյց տարվ Առողին) Մի ինգն կոյս, տէր իմ, գեղեցկութիւ-
նից անբաժին մի բան, պարոն, բայց մի բան՝ որ իմ սե-
փականս է. իսկ իմ մէջ մի աղքատիկ քմահաճուք է, պարոն,
երբ ես այն եմ ուզում՝ ինչ որ ոք չէ կամենում։ Հա-
րուստ պարկեշտութիւնը մի ագահի նման է բնակում,

պարոն, մի աղքատ տնակի մէջ, ինչպէս ձեր մարգարիտը
ձեր կեղտոտ ոստրէի մէջ։

ԱՆԴՐԱՆԻԿ ԴՈՒԻՔՍ

Ես իմ հոգիս, սորա լեզուն շատ սուր է և պերճախօս։

ՓՈՐՁԱՔԱՐԱՐ

Որչափ մի խենթի նետերը, տէր իմ, կամ ալդ տեսակ
փափուկ հիւանդութիւնները։

ԺԱՅ

Բայց գանք եօթներորդ պատճառին։ Ինչպէս տեսաք,
որ վէճը եօթներորդ պատճառի վերայ էր։

ՓՈՐՁԱՔԱՐԱՐ

Գործը մի ստախօսութեան մասին էր, որ եօթն ան-
գամ վերագարձուած է։—Քեզ վայելուչ պահիր, Առողը։
—Ահա ինչպէս, պարոն։ Այս ինչ պալատականի մօրուքի
ձեւը ինձ դիւը չէր գալիս. նա ինձ լուր ուղարկեց ասելով,
որ եթէ ես ասել էի, որ իւր մօրուքը լաւ խուզուած չէ՝
ինքը մտածում է, որ լաւ խուզուած է։ Այդ կոչւում է
«Բաղաքավար պատասխան»։ Եթէ ես նորից նորա մօտ
մարդ ուղարկէի և ասէի, թէ նորա մօրուքը լաւ խուզուած
չէ՝ նա ինձ կը պատասխանէր, թէ նա իւր մօրուքը խու-
զել է ինչպէս իրան հաճելի է։ Այս կոչւում է «Համեստ
հնգնում»։ Եթէ նորից պնդէի, թէ լաւ խուզուած չէ՝ նա
ինձ կասէր, թէ դու ճաշակ չունիս։ Այդ է «Բիրտ պատա-
խան»։ Եթէ գարձեալ ասէի, թէ լաւ խուզուած չէ՝ նա
կ'ասէր, թէ դու ճամարիտ չես խօսում։ Այդ կոչւում է «Բա-
ջասիրտ պատախան»։ Եթէ նորից կրկնէի, թէ լաւ խու-
զուած չէ՝ նա կ'ասէր, սուտ ես ասում։ Այդ կոչւում է
«Կոռուասէր հակաղարձ»։ լետոյ պարագայաւոր սուտ», յե-
տոյ «ուղղակի սուտ»։

յաժիշտյան դմա սժաւմը ԺԱՔ միաւս տագքա չի մնայր
Եւ դու քանի անգամ կը կնեցիր, որ նորա մօրուքը
վատ էր խուզուած:

ՓՈՐՉԱՔԱՐ

Ես չը կամեցալ աւելի հեռու դնալ, քան «պարագայա-
տոր սուտը», և ոչ էլ նա համարձակեց երեսիս զարկել
«ուղղակի սուտը», և այսպէս մենք մեր սրերը չափեցիք և
բաժանուեցանք:

ԺԱՔ

Հիմա կարող ես կարգով թուել ստախօսութեան աստի-
ճանները:

ՓՈՐՉԱՔԱՐ

Օ՛հ, պարոն, մենք տպուածի երեսով, գըքով ենք մե-
նամարտում՝ ինչպէս որ դուք գրքեր ունիք վարուեցողու-
թեան կանոնների մասին. թող մէկ-մէկ ասեմ աստիճան-
ները. առաջին՝ քաղաքավար պատասխան, երկրորդ՝ համեստ
հեգուում, երրորդ՝ բիրտ պատասխան, չորրորդ՝ քաջասիրտ
պատասխան, հինգերորդ՝ կոռուասէր հակադարձ, վեցերորդ՝
պարագայաւոր սուտ, եօթներորդ՝ ուղղակի սուտ: Այս բո-
լորից դու կարող ես խոյս տալ, բացի միայն ուղղակի ստից,
և դորանից էլ դեռ կարող ես խոյս տալ մի «եթէ»-ով: Ես
մի դէսլք գիտեմ, երբ եօթը դատաւոր միասին չը կարողա-
ցան հաշտեցնել երկու հակառակորդներ. բայց երբ ոսուս-
ները դէմ առ դէմ եկան՝ նորանցից մէկը մտածեց մի «եթէ»-ի
վերալ, օրինակ «Եթէ դու այդպէս ասացի՞» այն ժամանակ
ես էլ այնպէս ասացի: Եւ նոքա իրարու ձեռքը սեղմեցին
և երդուեցին եղբայր լինել: Այդ «եթէ»-ն ձեր միակ հաշ-
տարար դատաւորն է, շատ զօրութիւն կալ այդ «եթէ»-ի մէջ:

ԺԱՔ (դուքսին)

Զասացի ձեզ, մի հազուագիւտ մարդ է, տէր իմ. ամեն
բանի մէջ լաւ է, այնու ամենայնիւ մի խենթ է:

ԱՆԴՐԱՆԻԿ ԴՈՒԲՅԱՆ

Նա իւր խենթութիւնը գործ է ածում որպէս դիմակ,
և նորա տակից նա նետում է իւր սրախօսութեան սլաք-
ները:

Մտնում է ՀԻՄԵՆԵԼՆ, առաջնորդելով ՌՈԶԱԼԻՆԴԻՆ կանացի հա-
գուստներով, և ՍԵԼԻԱՆ:
(Հանդարտ երաժշտութիւն)

ՀԻՄԵՆԵԼԾ

Կայ երկնքում ցնծութիւն,
Երբ որ երկում հաշտութիւն
Մարդկանց մէջ տիրած է:
Առ, ազնիւ դուքս, ինձանից
Քո դուստրը, որ երկնքից
Հիմենէն քերած է:
Այո, քերած է այստեղ
Քո դստրիկը շնորհագնդ,
Որ նըրան տաս այն մարդուն,
Որի սիրտն է իր սրտում:

ՌՈԶԱԼԻՆԴԻ (դուքսին)

Ես ինձ քեզ եմ տալիս, քանզի ես քոնն եմ:
(Օրլանդոյին)

Ես ինձ քեզ եմ տալիս, քանզի ես քոնն եմ:
ԱՆԴՐԱՆԻԿ ԴՈՒԲՅԱՆ

Թէ տեսութեան մէջ ճշմարտութիւն կալ՝
Դու իմ դուստրըս ես:

ՕՐԼԱՆԴՈ

Թէ տեսութեան մէջ
Ճշմարտութիւն կալ՝ դու իմ Ռոզալինդն ես:
11

ԱՆՀԱՅԻ ՓԵՐԵԼ ՅՈՒԹԻ

Թէ ձեւ ուշ ուեսութիւնն ճշմարտախօս են՝ ամ
Ապա, ովկիմ սէր, դու մընաս բարեաւու այս և
ՈՌԶԱՀԻՆԴԻ (գուրսին)

Ես հայր չեմ ուզում, թէ ոչ միայն քեզ:
(Օրլանդոյին)

Ես այր չեմ ուզում, թէ ոչ միայն քեզ:
(Ֆերէին)

Ոչ էլ կին կ'առնեմ, թէ ոչ միայն քեզ:
ՀԻՄԵՆԵՑ

Հանդարտ, օ, հօ, ես չեմ թոյլ տալ
Չեր մէջ բընաւ իրարանցում,
Տարօրինուկ ալս դէպքերին
Ինքըս պէտք է բերեմ լուծում:
Ալստեղ ահա ուժը հոգի,
Պէտք է միմեանց ձեռք ձեռքի տան,
Եւ Հիմենեան քողցը կապով
Պէտք է ալսօր նըանք միանան.
Եթէ իրաւ ճշմարտութիւնն
Չէ և ինքը մի կեղծութիւնն
(Օրլանդոյին և Խողափնդին)

Չեզ և ձեզ ոչ մի զրկանք հայ ոչ
Եւ ոչ մի խաչ չէ բաժնելու:
(Օլիվիին և Սելիային)

Դուք և դուք սիրտ սրտի մէջ՝
Մէկ բարձի էք ծերանալու:
(Ֆերէին)

Դու կամ սըրան սէտք է սիրես,
Կամ թէ մի կին քեզ այր առնես:
(Փորձարարին և Ալուրիին)

Անչպէս լաւ էք դուք միմեանց հետ՝

Վինչպէս ձմեռն վատ օդի հետ: աղստ ամ
Եւ մինչդեռ մենք այսուեղ կ'երգենք զի
Խայմ Միառւրախ երգ հարսանեկանն ու ըմբա ամ
Դուք կշտացէք հարցումներով, յուսի ովն
Թէ այս դէպքերն ինչպէս եկան, այրան
Որ պատճառու սկակասեցնէ ին ամէ զո՞ն
Չեր զարմացքը, և հասկացնէ մասին չի
Թէ մենք ինչպէս հանդիպեցանք և ամ
Եւ թէ ինչպէս այստեղ հասանք յար
միջման ճառապար ամէ զագր զայն
ԵՌԳ ու յար ամ զո ողջման այսու մին
Հարսանիքը մեծ Յունայի պլսակնէ:
Նա սեղանի եւ անկողնի սուրբ կապնէ:
Հիմենէն է լցում ամեն զիոն, քաղաք.
Կեցցէ ապա ամուսնութեան սուրբ պտակ:
Փառք ու պատի Հիմենէին շատ լինի,
Նա աստուածն է ամեն շէնի, աւանի:
Անշրջանի ԴՈՒՔՍ (Սելիային)

Ո՛վ իմ սիրելի եղբօրըս դուստըլ,
Դալուստըլ բարի. դու իմ աղջիկն ես,
Եւ քեզ նորանից չեմ զանազանում:
ՓԵՐԵԼ (Սիլվիոսին)

Ես իմ թքածըս չեմ լիզի, Սիլվիստ,
Հիմա դու իմն ես: Հաւատարմութիւնդ
Կապում է քեզ հետ իմ սրտիս սէրը:
(Մտնում է Ժաք դը Բուա)

Թոյլ տուէք ինձ ասել մէկ կամ երկու բառ:—
Ես Սըր Ռոռանդի երկրորդ որդին եմ,
Որ լուր եմ բերում ալս ազնիւ ժողովին:
Դուքս Ֆրեդերիկը լսելով, ինչպէս
Մեծ դիլքի տէր մարգիկ տմէն օր դիմում են
Դէմի այս անտառը շատ զօրք ժողովեց

Եւ նոցա գլուխն անցաւ այն նըպատակով,
Որ իւր եղքօրը ձերբակալէ այստեղ,
Եւ սրից անց կացնէ, Բայց հազիւ հասնելով
Այս վայրի անտառի շրջագաները՝
Հանդիպեց մի ծեր կրօնասէր մարդու,
Որի հետ մի քիչ խօսակցելուց յետ
Ոչ միայն հրաժարուեց իւր նըպատակից,
Այլ և աշխարհից, թողնելով իւր թագը
Իւր աքսորուած եղբօր, և յետ դարձնելով
Բոլոր դքսի հետ աքսորուածներին
Այն կալուածները, որ նա գրաւել էր,
Այս բանի ճշդութեան՝ կեանքըս տալիս եմ
Որպէս գրաւական:

ԱնԴՐԱՆԻԿ ԴՈՒԽԸ

Գալուստը բարի,
Ով երիտասարդ: Գեղեցիկ ընծաներ
Պարզեւում ես դու եղբօրը հարսնիքին:
Մէկին՝ իր կալուածքը, որ գրաւուած էին.
Միւսին՝ մի երկիր լայն և ընդարձակ,
Մի հզօր դքսութիւն: Բայց նախ, այս անտառում
Պէտք է մենք գլուխ բերենք այն ձեռնարկները,
Որ լաւ ըսկըսանք և լաւ վերջացըինք.
Եւ յետոյ ամեն ոք այս ուրախ խմբից,
Որ հանդուրժել է մեզ հետ միասին
Դժուար օրերի և գիշերների՝
Պէտք է մեզ հետ էլ մասնակից լինի
Մեր բախտին, որ կրկին վերադարձել է,
Ամեն ոք համեմատ իր աստիճանին:
Դէհ, առ ալժմ մոռացէք մեր նոր պատիւը,
Եւ թող ըսկըսենք մեր գեղջուկ խնջուքը:
— Դէհ, ուրեմն նուազիր, երաժշտութիւն,
Եւ դուք բոլորդ, հարս ու փեսաներ,

Զեր բոլոր չափով ցնծութեամբ լցուած
Չափերի դիմեցէք:

ԺԱՅ

Պարոն, ներեցէք ինձ,
Եթէ ձեր խօսքը ուղիղ լսեցի՝
Դուքսն ընդունելով կրօնական մի կեանք՝
Անխընամ թողել է իր արքունիքը:
ԺԱՅ ԴԲ ԲՈՒԱ
Ճիշդ է:

ԺԱՅ

Ուրեմն՝ ես կը գնամ նորա մօտ:
Այս նորընծաներից շատ բան կայ լսելու
Եւ սովորելու:

(Անդրանիկ դքսին)

— Զեզ ես դարձնում եմ

Զեր նախկին պատուին, ձեր համբերութիւնը,
Առաքինութիւնը՝ իսկապէս դորան
Արժանի եղան:

(Օրլանդո)

Իսկ ձեզ՝ մի սիրոյ,

Որ ձեր անվըկանդ հաւատարմութեան

Արժանի տրիտուրն է:

(Օլիվերին)

Զեզ՝ ձեր կալուածներին,

Զեր սիրուն, և ձեր մեծ դաշնակիցներին:

(Սիլվիոսին)

Քեզ՝ մի անկողին, որին շատ ջանքով

Արժանի եղար:

(Փորձաքարին)

Իսկ քեզ՝ կռուելու,

Քանզի քո սիրալին ճամբորդութիւնը

Լոկ երկուամսդւաբմի պաշարստնի; Դ
— Դէհ, զլւարձացէք: Ես տարբերգործ ունիմ
Զափերով պարելուց:

ԱՆԴՐԱՆԻԿ ԴՈՒՔԸ

ԿԵԳԻՐ, ԹԱՔ, ԿԵԳԻՐ:
ԺԱՌ ԾՆ ՄԱՅԱԿՈՎ ԺԱՐ ՀԱՅ ԱԿԱ
ԺԱՌ
Ես զՊւարճութիւն տեսնել չեմ սիրում.
Իսկ ձեր հրամանները լսելու համար
Ես ձեզ կըսպասեմ ձեր լրքած ալրում:
(Դուրս է զն

ԱՆԴՐԱՆԻԿ ԴՈՒՔԸ

Հսկըսենք, ըսկըսենք, մենք պէտք է ըսկըսենք
Ծէսերը կատարել, և վատահ ենք մենք՝
Նորանք կը բերեն բախտաւորութիւն։ (Պար)։

ԹՐԱՎԱԼԻՆԴ

Սովորութիւն չէ տեսնել հերոսուհուն մի վերջաբանի
մէջ. քայլ աւելի անվալել չէ, քան թէ տեսնել հերո-
սին նախաբանի մէջ: Եթէ ճշմարիտ է, որ լաւ գինին կա-
րօտ չէ յայտանշանի՝ նոյնպէս ել մի լաւ թատերախաղ կա-
րօտ չէ վերջաբանի: Այնու ամենալին՝ լաւ գինու համար
գործածում են լաւ դադանշաններ, և լաւ թատերախաղերը
աւելի լաւ են դառնում լաւ վերջաբաններով: Ի՞նչ պարա-
գայի մէջ եմ ես ուրեմն, որ ոչ լաւ վերջաբան եմ, ոչ ել
կարող եմ միջնորդել ձեզ մօտ ի նպաստ մի լաւ թատերա-
խաղի: Ես մի մուրացկանի ոլէս հազնուած չեմ, ուրեմն
մուրալը ինձ չէ վալելում: Իմ գերս է ձեզ լորդորել, և ես
կ'սկսեմ կանանցից: Ձեզ յորդորում եմ, կնիկներ, այն սիրու

անունով, որ գուք ունիք դէպի մարդիկը՝ սիրել այս խաղից այնչափ, որչափ հաճելի է նորանց. և նոյնպէս յորդորում եմ ձեզ, ով մարդիկ, այն սիրոյ անունով, որ գուք ունիք դէպի կանալքը (և նկատում եմ ձեր ժպտալուց, որ ձեզնից ոչ մէկը նրանց չէ ատում), որ գուք էլ կանանց հետ միասին գործակից լինիք այս թատերախաղի յաջողութեան: Եթէ ես կին լինէի՛ ես կը համբուրէի ձեզնից ամեն մէկին, որ ունենար մի մօրուք, որ ինձ դիւր գար, մի երեսի գոյն, որ ինձ հաճելի լինէր, և մի շունչ, որից չը զգուէի. և ես վստահ եմ, ձեզնից նոքա, որոնք սիրուն մօրուք, հաճելի դէմք և քաղցր շունչ ունին՝ իմ բարեսիրտ առաջարկութեան փոխարէն կը բարեհածին, երբ որ նորանց ողջոյն եմ տալիս՝ ինձ ասել «գնաս բարով»:

(Գնում ին):

ψ b ρ δ

964
965

